Պատերազմը շափուի թույլատրին նաև այն պատճառով, որ ցարդ մարդու արժանիքը չափազանց թերագնահատված է: Քրիստոնեական կրոնը մարդուն համարում է տիեզերքի կատարելագույն էակը և տիեզերական կրանքի նպատակը. այդ տեսակետով է, որ Աստվածոդրին ուղարկվում է աշխարհ, որպեսզի իր անձի զոհաբերությամբ՝ փրկե մարդկությունը. ուղենմ մարդու կրոնական աշխարհայացքով՝ հանդիսանում է տիեզերական կրանքի կենտրոնական էակը, նորա նպատակը:

Այս տեսակետ շոնի նաև գիտությունը. մարդկարին միտքը, որ գոտուամ է հայտնաբերել տիեզերքի մեջ գոյություն ունեցող ուժերը, լուսաբանել տիեզերական կյանքի օրենքները և ծանաբություններ հայտնաբերել, ինչո՞ւ համար: Եթե ոչ միայն նորա համար, որ այդ բոլորը ծառայեն մարդու

կյանքը կատարելավագործելու, բարելավելու և նորան երշանիկ դարձնելու: Եվ ուրեմն պատերազմի հրձիգները ի՞նչ բարոյական իրավունք ունին մարդու՝ այդ բարձրագույն էակի կյանքի հետ խաղաղու, նորան բանությամբ, հակառակ իր կամքին, պատերազմի և այլ շահագործական նպատակների ծառայեցներու ներկայ և ինչո՞վ պիտի իրախարինեն նորա ապագա՝ պատերազմում մարդկության թափելիք արյունը, որ անփոխարինելի գանձ է և տիեզերքի բարձրագույն բարիքն ու նպատակը:

Աշխարհում ինապաղությունը տևական դարձնելու և պատերազմը ըստմիշտ վերացնելու նպատակով՝ համաշխարհային կողմնակիցների Համաշխարհային կոնֆերանսի Մըշտական կոմիտեն կրել է մեր առաջ՝ այս Համամիտենական կոնֆերանսի առաջ՝ հետևյալ կոնկրետ առաջարկները, որ նոցանամամբ վերաբերմունք ցույց տան ներկա պատգամավորները իրենց ուղարկուդ ժողովուրդից կողմից. «Մենք պահանջում ենք անպայմանորեն արգելել առողմային գինը, որպես համախման և մասսայական ոչնացյաման զենքի: Մենք պահանջում ենք սահմանել միջադպային խիստ վերահսկողություն՝ կոնտրոլ՝ այս որոշման գործադրությամբ համար: Այս կառավարությունը, որպես կոորդինատը, ուղեւ կամաց այլ այլական կոմիտենք նորան միջամատական կանոնադրությամբ՝ կամ կանաչներ՝ որպես պատերազմական հանցագործ: Մենք հրամակում ենք աշխարհի բոլոր բորի կամք ունեցող մարդկանց՝ ստորագրել այս կոչի տակ:

Մեծ հաճությամբ և գոհումակությամբ, ի շաբաս այլ ժողովուրդների, նրազել եղավ նաև Հայ ժողովուրդը Խաղաղության կողմնակիցների Համամիտենական երկրներու կոնֆերանսի հրամակում, ուր նոր ուժով պիտի հնչե միջիոնակոր խորհրդային մարդուց ձախը, որոնք անդադար պայքարում են խաղաղության հաղթանակի համար ընդունմ պատերազմի հրդիների:

Հայ ժողովուրդը, որ գարերի ընթացքում ամենից ավելի ճաշակել է տառապանիների ամենատեսակ գաւոնությունները, որի համար և զարգմաշարքար մականունն է ստացել, նաև դր հին դարերում ենթարկվել է Հուշմեական և պարականան հարձակումներին և կրել նրանց աննկարապերելի հայածանքները, միջին դարերում արաբական, ուկանուկան, մոնղովական և այլ վայրադապեկի փրկերը, ինչին դարերում արաբական, համաշխարհային պատերազմի ըն-

թացքում, մեկ միլիոնից ավելի զոհեր տիեզ  
թյուղիայում, և ազգութիւն խողիսողուաններից  
ազատվելու համար՝ երկու միլիոնից ավելի  
լի արտագաղթ է տվել՝ ամայի թողնելով իր  
շիրած նվիրական դարավոր հայրենիքը և  
անտեր՝ իր ստեղծած կուլտուրական հու-  
շարձանները, դրոնք այսօր անխղճորեն  
ոշնչացվում են հայի հիշատակը խապառ  
անձացնելու նպատակով: Նա, որ սիրել ու  
փալիքալ է խաղաղությունը իր ամբողջ  
կյանքում և այդ խաղաղ ժամանակաշրջ-  
շաններում ստեղծագործել է և իր ստեղծա-  
գործական համեստ լուսան մուծել մարդ-  
կային մշակույթի գանձարանը: Նա՝ որ  
մշտապես աղոթել է «Հայան խաղաղութեան  
ամենախաշիածի», նա այլ պատասխան  
շնորհ տալու, եթե ոչ անձնկցի պատերազմը,  
կեցցի խաղաղությունը, և իր ձայնը տափս  
է խաղաղության կողմնակիցների կոնֆե-  
րանսի Մշտական Կոմիտեի մշակած վերո-  
հիշուալ չորս առաջարկներին:

Այլև Հայ Ժողովովորը անվարող է ան-  
տարբեր մնալ տեսմնելով Կորեայի խաղա-  
ղական քնավորության տեր և Հին կուլտու-  
րա ունեցող մի ժողովոդի կրած աննկարո-  
ւորելի տանջանքները քրիստոնյա Ամերիկա-  
յի անթույլատրելի և գաղանաբարու ուրա-  
կոծումների երեսից, որի հետևանքով եր-  
կիրն ավերակների կույտ է դարձել: Եվ  
այս բոլորը կատարվում է միայն նրա հա-  
մար, որ Կորեայի ժողովուրոր խիզախորեն  
պայքարում է իր իրավունքների պաշտպա-  
նության համար և ազգութիւն միանալու և  
անվակիւ ու ազատ պետություն դառնալու  
նպատակով: Նույն վիճակը տիրում է նաև  
Խորոնեգիայում, Զինաստանում, Աֆրիկա-  
յում և այլ վայրերում:

Հայ Ժողովովորը՝ աջիսարհի բոլոր ազնիի  
մարդկանց նման՝ լցված է աստեղությամբ և  
զայրութեալ և իր հոգու ամրոջ դորությամբ  
բողոքում է Ամերիկայի և արևմոյան ելքո-  
պական պետությանների անթույլատրելի  
վայրագ վերաբերմունքի դեմ: Այլև իսրայ-  
լում է Համամիութենական կոնֆերան-

սին՝ դիմել առաջիկա Համաշխարհային  
հրկորորդ կոնգրեսին՝ պահանջելով, որ ա-  
մեն միջոց ի գործ դնի հիշատակած երկրնե-  
րից օտար զորքերը հանելու՝ հնարավորու-  
թյուն տալով նոցա տեր դառնալու իրենց  
սեփական երկրին և ինքնուվին տնօրինելու  
իրենց ներքին տարածայնությունները:

Այսօր ամբողջ աշխարհում, միլիոնավոր  
մարդկան աշերը սեռու են Խորհրդային  
Միության միծ ղեկավարի, խաղաղության  
անզուգական դրոշակակիր Հանճարեղ  
Մտավինի վերա: Եվ շեն սխալվում: Նա՝ որ  
իր հանճարեղ մտքի խոհուն ծրագրերով և  
Խորհրդային Միության ժողովարդների  
անձնվեր ու համերաշի գործունեության  
շնորհիվ շահեց Երկրորդ համաշխարհային  
ահեղ պատերազմը և հաղթանակը տարավ  
նորագույն տեխնիկայով զինված գերմա-  
նական նացիզմի և ֆազոնական իմպե-  
րիալիզմի դեմ, նա՝ որ կառուցում է աշ-  
խարհի մեծագույն հիգրո-էլեկտրակայան-  
ները Վորգայի և Դինեպրի վրա, շինում է  
հսկայական ջրանցքներ Թուրքմենիաստա-  
նում, Ուկրաինայում և Ղրիմում, ժամանա-  
կակից և գալիք սերունդների համար եր-  
շանկության աղբյուրներ ստեղծում, նա՝  
աջակց ունենալով Խորհրդային Միության  
անձնվեր, ջանասեր ու հաստատակամ ժո-  
ղովուրոբներին, այլև մի շարք դեմոկրատիկ  
պետություններ և անթիվ անհամար խաղա-  
ղության ու ազատության գաղափարով  
տարիած՝ ճշմարիտ բարեկամներ, Հակա-  
ռակ անդուածերական սովորակի, ձգուում-  
ների, նա անշուշտ կտանե նպա այս հաղ-  
թանակը և խաղաղության գաղափարը ընդ-  
միշտ կիշշիս աշխարհում հերցանկություն  
մարդկության:

Իսկ մենք՝ Հոգուրականներ՝ մաղթում  
ենք Փրկչին, որ այցի ենք աշխարհի հղոր-  
ների երեսից առանցող մարդկությանը և  
իր խաղաղաբեր Աջը տարածե նորա վեռա,  
ինչպես երեսմն իր սիրած աշակերտների  
վերա, շնորհելով նորան խաղաղություն և  
ազատություն:





## ԵՐԵՔ ԻՆՔՆԱՆԿԱԽ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԸ

ԹՈՒՄԻՆԱՀԱՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՀՈԳԵՇՆՈՐՃ ՎԱԶԳԻՆ Ս. Վ. Ի.  
ՀԵՇԱԴԻՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.

Էջմիածն

Միմիթարության և ոգևորության զգացումներով տոգորվեցան իմ և մեր համաստացալների հոգիները, կարդալով այն սրտաշարժ Կողը, որը օգոստոսի 5-ին Զերդ Վեհափառության, Համայն Ռոպահո Պատրիարք Արքասիի և Համայն Վրաստանի Կաթողիկոս Վահրամարտի հետ միասնաբար ուղղած եք աշխարհի բոլոր քրիստոնյաներին խաղաղության պաշտպանման համար բնդրեմ բոլոր նրանց, որոնք դամբեր կնյութեն ժողովուրբների կյանքի խաղաղ զարգացման դեմ: Որպես խոնարհ սպասավոր Հայ Եկեղեցու և Զերդ Վեհափառության, և Հարազատ զավակ Հայ ժողովուրդի, որ այնքան կարիք ունի շինարար խաղաղ կյանքի, և որպես համատա-

րիմ քաղաքացի Ռումինական ժողովրդական Ռեսպուբլիկայի, մեր բողոք հավատացյալների հետ կաղոթենք ու կգործնենք Ձերդ Վեհափառության խմբագրած կոչին սերտ ու ներդրաշնակ՝ գործակցությամբ, Ռումին Օրբորոք Եկեղեցցին առաջ տանելով մեր աշխատանքը, Ռումինական ժողովրդական Ռեսպուբլիկայի կոչին մեջ, խաղաղության պաշտպանման և ամրապնդման համար պայմանագրով բոլոր պարկեցանց կրողին:

Զերդ Վեհափառության ամենախոնարհ որդի՝ Թեմի առաջնորդ

Վ.ԶԳԵՆ Ս. ՎՐԴ. ԹԱԼԵԳՅՅԱՆ

ՇԻԳԱԿՈՅԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ ՎԱՀՐԱՄ Շ. ՎԱՐԴ.

ՆՍԶԱՐԵԹՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ,  
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՅՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄ

ՆՈՐԻՆ Ս. ՕՇՈՒԹՅՈՒՆ-ՏԵՐ ՏԵՐ ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ

ԾԱՅՐԱԳՈՒՅԻ ՊԱՏՐԻԱՐք ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածն; ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԵՀԱՓԱՆ ՏԵՐ,

Զերդ Վեհափառության անվան տոնի առբիւլ, Ծիգակոյի համայնքին և իմ կողմե, կիութամ շնորհավորել զերդ, և մաղթել եր-

շանիկ, առողջ, երկար տարիներ, հովվելու վտարանդի հոտդ, որ միշտ կարուտը կզգա լսելու իր սիրելի Հայրապետին հայրական սրտաբուխ պատգամն ու խոսքը:

Վեհապիառ Տեր, յառաջիկա կիրավի՝ հոկտեմբեր 1, Համայն Շիգակոյի հայ գաղութը, հրավիրված Ս. Դրիգոր Լուսավորիչ Եկեղեցին, պիտի մատուցանեմք Ս. Պատարագ, և հանդիսավոր մասնավոր մաղթանք, վասն արևշատության, Զեր Ս. Օժության, և մեր սրտարովի աղոթքներով պիտի խնդրեմք Բարձրաւուն որ Զեզի պարզմե առողջ, երկար տարիներու ջարք մը, որպեսզի Հայ Աստված և Հայ Եկեղեցին մշտատե ու երկար վայելն Զեր իմաստում Հայրական հորդորներն ու խոսքերը:

Վեհապիառ Տեր, Շիգակոյի փոքրաթիվ հայ համայնքը խորապես կը մթանե այն վիթխարի շանքերը աշխարհի խաղաղության հա-

մար, որ կկատարվին Զեր Սրբության կողմէն երանի թե ամենուրեք արձագանքեին Զեր խաղաղության մաղթամրճները, և համայն աշխարհ, ազատ ավերիչ պատերազմի մղձավանք, պարապեր իր շինարար խաղաղ աշխատանքին:

Վեհապիառ սիրելի Հայրապետ, որդիկան խորին ակնածանոք մատշելով և համբուր Ս. Աջուղի, և, հայցելով Զերդ Հայրապիան օրհնությունները՝

Հոգևոր հովիվ Շիգակոյի համայնքին՝

ՎԱՀՐԱՄ Մ. ՎՐԴ. ԽԱԶԱՐԵԹՅԱՆ

Սեպտեմբեր 25, 1950

Շիգակո, ԻԱ.

## Կ Ո 2

### ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ - ԼՈՒՏԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻԿՈՊՈՍՈՒԹՅԱՆ ՍԻՆՈԴԻ՝ ՈՒՂՂՎԱԾ ՈՂԶ ԱՇԽԱՐՁԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻՆ

«Խաղաղութիւն ձեզ». այսպես ողջունեց մեր Փրկիչ Հինուա Քրիստով առաջրաներին; Տերը, որ միշտ եղել է, կա և այժմ և կլինի համիտենապես, և այժմ ևս նա խաղաղություն է պարզուած: Նրա հետևողների խրնովին է՝ կրել և ստեղծագործել այդ խաղաղությունը: Այս մենք շեմք ցանկանուած հրաժարվել երկնալին ժառանգությունից, ապա մենք պարտավոր ենք աշխատել հանուն խաղաղության մարդկանց և ժողովուրդների միջև:

Այժմ, երբ խաղաղության թշնամիները պատրաստվում են նոր կատաղի պատերազմի՝ այդ պատրաստությունը ծածկելով ժողովուրդներին պատշաճանելու և նրանց օգնելու գործեցիկ իսուսքորով, աճում և ընդլայնվուած է խաղաղության կողմնակից մատաների թիվը, որի մեջ մտնուած են բարի կամքի տեր բոլոր մարդիկ՝ անկախ իրենց քաղաքական և կրոն ական համոզմումներից:

Սույն թվի մարտ ամսում խռովուական ԱԱՌ Ասլենտարանական-Լուստերական Եկեղեցու Արքապիսկոպոսության Մինորը միաձայն միացավ Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Ստեղծուած Աստվածայի որոշումներին: Բոլոր հավատացյալներն իրենց հովիվներով մտան խաղաղության համար մարտնչողների

շարքերը, ատորագրել են Ստոկհոլմյան կողը և արտահայտուած են ողջ աշխարհի բոլոր հատարակ մարդկանց կամքը և ձգտուածը, որն ուղղված է ընդդեմ խաղաղ բնակչությանը ոչնչացնող սարսահելի զենքի և ընդդեմ խաղաղության թշնամիների, Մեր Եկեղեցին մեր երկրի և ժողովրդի հետ միասին, տուժեց անցյալ պատերազմուած, և այժմ ատեղծագործ աշխատանքի ուրախությամբ է համականակած իր ժողովրդի հետ միասին, որը բռնուած է իր այն վերքերը, որոնք հասցել է պատերազմը: Մեր Եկեղեցին, որ գրահատուած է կյանքը որպես աստվածային մեծագույն պարզմ, չի կարող լուս նարել նոր պատերազմի պատրաստության վրա, որի հետևանքուած աւայր աստիճան կշատանան ծողովուրդների և նկեղեցիների հարստահարությունները, որոնք մատնացուց են արված Հայտնության մեջ:

Ավետարանական-Լուստերական Եկեղեցու Արքապիսկոպոսության Սինոդը միանուած է Ռուսաստանի, Վրաստանի և Հայաստանի Եկեղեցիների Պատրիարքների օգոստոսի 5-ի կոչին՝ ուղղված բոլոր քրիստոնյաներին՝ խաղաղության, ատոմ ական պենքը արգելելու, մասին և պատերազմի հանցագործ ճանաչելու այն պատությանը, որն առաջինը կգործադրի այդ զենքը:

Մեր ծկեղեցին նախորդ և ներկա կիրակ-նօրյա աղոթքի՝ օՊահիր մեզ պատերազմից և արյունահեղությունից խոսքերով է ցան-կություն Հայտնում, որպեսզի խաղաղությամբ կարելի լինի փառարանել երկնային թագավորությունը, աշխատել Հնագանդությամբ քառ աստվածային կամքի: Այդ պիտի լինի նախական ցանկություն և աշխատանքի ու աղոթքի հիմքը բռոր քրիստոնյաների համար:

Մենք կշտամբում ենք ամերիկյան ազքեսիան Կորեայում, որպես ոչնչացնող պատերազմի ծավալման փաստացի միջոցը և կոչ ենք անում ողջ աշխարհի ժողոր քրիստոնյաներին ձայն բարձրացնել՝ պահանջելով վերջ տալ անպաշտպան բնակչության ոշնչացմանը և պատերազմին Կորեայում, որի ընդարձակումը սպառնալիք կհանդիսանա միլիոնաֆոր մարդկանց կյանքի և առողջության:

Թող այն եկեղեցիները, որոնց պատկանում են անդամ գործիչները, այն մարդիկ, որոնք որոշում են խաղաղության և պատերազմի հարցերը, միշեն որ իրենք մկրտված են և որպես քրիստոնյաներ պատասխանատու են այն քայլերի համար, որ իրենք մտադրվում են անել: Թող նրանք մտածեն՝ այդ վեհանդիսանա արգույթ լողորդի վզին զգնության պատրիակով ձգած ժղակավոր այն թոկը, որը վերջ ի վերջո կիսեղդի լողորդին, անկախ նրանից, թե հանդիսանո՞ւմ է արդյոք նա ընդհանրապես իմերդիլու:

Մենք ոգիմում ենք ինչպես ավետարանշական բռոր հավատացյալներին, որոնց համար մեր վերցրած դիրքը պիտի որ հայտնի

լինի, այնպես և կաթոլիկներին, որոնք գուցեն ենթադրում են, որ մենք վախենում ենք մահից և ոչնչացումից. եթե մենք իրոք վախենայինք մահից և ոչնչացումից, մենք հաստատում չէինք կանգնի մեր մկրտումների վրա, որը հավատացյալների համար հանդիսանում է երկնային նախադրուուր: Մեզ համար թանկ է փաղաղ աշխատանք ցանկացող մարդկանց կյանքը: Աստծու առջև մեր ունեցած հենց արդ պատասխանաւությունից ենիւ կոչ ենք անում, բոլոր քրիստոնյաներին հոգեկան ողջ ուժով աշակեցել՝ միավորակնու և ծովակելու բարոյապես մի միանության մեջ, աշխատելով մարդկության փրկության համար նոր պատերազմի սպառնալիքից, որ ամենի արյունահեղին, քան նախորդը:

Մենք կոչ ենք անում հոգեարականներին և հավատացյալներին աշակեցել, աղոթել խաղաղության համար: Թող շրագարի արդ աղոթքը ամերուց աշխահում, և թող նա դառնա առաջնորդը ողջ կյանքի և աշխատանքի, — մենք օրհնում ենք բոլոր նրանց, որոնք աշխատամ են և ցանկանում են աշխատել խաղաղության մեջ: Մենք օրհնում ենք ամեն տեսակ աշխատանքը և ամեն տեսակ գործունեությունը, որն ուղղված է խաղաղությունը ապահովելու և պաշտպանելու համար:

Հավատացյալ եկեղեցու Արքեպիսկոպոսի կոպոսության Սինոդի կողմից՝  
ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻՑՎԻՏ

## ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱԻ ՀԻՆՇԻՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒԹ ՊԵՏԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մոսկվայի և Համայն Ռուսիո Հինծիսական Արքեպիսկոպոսությունը, որը հանդիսանում է ՍՍՌՄ-ի բոլոր հինծիսականների կենարունը, միանուած է Մոսկվայի և Համայն Պատրիարքի և Վրաց և Հայոց Պատրիարքների դիմումին, որը հրատարակված է 1950 թվի օգոստոսի 6-ին:

Մոսկվայի և Համայն Ռուսիո Արքեպիսկոպոսությունը իր կողմից կոչ է անում բոլոր քրիստոնյաներին, առանձնապես հինծիսականներին, ոժեղացնել պայքարը խաղաղության համար, որովհետև այդ գործը սուրբ գործ է, ինչպես ասել է մեր Տեր Հիսուս Քրիստոսը՝ «Խաղաղութիւն զիմ տամ ձեզ, զիսաղաղութիւն զիմ թողում ձեզ»:

Թող անծծված լինեն պատերազմի հըրձիգները՝ սատանայի ծառաները, որոնք առաջնորդ անելով անձնական շահադիտական ցանկության մեջ: Մենք ամեն տեսակ աշխատանքը և ամեն տեսակ գործունեությունը, որն ուղղված է խաղաղությունը ապահովելու և պաշտպանելու համար:

Մոսկվայի և Համայն Ռուսիո Հինծիսական Արքեպիսկոպոս՝ ԻՐԻՆԱՐԻ Հինծիսական Եպիսկոպոս՝ ՀԵՐՈՒՆԴԻ Հինծիսական Եպիսկոպոս՝ ՀՈՎՍԵՓ Հինծիսական Եպիսկոպոս՝ ՖԼԱՎԻԱՆ Ավագանի Ավագի Արքեպիսկոպոս՝ ԿՈՐՈՒՅՅՈՎ Պատրիարքի կողմանը, Պատրիարքի կողմանը ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻՑՎԻՏ:

## ՍՍՌՄ ԱԴՎԵՆՏԻՍՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարդալով երեք եկեղեցիների Պետերի դիմումը բոլոր քրիստոնյաներին՝ պայքարելու խաղաղության համար ամբողջ աշխարհով, մենք, ՍՍՌՄ Աղվենտիստական 7-րդ օրվա քրիստոնյաներս, ուրախությամբ տալիս ենք մեր դրական պատասխանը և միաժնում ենք մեր ձայնը այդ ազնիվ և մարդասեր կոչին։ Մեր կողմէց նմանապես դիմում ենք բոլոր հավատացյալներին՝ դրսորել խաղաղության բարի քրիստոնեական հատկությունը ոչ միայն խոռոշվ, այլև կյանքով, և բոլոր զանգերը գործ դնել խափանելու վերահաս նոր աստումական պատերազմը, որը սպառնում է ոչնչացնել ոչ միայն նյութական արժեքները, այլև ողջ մարդկության բարոյական արժանապատվությունը։

Խաղաղության համար ձգտելու և երկրի

վրա ճշմարտություն հաստատելով քրիստոնեական կրոնի էպիստումն է հանդիսանում, որը հաստատվում է առաջյալի կոչով. սեղբարք, որ ինչ ճշմարտութեամբ է, որ ինչ պարկեցտութեամբ, որ ինչ արդարութեամբ, որ ինչ սրբութեամբ, որ ինչ քաջութեամբ՝ զայն խորհիշելով. Զոր ուսարություն եւ ընկալարություն եւ լուայք եւ տեսէք իմ զայն արարելք. եւ Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ» (Թուլը առ Փիլիպեցիս, Դ, 8—9):

Աղվենտիստական 7-րդ օրվա Համամիուրենական Խորհրդի նախագահ՝

ԳԲԻԳՈՐԵՎ  
Նախագահի տեղակալ՝ ՄԱՅԱԼՈՎ  
Քարտուղար՝ ՀԱՅԱԶԵՎ  
Անդրամ՝ ՄԵԼՆԻԿՈՎ

## ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՄԿՐՏՉԱԿԱՆՆԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Համամիութենական Քրիստոնյա Մկրտչականների Խորհուրդը, որ ներկայացնում է ավետարանական երեք ուղղության միավորում — ավետարանական քրիստոնյաների, մկրտչականների և այսպես կոչված հիսուսականների — կարդալով Ռուաց, Վրաց և Հայոց եկեղեցիների Պետերի դիմումը՝ ուղղված աշխարհի բոլոր քրիստոնյաներին, որը տպագրված է ընթացիկ տարվա օգոստոսի 6-ին, ամբողջապես ընդունում է այն, որպես ժամանակակից կոչ, ուղղված բոլոր քրիստոնյա եկեղեցիներին՝ խաղաղության պաշտպանության համար, և շերմորեն միանալով նրան, իր կողմից հայուարարությունը։

Մենք ապրում ենք բացառիկ ժամանակի, երբ ողջ մարդկության շրջանում տեղի է ունենում աննախընթաց պայքար պատերազմի և խաղաղության ուժերի միջև։

Պատերան թե խաղաղություն — ահա այն առաջնացքը, որի շուրջը պտտվում է ժամանակակից մարդկության պատմությունը։

Պատերան թե խաղաղություն — ահա այն հարցը, որը որոշում է ոչ թե մի որևէ ժողովուրդ, այլ ամբողջ մարդկությունը։

Պատերան թե խաղաղություն — այդ սահմանագծող հարց է, որը ներկա ժամանակում ողջ մարդկությանը բաժանում է երկու բանակի՝ պատերազմի բանակի և խաղաղության բանակի։

Միշանկայ բանակը չի կարող տեղ ունել. Պատերազմը կամ խաղաղությունը — ընտրել կարելի է միայն մեկը, և ընտրությունը պիտի անի ամեն մի մարդ, ամեն մի ժողովուրդ, ամեն մի եկեղեցի, ամեն մի քրիստոնյա մարդ կամ կին։

Եվ թվում է թե, ընտրությունը դժվար — չէ քրիստոնյա եկեղեցիների համար, որոնց ուսուցիչն է հանդիսանում խաղաղության հզոր իշխանական քրիստոնյա (Եսայի, Թ, 6):

Պատերազմի բանակը պատրաստում է համաշխարհային հրաբուժը, որի մեջ կայրվեն քրիստոնեական սրբությունները և կուտուրյակի հուշարձանները։

Պատերազմի բանակը պատրաստում է փոթորիկ, որը կարդի երկրի երեսից հարցուրավոր քաղաքներ և հազարավոր գյուղեր և անօթեան կթողնի միլիոնավոր մարդկանց։

Պատերազմի բանակը կուտուրած է պատ-

ըաստում, որի հետևանքով աշխարհը կվերածվի հսկայական գերեզմանի:

Կարո՞ղ է արդյոք քրիստոնեությունը աշակից հանդիսանալ պատերազմի այս զրգվելի բանակին — ոչ, երբեք...

Մենք երանիկ ենք այն գիտակցությամբ, որ մեր օրերի բարձրագույն և ազնվագույն շարժման խաղաղության շարժման գլուխը

կանգնած է մեր չերմորեն սիրելի Հայրենիքը, մեր փառապանծ Սովետական Միությունը...

Համամիուրենական Ավետարանական Քրիստոնյա Մկրտչականների Խորեղի նախագահ՝ ՅԱ. ԺԵՂԿՈՎ Նախագահի օգնական՝ Մ. ԳՈՂՅԱԶԵԿ Գլխավոր քարտուղար՝ Ա. ԿԱՐԻՔԵՎ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ԳԵՂՐԳ Զ.ԻՆ

«Եղիցի խաղաղութիւն ի օրութեան ժում, և շինուին յաշպարակն յամուր եւ: Վաս եղբարց և ընկերաց իմց խօսեցայ ջանադրութիւն վաս եւ, և վաս առ Տեան Աստուծոյ մեր խնդրեցաք զրաւութիւն ենք»:

ՍԱՂՄՈՍ ՃԻԱ, 7-9:

Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լուտեռական եկեղեցու Գերագույն եկեղեցական Վարչությունը Դամբի Սաղմոսագրանի 1221-րդ պլիսի այս խոռոքերով է ողջունում Ռուսական, Լրացական և Հայկական եկեղեցիների ի Քրիստոս սիրեցյալ սրբակրոն և ամենահարգելի Հայրերին և Սրբազնագույն Պատրիարքներին՝ օգոստոսի 5-ի աշխարհի բոլոր քրիստոնյաներին ուղղված համատեղ դիմումի առիթիվ՝ խաղաղության հաստատման համար ողջ աշխարհում:

Վերջին համաշխարհային պատերազմը լատվիական ժողովրդին բերեց շատ թշվառություններ և զրկանքներ. նա քանից մեր նախնիների կառուցած շատ տաճարներ ու ողնչացրեց ամբողջ քաղաքներ, նա խլեց շատ տղաներ ու աղջիկներ և շատ շատերին ցրեց օտար երկրներ՝ զրկելով Հայրական օջախսից: Մենք յավ ենք համականում պատերազմի սարսափները, ուստի և ասում ենք այն: Մենք ծարավի ենք իրական խաղաղության և անվտանգության մեր սիրելի Հայրենիքում ու ողջ աշխարհում, եվ մենք ուրախանում ենք լսերով խաղաղության այն առնիվ ձայնը և զոդանցը, որը բերում է Ձեր դիմումը ողջ աշխարհի քրիստոնյաներին:

Մանոթանակով Ձեր դիմումին՝ եկեղեցական-պատմական ու խաղաղության պրոդի գաղափարի համար այդ կարևոր վակերա-

դրի հետ, մենք լիովին բաժանում ենք Ձեզ հետ նրա մեջ շարադրվածը և ուրախ ենք Ձեր սրոտագին մատահոգության համար՝ հոգ տանելու բոլոր քրիստոնյա եղբայրների, միշտ ատեղծելու խաղաղ բարեկեցություն, որը դրանուրաված է ՍՍՌ-ի գլխավոր քրիստոնյա Ըկեղեցիների Սրբազնագույն ներկայացուցիչների դիմումի մեջ: Մենք միանում ենք նրան, ինչպես որ նախակինում սույն թվի ապրիլին, միացանք Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնվունցիա Մշտական կոմիտեի Ստուկհովյան Կոչին:

Խաղաղության և բոլոր ժողովուրդների բարության համար Տէր Աստծուն ուղղած մեր ազգոթքը միացնելով Ձեր և ողջ աշխարհի քրիստոնյաների աղոթքներին, նոր ուժ և վստահություն կստանան ու կլավին Ամենարարձրյալի կողմից: Եվ, այսպես, նրանք կդառնան աշխարհի քրիստոնեական և համաժողովրդական ցանքադաշտի խաղաղության և երշանկության սերմերը:

«Եւ ինքն Տէր խաղաղութեան տացէ ձեզ, խաղաղութիւն յամենայն ժամ, յամենայն իր. Տէր ընդ ամենեսին ընդ ձեզ» (Բ թուղթ առ Թեսաղոնիկեցիա, Գ, 16):

Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լուտեռական եկեղեցու Գերագույն եկեղեցական վարչության պրեզիդենտ՝ Արքեպիսկոպոս ԳՈՒՍՏԱՎ. ՏՈՒՐՈՎ

Ա. Ն. Դ. Ա. Մ. Ն. Ե. Բ.

ԿՐԻՇՅԱՆ ՇԼՈՍԲԵՐԳՎ, Գլխավոր քարտուղար ԳՈՒՍՏԱՎ. ՔԱՀԱՆԱ. ՇԱՈՒՐՈՒԽՍ  
ԱՐՎԵՐ ՔԱՀԱՆԱ. ԿԱՈՎԻՆՉ  
ՊՅՈՒՏՐ ՔԱՀԱՆԱ. ԿԼԵՊԵՐԻՍ  
ՅԱՆ ՎԵԳԵՐՄ, իշակախորհրդատու

**ԼԻՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒՏԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ  
ՊԵՏԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

Հավանություն ենք տալիս Ռուսական, Վրացական և Հայոց Եկեղեցիների Պետերի Պատրիարքների դիմումին, ուղղված բրիստոնյա բոլոր Եկեղեցիների պետերին՝ համատեղ պայքարելու խաղաղության և հանգըստության համար ընդունմ մարդկության մասսայական ոչնչացման, ես, Լիտվիական ՍՍՌ Ավետարանական-Լուտերական կոնսիստորիայի նախրագահ Բաղտիս, Հայություն եմ, որ և մենք՝ Լիտվիական ՍՍՌ Ավետարանական-Լուտերականներս հավանություն ենք տալիս Ռուսական, Վրացական և Հայկական

Եկեղեցիների Պատրիարքներին և բոլոր ձեռնարկումներին խաղաղության պաշտպանության համար։ Այդ գործում մենք առաջնորդվում ենք քրիստոնեական կրոնով։ Քրիստոսի ավետարաններում չի հանձնարարվում արով նվաճել ժողովուրդներին, այլ ավետարաններ սեր։ Փրկիչը Պետրոսին հայտարարել է. «Ամեննեքեան որ սուր առնուցում՝ սրով անկանիցին»։

Լիտվիական ՍՍՌ Ավետարանական-Լուտերական Կոնսիստորիայի նախագահ՝ Քսենձ ԲԱԼՏՐԻՍ

Ռուսաց, Հայոց և Վրաց Եկեղեցիների Պետերի դիմումին արձագանքել են Լիտվիական ՍՍՌ Հիմնական Եկեղեցու, Լիտվիա-

կան ՍՍՌ Կաթոլիկ Եկեղեցու և մի շարք այլ Եկեղեցիների պետերը։





## ՍԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Օգոստոսի 13-ին, Ս. Աստվածածնի Վերափոխման տոնին, Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցեց Գեր. Տ. Սուրբն Եպիսկոպոսը, ներկայությամբ Վեհափառ Հայրապետի:

Տաճարը և գալիքը լի էին բազմահազար ժողովրդով:

Այդ օրը Մայր Տաճարում հղան բազմաթիվ մկրտություններ:



Օգոստոսի 17-ին Կիւլավորսկ մելքնեց Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գերոգ. Զ. Կաթողիկոսը՝ ամառնային հանգստի:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր Գեր. Տ. Վահան Արքեպիսկոպոսը:



Սեպտեմբերի 17-ին, Խաչվերացի տոնին, Մայր Տաճարում խուռան բազմության ներկարադատ Ս. Պատարագ մատուցվեց, Խոկերկոյան, Հանդիսադրությամբ Գեր. Տ. Սուրբն Արքեպիսկոպոսի, Պատարվեց Խաչվերացի թափորը Տաճարի շորս կողմբի:



Սեպտեմբերի 30-ին, Նորին Վեհափառության Տ. Տ. Գերոգ. Զ. Սուրբ Ս. Պատարագ մատուցվեց Նորին Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց Հոգ բազմության ներկայությամբ:

Ս. Պատարագից հետո, Հանդիսապրությամբ Գեր. Տ. Սուրբն Արքեպիսկոպոսի, կատարվեց Հայրապետական մալթանք: Սորագանը խոսեց Վեհափառ Հայրապետի գործունեության և քրտնաշան աշխատանքի:

մասին, մաղթելով Վեհափառ Հայրապետին երկար և բերկրապից օրերի:

Վեհափառ Հայրապետի բացակայության պատճառով, Գեր. Տ. Ռոպեն Արքեպիսկոպոսի բնակարանում տեղի ունեցավ հյուրասիրություն, ամրող միաբանության մասնակցությամբ:

Սեպտեմբերը բաժականուերկ երկար կանք մաղթեցին Վեհափառ Հայրապետին:

Միաբանության և բազմաթիվ անձանց կողմից շնորհավորական հեռագրեր ուղղվեցին Կիւլավորսկ՝ Վեհափառ Հայրապետին:



Հոկտեմբերի 8-ին, Կիւլավորսկից Մայր Աթոռ վերադարձավ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գերոգ. Զ. Սուրբ Ս. Պատարագ Կաթողիկոսը և նույն ամսի 10-ին մելքնեց Մոսկվա, մասնակցելու Խաչադության պաշտպանության Համամիտենական երկրորդ կոմիտեանսին:

Նորին Վեհափառության ուղեկցում էին Գեր. Տ. Վահան Արքեպիսկոպոսը և Գերագույն Հոգենորդ Խորհրդի քարտուղար Հ. Աղուլյանը:



Հոկտեմբերի 22-ին, երաժշտագետ Կոմիտաս Վարդապետի մահվան 15-րդ տարեդարձին, Մայր Տաճարում Ս. Պատարագից հոգի հանգիստ:

Կոմիտաս Վարդապետի գործունեության և կյանքի ապրումների մասին խոսեց Մ. Հակ. Մ. վարդապետը:



Հոկտեմբերի 26-ին Մոսկվայից Մայր Աթոռ վերադարձավ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գերոգ. Զ. Կաթողիկոսը, իր շքախմբի հետ միասին:

## ՍԱՀԱԿ Ռ. ՎԱՐԴԱՊԵՏ

ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԻ ԽՈՒՄՐ ԱԿԱԴԵՄԻԿՈՍՆԵՐԻ  
ԱՅՑԸ ԷՇՄԻԱԾԻՆ

Հոկտեմբերի 29-ին, Մայր Աթոռ ժամանացին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ղիտական սեսիային մասնակցող մի խոմք համամիտութենական ակադեմիկոսներ, իրենց ուղեկիցներով:

Վեհարանի գարպասի մտու հյուրերին դիմափորեցին Գեր. Տ. Վահան Արքային կուպուլու և ավագ լուսարար Տ. Սահակ Մ. Վարդապետը: Հյուրերը նախ այցելեցին Տաճար և թանգարան, ուր Տաճարի կառուցման և պատմական այլ հարցերի մասին տրվեցին մանրամասն բացատրություններ: Այնուհետեւ Հյուրերը այցելեցին Վեհարան և արժանացան Վեհափառ Հայրապետի ուժինության: Վեհափառ Հայրապետը ողջունեց նրանց գաղուատը Սովետական Հայաստան, մաղթելով հաշողություն իրենց գիտական աշխատանքների մեջ: Վեհափառը խոսեց հայրեն լեզվով, որն անմիջապես թարդմանեց ուսանեն Գերագույն Հոգևոր Խորհրդի քարտուղար Հ. Ագովյանը: Սուորն տալիս ենք Վեհափառ Հայրապետի ճառը, որը սղագրել ենք մենք:

ԱՌՎԱԽ եմ, որ այսօր Հայրապետական հարկի տակ ընդունելու համբուլքն ունի Խորհրդային Միության արևալ մարզերից՝ Ռուսաստանի, Վրաստանի և Արքեչանի զանազան վայրերից պատմական գիտությանց սեսիային մասնակցելու համար Հայաստան եկած ակադեմիկոսների: Իսրտե ողջունուած եմ Ձեր գալուատը մեր Հայրենիքը՝ Խորհրդային Հայաստան, որի նպատակն էր գիտել մեր Հայրենիքի պատմական հուշարձանները, ուսումնասիրել մեր անցյալ և ներկա կուտուրան, ինք հանել նոցա արժանիքները և տալ նոցա գնահատականը:

Հայ ժողովուրդը ի ակզբանե անտի սիրել է կուտուրա, ստեղծել է անցյալուած իր ազգային մշակույթը՝ իր գիրն ու գրականությունը, իր գեղարվինամը բոլոր ճյուղերով, նաև մշակել է որոշ գիտություններ: Եվ իր ասիդագործած կուտուրական արժեքներով է, որ օտարներից ճանաչվում և նոցանից հարգանքը ու պատիվ է վայելուամ: Այդ մշակույթի շնորհիվ է, որ ազգային ինքնագիտակցություն է ձեռք բերել և որի շնորհիվ էլ ապրել, ապրուած և պիտի ապրի այսուհետու:

14-րդ դարու վերջերից, երբ Կիլիկիայուժ վերջնականապես ջնջվուած է հայ քաղաքաւ-

կան իշխանությունը, հետզհետե թուզանում է մեր կուտուրական աշխատանքը, նամանավանդ 17-րդ և 18-րդ դարերում՝ տաճկական և պարսկական վայրագ արշավանքների՝ նոցա կատարած ալերումների, հրդեհումների, թալանի, կոտորածների, որոնց հետեւանք նաև արտագաղթի պատճառով, եվ միայն 19-րդ դարի սկզբներին վերստին սկսուած է Հայաստանում զարթոնքի շրջանը, երբ Հայաստանի արևելյան մասը անցնուու է ուսացա տիրապետության: Բայց նա արագ քայլերով զարգանում, ծաղկում ու անձանաչելի է դարունում միայն Խորհրդային հշիսանության օրով, շնորհիվ Խորհրդային Հայաստանի հայրենի Պետության հոգատար ջանքերի, հայ ժողովրդի անդուզ ու տոկուն աշխատանքի, ուսա մեծ ժողովրդի և դրացի ժողովուրդների բարյացակամ համագործակցության և ուսասկան կուտուրայի բարերար ազգեցության:

Մուս խոշոր գիտանկաների, համաձարել գրողների, հմամաշխարհային մասաշտառով մեծ գեղարվիստագետների ազգեցության շնորհիվ է, որ այսօր մեր երկրում ծաղկել է գիտությունը, գրականությունը և գեղարվեստը իր բոլոր ճյուղերով, և մենք ունինք գիտության, գեղարվիստի և տեխնիկայի ապարեզներուած այնպիսի խոշոր գեղմքեր, որնք պատիվ են բերուած ո՛չ միայն մեզ, հայրենիս, այլ նաև առաջնակարգ ըսրծի կուտուրա ունեցող Խորհրդային Միության: Այսպես և մեր քարագույներով և ավագուտ անապատներով ծածկված երկիրը երթեմնի հետամնաց զուրանտեսական մշակությամբ, ուսասկան կուտուրայի և համամիութենական ժողովուրդների համագույն շնորհիվ դարձել է արդյունաբերական երկիր և զարգացել, ծաղկել ու զորացել է:

Հայ ժողովուրդը խորապես գիտակցում է այս բոլորը, ուստի և լցված է հանգելու խորհրդային Միության և ուսւ մեծ ժողովուրդը երախտագիտության զգացմունքով, որ Հայաստան անցինց կմնա նորա հիշության մեջ: Հայ ժողովուրդը իր երախտագիտությունը արտահայտում է ո՛չ միայն խոսքով, այլև գործով, որի ապացուցը տվակ նաև Հայրենական պատերազմի ժամանակ, երբ Միութենական մյուս ժողովուրդների

Հետ ազգովին նվիրվեցավ պատերազմի հաղթական ելքի հաջողականը,

Խորհրդային ժողովուրդների առաջ դրված է այսօր մի նոր խնդիր, որի լուծմամբ սկիզբ կառն պատմովյան մեջ մի նոր դարաշրջան, որի հեղինակն ու հետապնդողն է Խորհրդային Միության զեկավար և մարդկովյան մեծ բարեկամ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԸ, Յարական իշխանության օրով պետական ներքին քաղաքականության հիմունքներն էին ուժը, բռնությունը և ժողովուրդների միջանց հանրեփական հարաբեկած թշնամական հարաբերությունը: Խորհրդային Միությունը փոխեց այդ քաղաքականությունը և ուժի, բռնության և թշնամական հարաբերության փոխարեն դրավ նորը՝ խաղաղության, նորայրության և համագործակցության սկզբունքը: Այս քաղաքականության դրական արդյունքն է Խորհրդային Միության մեջ իշխող համերաշխության ոգին և Խորհրդային Միության ձեռք բնրած բարձր կուլտուրան ու տեխնիկան:

Աշխարհի բարեկանության առաջարկը մարդկան կամ ամագործակցության սկզբունքը: Այս քաղաքականության դրական արդյունքն է Խորհրդային Միության մեջ իշխող համերաշխության ոգին և Խորհրդային Միության ձեռք բնրած բարձր կուլտուրան ու տեխնիկան:

Վիճակի ստեղծման հիմքը աշխարհում աիրող խաղաղությունն է և պետությունների համերաշխությունն ու համագործակցությունը:

Մենք հավատում ենք, որ մարդկային խոհական միտքը և հետզհետե զարթնող խիզը կհաշտվին աշխարհում խաղաղության և եղբայրության ու համագործակցության դաշտավարների տիրապետության, սկզբունքների նոր դարաշրջան և կատարելու նոր դարաշրջան և կստեղծվի նոր աշխարհ, ուր ուժի, բռնության և անհատական շահերի փոխարին կիշխեն խաղաղությունը, եղբայրությունն ու համագործակցությունը՝ ի բարօրություն մարդկության:

Այս խնդիրի լուծման մեջ գիտության ներկայացուցիչներդ մեծ դեր ունիր կատարելու, ուստի կրկին ողջունելով Զեր գալուստը մեր Հայրենիքը, բարեմաղթուած հը Զեր գործունեության և մեծ ձեռնարկներին՝ հաջողություն:

Հյուգերի կողմից շնորհակալական խոսք ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին:

Հյուգերին ծաղկյա դահլիճում տրվեց Հուշաբիրություն:



ՄԵՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԴԻՏԱԿԱՆ ՃԱՆԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ

I



Եր պատմության ամենահետաքրքրական հարցերից մեկն այն է, թե մեր պատմագիրները ի՞նչպիսի ըմբռնում են ունեցել պատմության վերաբերմամբ առհասարակ, ի՞նչպես են մոտեցել պատմական դիմքերին ու անցքերին և ի՞նչպիսի լուսաբանություն են տվել նրանց։ Այս ամենի մեջ, իհարկե, գլխավորն ու հիմնականը այն է, թե ի՞նչպիսի աշխարհայացք են դրել նրանք իրենց երկերում։

Անշուշտ, վեճի առարկա չի կարող լինել այն հանգամանքը, որ յուրաքանչյուր պատմից, որպես իր ժամանակաշրջանի ազգեցությունները որդեգրող ապրող և այդ ազգեցությունները որդեգրող անձնավորությունը, կրել է իր ժամանակի դրոշմը, ապրել է այն հոգերանությունն ու մտայնությունը, որ տիրապետող և թելադրող է եղել իր ժամանակաշրջանում և հետևապես նա իր երկում կամ ստեղծագործությունում դրել է այդ նույն ժամանակաշրջանի շունչն ու ոգին, այդ նույն ժամանակաշրջանի ժողովրդական զանգվածների ու խավերի հույսերն ու ակրնկալությունները, ինչպես և նրանց ապագայի նկատմամբ ունեցած հավատն ու սպասելիքները։

Թայց այս արդեն ընդհանուր տեսակետ է և ըմբռնում, որ վերաբերում է ընդհանրապես բոլոր դարերի և ժամանակաշրջանների պատմագիրներին։ Անկախ այս ընդհանուր տեսակետից, անառարկելի պիտի համարել այն, որ ամեն մի պատմիչ ունեցել է իր անհատական տեսակետն ու միտումները, որ նա խնդիրները լուսաբանելիս, այս կամ այն ձևով հրապարակ է քաշել։ Եվ ըստ այնմ, պատմական իրողությունները հեղեղ-

վել են հեղինակի տեսնենցներով և գաղափարախոսությամբ։

Կասկածից վեր է, որ պատմագիրը որևէ փաստի մոռացումով և չհիշատակելով, կամ որևէ պատմական դեպքի մանրամասնություններին ու դրդապատճառներին ծանոթ վիճելով, չի կարող դիրքավորվել այսպես, ինչպես որ այդ պահանջում են պատմական սուույգ իրողությունները և ճշմարտությունը, և ահա այս խնդիրներից էլ կախված կլինի նրա անաշառությունը և նրա պատմագիտականը։

Վերօհիշալիքներն ի նկատի առնելով, անխոսափելիորեն պետք է հանգել այն եղանակացության, որ պատմագրության արժեքը իրապես կապված է պատմական դեպքերի լրիկ և ստույգ ըռւսարանության հետ, դեպքերի հաշորդական զարգացման, նրանց հասարակական դրդապատճառների ամբողջական բացահայտության և պաֆզարանման հետ։

Պատմագիրն, անկախ իր համոզումներից և անհատական ըմբռնումներից, պետք է հանդիս գա իր դարաշրջանի իրական և ստույգ նկարագրով, և այս հանգամանքը երբեք չի խանգարի պատմագրին ընդգծել և նշել նաև իր տեսակետն ու համոզումները։

Եվ ահա այս տեսակետից է, որ անհրաժեշտ է ուսումնասիրել ու վեր հանել մեր պատմագիրների պատմահայեցողությունը, նրանց պատմագիտական ճանաշողությունն ու ըմբռնումը։

Ընդհանուր առմամբ սխալ կլինի կարծել, որ մեր պատմագիրները յուրացրած չեն եղել, կամ թերի շափով են յուրացրել իրենց ժամանակի պատմագիտությունը և առհասա-

բակ պատմագիտության հետ կապված հարցերը:

Ընդհակառակը, նրանց երկերից և նամանվանդ նրանց գրած հառաջարաններից պարզորդ կերպով երկում է այն պատասխանատվությունը և գիտակցականությունը, որ նրանք զգում են պատմության, երկրի ու ժողովրդի և, նամանավանդ, գալիք սերունդների հանդեպ:

Բարոյական պատասխանատվության այս զգացումով են հեղեղված Խորենացու, Ազամանգեղոսի, Ղազար Փարթեցու երկերը:

Այսպես, մեր մեծ քերթողահայրը՝ Խորենացին խոսք չի գտնում դրվատելու Սահակ Բագրատունու հայ ժողովրդի պատմությունը գրել տալու նախաձեռնությունը: Իրեն արված պատմություն գրելու առաջարկն ընդունում է սրտի անհօն հրճվանքով և հափշտակությամբ: Նա շատ բնորոշ բառերով է ողջունում Բագրատունու առաջարկը: Իր առաջին գրքի վերնագրում նշում է. «Ճաղաք մերոյ յիսկզբանն յայսմ բանից Սահակայ Բագրատունու խնդալ»: Սակայն այս խնդրությունը, որ հայտնում է Խորենացին, իրեն արված առաջարկի վերաբերյալ, շատ թույլ է արտահայտելու Խորենացու ներքին հուզումներն ու ապրումները, այն ոգերությունը, որ համակել է նրան և նա շարունակում է, «Ճանապառ խաղացման աստիածայնոցն ի քեզ շնորհացն ի, զանդուկ Հոգուոյն ի վերայ քո իմացուածոցդ շարժմունք ծանեալ ի ձեռն գեղեցիկ խնդրոյս...», և այս առաջարկը նախ սիրելի է իրեն՝ Խորենացուն և առավել նրա սովորությանց: «Որ եւ սիրելի իմոց իսկ ախորժակացս է, առաւել եւս սովորութեանց»: Անշուշտ, Խորենացին ուզում է շեշտել իր և Բագրատունու զգացումների ու մտածողության համատեղությունը պատմություն գրելու և պատմություն ունենալու վերաբերյալ, բայց նշելով «սիրելի է իմոց ախորժակացս եւ առաւել եւս սովորութեանց», ուզում է ասել, որ երկար տարիներ, գուցե և իր ամբողջ կյանքի ընթացքում միայն այդ նպատակն է ունեցել, հզացել է և ծրագրել, պատրաստվել է և ուսումնասիրել, սակայն նյութական պայմաններ չի ունեցել այն իրական գործի վերածելու, այսինքն պատմություն գրելու, քանի որ մագաղաթը խոշոր գումարներ էր պահանջում:

Ստանալով Սահակ Բագրատունու առաջարկը, Խորենացին կանգնում է ահավոր ճշմարտութան առաջ, այդ այն է, որ մեր ժողովուրդն անցյալ և պատմություն է ունեցել, ապրել է պատմական խոշոր իրա-

դարձություններ, ստեղծագործել է ու կերտել, պայքարել է ու հաղթանակել, և ահա դարերի ընթացքում կուտակված այդ գործունեությունն ու աշխատանքը գրի չի առնվազ, չի արձանագրվել, որ այդ պատմությունը և կա և՛ չկա: Այն կա, քանի որ ժողովուրդը պատմական ճանապարհ է անցել, այն չկա, քանի որ չի գրի առնվել և մնացել է անհայտության մեջ:

Ահա թե ինչո՞ւ պատմագիրը տիրությամբ ու վշտով արձանագրում է. «Կամիմ եւ ոչ զանիմաստամբը բարս առաջնոցն մերոց նախնեաց առանց յիշատակի բամբասանց թողով. այլ եւ աստէն իսկ յիսկզբանն մեռոյ գործառնութեանս վասն նոցա կշտամբութեան յարմարել զրանս» (գլուխ Գ.):

Քննադատանական այս սուրբ խոսքերը ուղղված են մեր նախնիիներին, որոնք իմաստափրության մասին չեն խորհել և որի պատճառով մենք շատ բան ենք կորցրել և չենք ունեցել մեր վաղեմի ժամանակների պատմությունը: Այս հարցը Խորենացին շոշափում է իր աշխատասիրությունն սկսելիս, ազգարարում է այն ի գիտություն բոլորին և հենց այդպիսով, հետ ալսու, պատմություն ունենալու և «անհիմաստասեր» վիճելու անհրաժեշտությունն է զնում երկրի և ժողովրդի առաջ:

Մեծ գունմակությամբ հիշատակելով այն օտար թագավորներին, որոնք իրենց ժամանակի և իրենց նախորդների պատմությունն են գրել տվել, այլև Հրապարակ բերելով նաև դիվանատներում աշխատողների մեծ գործը պատմության բեկորները պահպանելու գործում, ինչպես որ կատարել են քաղաքացիք, ասորեստանցիք, եպիպատացիք և հելենացիք, ապացուցում է մեր նախնիների անհիմաստասիրությունը և անփոխությունը, անշուշտ գրանով Խորենացին նշում է այն, որ մերոնք կարող էին և պետք է նոցանից օրինակ վերցնէին, հետեւին նրանց պատմությունը պահպանելու գործում:

Նա իր այս դրությը պատճառարանում է հետեւյալ ձեռվ. Թի ձեռն որոց եւ մեր ընթեռնուն զար ի նոցանէ շարածս բանից, ըստ աշխարհօրէն կարգաց իմաստնանալ ասեմք, եւ քաղաքական ուսանել կարգաց:

Ինքնին հասկանալի է, որ վերթողահայրը այս նախադասությամբ ոչ միայն նշում է պատմության ուսանելի և դաստիարակիչ կողմերը, ուրիշ ազգերի փորձառությունից օգտվելու և մեր երկրում գործադրելու անհրաժեշտությունը և առնապարակ իմաստավորվելը, այլև, այլ երկների և ժողովուրդների պատմությունը դիտենալու ան-

Հրաժեշտությունը: Այս ցուց է տալիս պատմահոր լայն ըմբռնողությունը պատմության մասին:

Այնուհետև, Խորենացին խիստ հետևողականորեն եզրակացնում է. «Ապա ուրեմն ամենեցուն մեզ յայտնի է թագաւորացն մերոց եւ այլոցն առաջնոց առ ի յիմաստն աղամարութիւն, եւ անկատարութիւն ոգույն բանականի: Զի թէպէտ եւ եմք ածու փոքր եւ թուով յոյժ ընդ փոքրու սահմանեալ եւ զօրութեամբ տկար եւ ընդ այլով յոլով անդամ նուածեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոց յիշատակի, զորոց եւ ոչ մի ոք ի նոցանէ պէտք յանձին կալաւ մատենագրելը» (գլուխ Գ.):

Սակայն այս մոայլ գնահատականն ու եղրակացությունը բնորոշ գնահատական է մինչ Խորենացին եղած ժամանակաշրջանի համար մեր ժողովրդի հասարակական զարգացումը ճանաչելու տեսակետից:

Երկրորդ հանգամանքը, որ նշանակալից տեղ է բռնում այս գնահատականի մեջ, այդ Խորենացու դեմոկրատիկ մոտեցումն է դեպի պատմությունը և ժողովրդները և նամանականդ դեպի մանր ժողովուրդները:

Նշելով՝ որ հայերը փոքր ժողովուրդ են և զօրութեամբ տկարո, սակայն նրանք ակնառու գործեր են կատարել մեր երկրում և որոնք արժանի են գրի առնվելու և մատենագրվելու, որ չի կատարվել, այսպիսով բնականաբար Խորենացին դնում է մանր ժողովուրդների պատմություն ոնենեալու անհրաժեշտությունը և երկրորդ, որ մանր ժողովուրդներն ևս «բազում գործք արութեան» գործելով, իրենց համեստ յուման են դնում համաշխարհային պատմության և համամարդկային կուլտուրայի գանձարանում, և որը անտես չպիտի թողնվի:

Այնուհետև, Խորենացին կանխում է այն պատճառաբանությունները, որ կարող են դնել իր առաջ և նշում է. «Այլ ասից որ արդեւք վասն ոչ լինելոյ գիր եւ դպրութիւն ի ժամանակին, կամ վասն պէս պատերազմացն, որ կուր զմիմեանց զկնի անհետ ի վերայ գային» (գլուխ Գ.):

Այս պատճառաբանությունը Խորենացին չի հարդար, քանի որ մաստնանշում է պարսից և հունաց գորերի գործածության առկայությունը Հայաստանում, ինչպես արքայական դիվանատներում, նույնպես և նախարարական տներում, գյուղերի, գավառների սեփականատիրության, դաշինքների և այլ դրույների վերաբերմամբ, որոնք, ինչպես ինքն է ասում, «այժմ առ մեզ գտանին»:

Ահա Խորենացու պատճառաբանված մերկացումը. «Այլ ոչ արդարեւ այսոքիկ կարծեցեալ լինի, քանզի գտանին եւ միջոցք լիալ պատերազմացն, եւ գիր Պարսից եւ Յունաց, որովք այժմ գիտից եւ գաւառաց հաւանականութեանց եւ դաշտանց առանձնականութեանց, եւ հանուրց հակառակութեանց եւ դաշտանց այժմ առ մեզ գտանին անբարձր պատկանական գրուցաց մատեանէ ընդգծումը մերն է — Ռ. Ա.): մանաւանդ որ ի սեպհական պատութեանն պայագաստութիւմ» (գլուխ Գ.):

Խորենացին այս բոլորից հետո վերջնականացն եւ անդրտվելի լիորեն եղած է. «Այլ ինձ թոփ, որպէս այժմ՝ եւ առ հինուն Հայաստաննայց լիալ անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանաւորաց: Վասն որոյ աւելորդ է մեզ եւ այլ յաղագու անբանց արանց թուզամտաց վայրենեաց ճառելու գլուխ Գ.):

Խորենացին առ տեսնում ենք, Խորենացին իր քննադատությամբ ոչ միայն անխոցելի է, այն շափագանց խիստ է դեպի երկրի զեկավարները, որոնց անվանում է վայրենիներ և որոնց վերաբերմամբ անխնա է, Այս բխում է նրա պատմագիտական լուրջ համացողությունը և բուռն հայրենապահությունից:

Այս բոլորից հետո միանդամայն համարնալի են և տեղին այն դրվագանքն ու փառաբանությունը, որ Խորենացին ուղղում է իր մեկնաբանին՝ Մահակ Բագրատունուն և գրում է, «Վասն որոյ ոչ միայն գովել արժան է զեկը, այլ եւ ի վերայ քո աղօթիկ առ ի լինել քեզ միշտ այսպիսից: Այս ձևով Բագրատունուն աստվածացնելը միանդամայն համապատասխանում է նրա ձեռնարկած գործին:

Հիրավի, աստվածանալու արժանի գործքը տեսմուամ Բագրատունին, երբ հանձնարարում և պարտադրում էր Խորենացին զեկ Հայոց պատմությունը, դրանով միաժամանակ նաև հիմնավորուած և ստեղծուած էր հայ-ձեռնապահի տպագրությունը, որի հիմքը զեկ էր Խորենացու ուսուցիչ անմահ Ս. Մեսրոպ Մաշտոցը:

Խորենացին դրվատելով իր մեկնաբանին, նրան համեմատուության մեջ է քնում հայ աշխարհի, ինչպես անցյալ ժամանակաշրջանի, այլ և իր ժամանակի իշխանների հետ և դառնում է, որ նա միակ պրտացավն ու հոգատարն է հայ կյանքի առօրյային և անցյալին իր գործով և իմաստությամբ: Եվ նաշարագրուած է. «Առ որով տեսանեմ եւ գալու, զի եթէ որք յառաջ քան զմեզ եւ կամ առ մերը եղեն հարուստը եւ իշխանք աշխարհիս հայոց, ոչ ընդ ձեռամբ անկիրոց իշխանն արդեւք գտելոց իմաստուց զայտայիս-

եացս հրամայեցին կարգել պիտակակարնից, եւ ոչ արտաքուստ ուստեղ արտօցիկ ի ներքս ածել խորհեցան օժանդակութիմն իմաստից, եւ զբեզ այսպիսի այժմ եղալ ծանհեաք, ապա յայտ է ուրեմն, թէ ամենեցուն քան զբեզ նախագումարիցն ճանաշես վեհագոյն, եւ բարձրագումարից արժանաւոր գովութեանց եւ յայտիափառ պատկանաւոր դմիլ յարձանագումարիցն բանից:

Արտեղ Խորենացին հասարակական շահերի համար մարտնչողի լրիվ գիտակցականությամբ ըմբռատանում է իր ժամանակակիցների դեմ, «Եւ կամ առ մեւք եղին հարուստք կամ իշխանք աշխարհիս հայոց», որոնք շեն հրամայել վեհագումարի բանից, այսինքն շեն հոգացել պատմություն գրել տալու մասին, շեն օգտագործել ողոնդ ձեռամբ անկելոց իշխանց արգելք գովելոց իմաստնոց, և ոչ էլ խորհել են դրսի աշխարհից, լուսավոր երկրներից՝ «արտաքուստ ուստեղ» իրենց երկիրը մուժել իմաստությունը՝ օֆ ներքս ածել օժանդակութիմ իմաստից», եկ որովհետև այդ անապատի մեջ արդպիսին հանդիտանում է միայն Սահակ Բագրատունի իշխանը, հետևապես նա արժանի է ամեն տեսակի փառքի:

Արապիսով, Խորենացին քննադրատում է նաև իր ժամանակակիցներին իրեն հատուկ քննադրատական սոր նշտարներով և ժողովրդականացնում և հասարակության սեփականությունն է դարձնուած պատմություն ունենալու և այն գիտենալու սկզբունքները, որով և պատրաստում է մտավոր կյանքի մի հոյակապ հեղաշրջում:

Աչա այս է կազմուած մեծ քերթողահոր՝ Խորենացու արժանիքը և մեր կյանքին մտտոցած ծառայությունը:

Որ հիրամի նա այդ առաջադիմական վեմ նպատակներն է հետապնդում, այդ էրեվում է հետագայում պատմած նրա յուրաքանչյուր գիտից ու գրուցից, նրա իմուտալից եղակացություններից և, նամանավանդ, նրա Ռդրից:

Նրա Ռդրը ոչ այլ ինչ է, եթե ոչ գոյություն ունեցող պետական և հասարակական կազմի քննադրատություն, քննադրատություն այնպիսի փարաբեռությամբ ու գրվածով, որից բխում է խարիսքած և ապականված հին հասարակարգին փոխարինող նոր հասարակարգը:

Խորենացին սովորական պատմագիր չէ. նա արտասովոր և հանճարեղ ուժ է, որը նվարագիրով անցյալը, մասնանշուած է գալիքը, դատապարտելով ներկան, ցուց է տալիս նրանից դուրս գալու երբը: Ուստի և նա քննադրատ պատմագիր է և առավել շա-

փով, ապագան ու գալիքը տեսնող մարդարներ:

Այսպիս է, այս' հնագույն դարերում ծննդած և ապրած հանճարեղ մտածողը, մեծ հայրենասահերը:

Ապրելով այսպիսի ժանր հիասթափություններ և հոգեկան տամաշնորներ, բնական է, որ Խորենացու համար գյուտ պիտի լիներ Սահակ Բագրատունուց իրեն ըրբած առաջադրանքը՝ գրել Հայոց պատմություններ մինչև իր օրերը: Զափտի մոռանալ, որ այն ժամանակ այսպիսի մեծ առաջադրանքի իրավուրծումը կապված էր նյութական փոշոր ժամանակի հետ, որի մասին Խորենացին ոչ մի հիշատակություն չի առանաւ, բայց որը, անշուշտ, հոգուած էր և հոգացել է հայրենասահ իշխանը: Եվ, բնական է, որ Խորենացին միայն հիանալ կարող էր այս առթիվ, և ոչ միայն հիանալ, այլ այն համարել աստվածային հրաշը, նախախնամության գործ: Ուստի և նա գրում է. «Զայնպիսի խաղացմունս աստուածայնոցն ի քեզ շնորհացն իմաստիցն ի քեզ շնորհացն ի գործոցն ի գործոց ընդունոյդ՝ զնոգույր ընկալեալ զժանօթութիւնը, որ եւ սիրելի իմոց իսկ ախորժակաց է, առաւել ես սովորութեանցը»:

Բագրատունու պատմություն գրել տալու իդար, ինչպիս տեսնուած ենք, համարում է աստվածային շնորհը, որ նա ունի և Ս. Հոգու նրա վրա ունեցած զեկավարության արդյունք, որը միանգամայն ի հայտ է բերուած մեկնասահ ներքին հոգեկան աշխարհը, նրա հոգու գեղեցիկությունը, մի բան, որ համապատասխանուած է հեղինակի՝ Խորենացու ներքին մտորամներին՝ սուրբելի է իմոց ախորժակացաւ, և ոչ միայն այլքան, այլև Խորենացու սովորություններին, այսինքն նրա կյանքին ու կենցաղին, նրա նպատակադրություններին ու որոնուաներին:

Ինչպիս որ պարզորեն երևուած է այս տողերից, Խորենացին վաղուց ի վեր նպատակադրություն է պատմություն գրելու աշխատանքներին, նույն մտքերով է անվել, ինչպիս և Բագրատունին, և անշուշտ որոշ արգելառիթ հանդամանքներ շեն թույլառել պատմահորն իրավորել իր ծրագիրը, և ահա հանճարծ զուգադիպել է Սահակ Բագրատունու պաշարկին:

Կարծում ենք, որ այս խնդրուած Խորենացին դրական համեստություն է արել և յոհի իր մասին, բավականացել է միայն մեկ երկու խուռակ հայտնել, որ Բագրատունու առաջարկը լիովին համապատասխանուած է իր ներքին մղումներին ու զգացուաներին:

Բայց որ պատմություն գրելու առաջարկն արվել է հատկապես Խորենացուն, այդ ինքնին արդեն պատռում է այն համեստության բողը, որ իր վրա է առել Խորենացին: Անկանկած պիտի համարել այն, որ Խորենացին Աղեքսանդրիալից վերաբանալուց հետո, իր Կյանքի Հիմնավան նպատակն է համարել հայ ժողովրդի պատմությունն ուսումնակիրելու և գրելու գործը և, գլխավորապես, զբաղվել է դրանով: Առկա փաստերից այլ եղանակացություն հանել հնարավոր չէ, նամանավանդ որ նա գրում է. «Յաղագս որոյ ենշատքար ընկալեալ զի՞ խեղիրդ՝ (ընդգծումը մերն է — Ռ. Ա.), աշխատափրեցաց ածել ի կատարումն. անմահ ի յիշատակ թողով զայս քեզ, եւ որ զինի բոյինքն են ֆալոց առգք» (գլուխ Գ.):

Վերևի տողերից հայոնապես երևում է՝ թե Խորենացին պատմագիտական նաև աշխատությանը ո՞րքան խոշոր նշանակություն է տալիս ինչպես նեղկա, նույնպես և հետագա սերունդների համար: Նա իր գործը համարում է առնմահ յիշատակ: Իրոք, ուրիշ ի՞նչ առնմահ անուն և հիշատակ կարող էր լվատակել ու թողնել Խորենացին, քան այն, որ թողել է:

Խնջո՞ւ Որովհետև նա գրելու է ո՞չ միայն այն, ինչ որ գործել է մեր ժողովուրդը որպես նախնական և քաջ ժողովուրդը, որն արդյունավոր է եղել ո՞չ միայն խոսքի և պիտանի խոհականության մեջ, այլև բազմաթիվ մեծամեծ ու փառավոր գործեր է կատարել, որոնք մեկ առ մեկ հիշատակելու են պատմության ընթացքում: Ահա թե ի՞նչպես է ձևակերպում Խորենացին իր այդ ըմբռնուածը. «Զի եւ ազգի եւս նախնականի, եւ քաջ եւ արգասաւոր՝ ոչ միայն ի բանա և ի պիտանատը խոհականութիւնա, այլ եւ ի մեծամեծ եւ ի բազում գործա արժանափառա, զոր յիշատակեացուք ի կարդի պատմութեանն (գլուխ Ա.):

Այսպիսով, Խորենացին գնահատում է մեր ժողովուրդին և նրա պատմությունը, գտներով որ այն այնքան խոշոր ու փառավոր դրվագներ ունի, որոնք անհրաժեշտ են, արծանագրվելու. այս արդեն պատմության լուրջ և գործնական բմբոնումն է, որ ի հայտ է բերում նաև Մի պահ, եթե հարցը զիսիլայր շուռ տանք, պիտի գանք հակառակ եղանակացության, այսինքն՝ եթե պիտանի և փառավոր դործեր շգտներ հայ ժողովրդի Կյանքում, հետեւապես և գրելու ոչինչ չպիտի ունենար: Այսուեղ էլ ուրեմն ամենավերջին եղանակացությունը, այն, որ նա ոչ թե գրում է, որ ինքը հայ է,

այլ գրում է միայն նրա համար, որ փառավոր գործեր են կատարվել:

Այս ինքնըստինքյան վկայում է Խորենացու պատմագիտական լալն հորիզոնների մասին:

Դրվատեղով հույն պատմագիրների աշխատափրությունը և հոգատարությունը ու միայն իրենց ժողովրդի, այլ և օտար աղդերի ու թագաւորների գործեր և նրանց գիշանատներում եղածները ի մի ամփոփելու և գրի առնելու հոգար, զինված բարի նախանձով գեափի այդքան մասրակրկիտ ուսումնամիրությունը, բնականաբար, Խորենացին հենց այդ մոտեցումով որոշում է իր պատմագիտական ճանապարհը, այսպիսով ուղենին՝ պատմությունը Խորենացու համար պատմություն է, ո'ր ժողովրդի կողմէից էլ այն կատարածած զինի, հետևագես և պատմական անցքերի մոտից թեթևակիրեն անցնել չի կարելի, այլ անհրաժեշտ է ըստ տեղին և արժանալույն գնահատելու և մեկնաբանել: Խորենացին գտնում է, որ հույն պատմագիրներն այդ տեսակիտից մեծ ծառայության են մատուցել իրենց ժողովրդին և հայրենիքին: Խորենացու հետևողական և ինքնարուսի եղանակացությունն այն է, թէ եթէ այդ արել են հույները և հաշողել, ինչո՞ւ չպիտի անենք, չպիտի անենք, մենք մենք:

Շարունակելով գրվաստումը, նաև գրում է. «Եւ ժողովեալ զայտափիկ արանց, զորոց եւ մեք զանուանս հաւատուի գիտեմք, նուիրեցին ի փառա հնալինացաց աշխարհին: Եւ գովելիք են, որպիս իմաստափերեցեալը՝ յաղագս զանին եւ իմաստովեանն առ ի յայլոցն վիճելոյ գոտակք. առաւել եւս որք ընկալան եւ պատուեցին գարսպիսի. գիտուիմաստից: Վասն որոյ եւ զբոյոր իսկ զծոյնս ոչ դանդաղիմ մայր կամ դայեակ ասել փոմատից:»

Այսուեղ խոսքը և գովասանքը վերաբռնում է հույն իմաստափերեներին, որոնք ուրիշ ազգերից իմաստություն են ձեռք բերել և այն նվիրել են իրենց ժողովրդին, նույնքան խելամտուրեն են վարվել նրանք, որոնք գնումնել և պատովել են իմաստափերեների տվածները, այլ խոսքով՝ գնահատել են նրանց աշխատանքը, որի համար և Խորենացին Հոմենաստանը համարում է մայր իմաստության:

Խորենացին իր քննադադասական եղանակական է հետևյալ հակիրճ նախադասությամբ. ովասն Յունացան զրուցաբան զակնարկութիւն մերոց պիտոյիցս առնելոյ բառական է այսպիսի:

(Շարունակելի)

## ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱՐՆԵՑԻ

I

աղաքավան խոռվաճույզ պարտգաներում, 1780 թ. հովհան 26-ին, 70 տարեկան հասակում Ս. Եղիշածնութ վախճանվում է բազմաշխատ Սիմեոն Երևանցի, կաթողիկոսը, և հաջորդ օրը, մեծ հանդիսավորությամբ, թաղվում Ս. Գայանեի վանքի արևմտյան գավթում։ Մայր Աթոռի միաբանությունը նրա մահվան երրորդ օրը ժողով է գումարում, մասնակցությամբ հանգույցակաթողիկոսի թաղմանը ներկա գտնվող Երևանից և մոտակա այլ վայրերից եկած աշխի ընկնող մեկների ու ազդեցիկ մարդկանց, նոր կաթողիկոս ընտրելու համար։ Մինչև այդ, արդեն սովորություն էր դառած, որ միաբանությունն աշխարհական անձանց մասնակցությամբ մեկ կամ երկու թեկնածու էր ընտրում հայրապետական գահի համար, քայլ վերջնիկան ընտրությունը մայանում էր հեռավոր հայաշատ նշանավոր կենտրոն-ների հարությունից համաձայնության ստացմանց հետո, այն է՝ նոր-Զուլայի, թիֆլիսի և Կոստանդնոպոլսի հայությունից։ Մանավանդ անհրաժեշտ էր Կոստանդնուպոլսի Պատրիարքարանի և նրա միջոցով տաճկեալայոց համաձայնությունը, որովհետև հայ ժողովրդի ստվար մեծամասնությունը ընակվում էր Արևմտյան Հայության 20 տարեկան հասակում Ս. Եղիշածնութ վախճանվում է բազմաշխատ Սիմեոն Երևանցի, կաթողիկոսը, և հաջորդ օրը պատառված ամենուրեք կոփեների, արշականքների և ավերածություններ էին տեղի տանենում, իսկ նման բաներ շատ հաճախ էին Մայր Աթոռի ու մերձակա հայ ժողովրդի գլխով անցնում, այն ժամանակ ընդունված սովորությունը կամաց ականա անտես էր առնվում և նոր կաթողիկոսի ընտրությունը կայացվում էր միայն Մայր Աթոռի միաբանության անդամների և Երևանի ու շրջակա մայրերի անդամականությամբ, առաջարկած ընդունված մասնակցությամբ, առանց իմացում տալու հեռավոր հայության հատվածներին և սպասելու նրանց հավանության ու համաձայնությանը։ Այս ձևով ընտրվածը շուտագույթ կաթողիկոս էր օճուղում, որից հետո Մայր Աթոռից գրություններ էին ուղարկվում նրանց՝ կատարված ընտրության ու օճման մասին, տեղեկացնելով և մանրամասն բացատրելով, թե ո՞րպիսի հանգամանքներ ստիպեցին ընտրությունը նեղ շրջանակներում կատարել։ և, հճարկե, միշտ երկրի խռովաճույզ դրությունն էր գիտավոր պատճառը, որը և հատուկ շեշտվում էր Դրսի հայությունն էլ, սովորաբար, հաշտվում էր կատարված իրողության հետ և նոր գանհակալին կաթողիկոս ճանաչում։

Նման խառնակ դրության մեջ էին գտնվում այդ ժամանակ պարսից իշխանության տակ հեծող Արարատյան Մայր Աթոռն ու հայությունը Արդեն Հոգելույս Սիմեոն կաթողիկոսի վերջին տարիներին շրջակա ավագակարար թյուրք ցեղապետները, օգոս-

1. Արքաւեներ.— Օրմանյան, «Ազգապատում».— Լոռ, «Հայոց պատմություն», երրորդ հատոր.— Շահնամարտիկ, «Մտորապատմում», հատոր առաջին:

վելով նրա հիվանդագին ծանր վիճակից, սկսել էին նորից գլուխ բարձրացնել, նեղել հայ ժողովրդին, հափշտակել նրա անանդմանը՝ ներն ու գուքը, նուզնիսկ Մայր Աթոռի այսինքնից երկուաը յուրացներով և տափարի ու ոշխարի մի մասը խլելով, նաև մերձակա գյուղերին էլ ձեռք տալով. և քանի քնում, այնքան ավելի հանդուն ու լկուի էին դառնում: Այսպիսի աղմկահույզ ժամանակում հարկավոր էր շտապ գործել, կաթողիկոս ընտրել և Մայր Աթոռն ու հայ ժողովրդին անգլուխ շիռնել:

Դարերով ընդունված ու սրբագրութված առվորություն էր, որ նոր կաթողիկոս ընտրելու ժամանակ ժողովականները միշտ առանձին հարգանքով են վերաբերել վախճանվող կաթողիկոսի վերջին ցանկությանը՝ իրեն հաջորդող անձի մասին: Էջմիածնեցին շատ բավ հայտնի էր Սիմեոն կաթողիկոսի վերջին փափառը, որ նա. Հայտնել էր իր խոստովանանորոր, ծերունագարդ լուսարարապես Մարկոս եպիսկոպոսին, այն է՝ «Աթոռը անայցելու շմանյ այս վնասաշատ ժամանակին», և շտապվ կաթողիկոս ընտրեն Պուկաս Կարնեցի եպիսկոպոսին:

Ահա այս ժողորդ նկատի առնելով, Ս. Էջմիածնուած գոամարված ժողովը կաթողիկոս է ընտրում Ղուկաս Կարնեցուն: Կարնեցին ոժվարանում է իր համաձայնությունը տալ, աշքի առաջ ունենալով՝ երկրի ընդհանուր տագնապալից դրությունը և, մանավանդ, երկուող կրելով, որ առանց Կոստանդնուպոլիսի Պատրիարքարանի ու արևմտահայոց հավանության կատարված կաթողիկոսական ընտրությունը կարող է ներքին երկառուակությանների առիթ տալ, որից նա խոսափելով խոսափում: Էր Բայց ժողովականները հորորորում են հօգուտ ժողովրդի ու Մայր Աթոռի բարօրության, առօք դժորակ պայմաններում, առանց դրսի հայության նախական հավանության, այդ ժանր լուծը հանձն առնել: Կարնեցին դիշանելով, ստիպված, համաձայնություն է:

## II

Այստեղ մի քանի խոսք ասենք Կարնեցու անցյալի մասին:

Ղուկաս Կարնեցին ծնվել է 1722 թվին, Կարնի գավառի Քոյի ավանուած, բայց մեր պատմության մեջ նա, սովորաբար, կոչվում է փակառի անուանով՝ Կարնեցի: Մանկությունից ուսանուած է Մայր Աթոռուած Սիմեոն Երևանցու անմիջական հսկողության տակ և նրա ամենատառաշղթեմ աշակերտների շարքը դասվում: Նրան անուանուած էին անդրա-

նիկ եւ շնորհածին գաւակ Սիմէոնի»: 1751 թվին կուսակրոն քահանա է ձեռնադրվում լուսարարապետ Եղիազար եպիսկոպոսից, օծակից ունենալով Զաքարիա Կաղզվանցուն, որի մասին խոսք կլինի հետագա յութ:

1763 թվին Սիմեոն Երևանցին կաթողիկոսական գանձը բարձրանալով, Կարնեցուն, սրա մատուցած բազմաթիվ ծառայությունների համար, այլև նրա գերազանց պարկեցտ վարքը ներառի համար, ուղարկուած է ծեռնադրութ:

Հաջորդ 1764 թվին Սիմեոն կաթողիկոսը Ղուկաս եպիսկոպոսին ուղարկում է Զմբունիայի առաջնորդության ու նվիրակության: Կարնեցին Զմբունիայում մնում է բավական երկար, մինչև 1775 թիվը: Բայց անմիջական իր թեմի ժողովրդի համար բազմօգուտ գործեր կատարելուց և կատարյալ խաղաղությամբ ու քաղցրությամբ իր ստանձնած պաշտոնը վարելուց, Կարնեցին Ս. Էջմիածնի Սիմեոնի համար զանազան հանձնարարություններ է կատարուած և մանավանդ մեծ ծառայություն է մատուցում Ս. Էջմիածնուած Սիմեոն կաթողիկոսի հիմնած տպարանի ու թղթի գործարանի համար անհրաժեշտ սարքը և այլ պարագաներ հոգալու գործում, որովհետև ծովափնյա վայրուած առնվելով, Զմբունիայի պես վարձառաշահ հոչակավոր քաղաքուած, մշտապես շրփման մեջ էր եպիսկոպոսին հետ, որոնցից և պետք է ստանար Ս. Էջմիածնի նորակառուց տպարանի ու թղթի գործարանի անհրաժեշտ սարքավորուամը, ինչպես և վարձեր մատուցութիւնը:

Սիմեոն կաթողիկոսը 1775 թվին Ղուկաս Կարնեցուն կանուամ է Ս. Էջմիածնին, իբրև անմիջական օգնական իրեն, մանավանդ որ ինքը՝ հայրապետն արդեն վաստառող վիճակի մեջ էր և կարիք ուներ մի բանիմափց ու հավատարիմ մարդու: Զմբունիացիք շատ են խնդրուած Երևանցուն՝ Ղուկաս սըրբազնին իրենցից չհեռացնել, բայց նա հիմնավոր առարկություններ է բերուած, Կարնեցուն ներկայություններ է բերուած Կարնեցի համարելով:

Վերադառնալով Ս. Էջմիածնին, Կարնեցին շաբաթակ թև ու թիկունք է լինուած Երևանցուն և սրա հրիմանդության շրջանուած, որ բավական երկար տևեց, բարիք կառավարուած Մայր Աթոռի վարչական ու տնտեսական գործերը: Ահա այս բազմաթյամատ ու մաքուր հոգևորականին է Ս. Էջմիածնի ժողովը Սիմեոն Երևանցուն Թաշորդն ընտրությունը:

## III

Սրանից հետո շտապ պատրաստություն են տեսնում նորդնոտիր Հայրապետի սուրբ օծումը կատարելու, որը և տեղի է ունենում Սիմեոն Երևանցու մահվանից մի շաբաթ անց:

Այնուհետև, ընդունված սովորության համաձայն, զուլքա Կարնեցին, Հայրապետական գահը բարձրանալով, պաշտոնական օրնության գրություններ է ուղարկում հեռաբնակ Հայքին, իր գահակալությունը Հայտնելով և օրէնելով ու մխիթարելով՝ նրանց: Ամենից ավելի կարևոր էր Կոստանդնուպոլսի պատրիարքի ու ազգեղիկ ազգայինների սիրտը շահել, նրանց համաձայնությունը ստանալ:

Այս նպատակով պաշտոնական գրությունները Կոստանդնուպոլիս տանելու համար ընտրում են Պետրոս եպիսկոպոս Խողարժանին: Սա Ս. Էջմիածնից ուղևորվում է 1780 թվի օգոստոսի 17-ին և որոշ ժամանակից հետո հասնում Կոստանդնուպոլիս:

Երբ կոստանդնուպոլսեցիք իմանում են, որ առանց իրենց համաձանության ու համանության են նոր կաթողիկոս ընտրել, շատ են վշտանում, տեսնելով իրենց իրավունքը ունասակ եղած: Բայց աշխարհականներից ավելի է վրալովում ու զայրանում այդ ժամանակա Կոստանդնուպոլսի պատրիարք Զաքարիան, որը, ինչպես հիշեցնք, կուսակրոն քահանա ձեռնադրվելիս, օծակից էր եղել Ղուկաս Կարնեցուն: Զաքարիան իրեն էր արժանավոր համարում Սիմեոն Երևանցու հաջորդը վնել և այդ պատճառով եռանդում միջոցներ է ձեռք առնում Ղուկասի կաթողիկոսությունը շնչելու համար, այսինքն ակավում է այն ներքին խոռվությունը, որից այնքան խուսափում էր նորդնոտիր Հայրապետը դեռ իր ընտրության պահին:

## IV

Թեպետ կոստանդնուպոլսեցիների և Զաքարիա պատրիարքի բռնած հակառակության դիրքը մի ցավակի իրողություն է, բայց սրա վրա մի քիչ երկար կանգ ենք առնում, որովհետև այս ամբողջ անցուարձի ժամանակ Ղուկաս կաթողիկոսի գործելակերպն այնքան խելացի և ուսանելի է, որ այսմ էլ ուղղակի հիացմունք է պատճառում հետորդմերիս, թեպետ ահապին ժամանակ է անցել այն օրվանից, մոտ 170 տարի:

Ստանալով Ս. Էջմիածնից ուղարկված պաշտոնական գրությունները, Զաքարիա պատրիարքը մեծամեծների ժողով է գումարում այդ ինդրուի գրադակերու համար: Որքան

էլ Պետրոս եպիսկոպոսն աշխատուել է պոլտցիներին ու Զաքարիա պատրիարքին համաձայնության բերել, մանրամասն բացատրելով Մայր Աթոռի և Արարատյան երկրի տափապալից դրույթումը, երբ Հնարավորությունը չկար քաթողիկոսական ընտրությունը հետաձգել, բայց և այնպես Զաքարիա պատրիարքը արարիարանու ու ազգեցիների ազգայինությունը են և որոշում՝ կայացնումը եղած ընտրությունը շնչառաշել, նորընտիր կաթողիկոսի անունը եկեղեցիներում չ'ի շատակել:

Բացի այս, կաթողիկոսական ընտրության և ազգեցության խնդիրները հաստատուն մի ձևի վերածելու համար, չորս կետից բաղկացած պահանջների են առաջադրում և առանձին գրությամբ պարտադրում Ս. Էջմիածնի միաբանության ընտրունել նրանք, Այս նպատակով հատուք մարդ են ընտրում, Կարապետ Ամդեցի Տիգրանակերտի եպիսկոպոսին, որ իրենց պահանջների գրությունը Ս. Էջմիածնին տանի ու միաբանության ընդունել տա, այլև Կարնեցու ընտրությունը բեկանել տա:

Այս չորս կետերից առաջինն այն էր, որ ներսայինները (այսինքն նորընտիր կաթողիկոսի կոռակիցները և Զաքարիայի հակառակությունները), որոնք բնակություն էին հաստատել Վեհարանում, դուրս գան այստեղից և միաբանաց սենյակները տեղափոխվեն: Մյուս երեքով պահանջում են, որ առանց ազգայինների հավանության կաթողիկոս չափանիկությունը կաթողիկոսը խորհրդականներ ունինա և նրանց հավանությամբ գործի, Մայր Աթոռի հաշինիները ազգայինների ստուգմանը ենթարկվեն և, վերջապես, Մայր Աթոռի նախրականները Կոստանդնուպոլսի պատրիարքից ստանան իրենց հրամաններն ու հրահանգները: Վերջը որոշում են, մինչև որ իրենց պահանջները ըրավարակվել, նվազեցն Կոստանդնուպոլսի ազգեցիկ ազգայինների շրջանում կային բավական քանակությամբ անձինք, որոնք գուման էին այս հակառակությանը և պատրաստ էին սիրով ընդունել Ղուկաս Կարնեցու կաթողիկոսությունը, բայց պատրիարքի ու մեծամասնության հանդեպ տածած իր կուլից, չեին համարձակվում իրենց ձայնը լսեցնել տալ:

## V

Կոստանդնուպոլսեցիների պատվիրակ Կաթոպետ եպիսկոպոսը 1781 թվի մարտին հասնում է Ս. Էջմիածնին և ներկայացնում պոլտցիների պահանջները: Միաբանությունը երկու անդամ ժողով է, գումարում և նույն

տմաի վերջն իր պատասխանը պատրաստում: Ղուկաս Կարնեցին կոստանդնուպոլիսցիների պահանջների հետ ծանոթանալով և անձամբ Կարապետ եպիսկոպոսից էլ բացատրություններ լսելով, իսկույն որոշում է իր անձը չեղոքացնել և հրաժարվում է կաթողիկոսական արտաքին ձևավանովից ուներից. այդ օրվանից դադարում է նատել հայրապետական գահի վրա, սրա կողքին մի փոքր աթոռ է զնել տալիս և նրա վրա նստում: Մինչև այդ, գեռ նափիսկոպոսական ձեռնադրություն չէր կատարած. այդ օրվանից էլ սկսած ամենակին չկատարեց: Բացի այս, կարգադրում է բոլոր թիմերում, վիճակներում շարումակել եպիկեցիներում հիշատակել հանգուցյալ Միմեռն կաթողիկոսի անունը: Մինչև իսկ պատրաստ էր Կաթողիկոսարանից դուրս գալ և իր առաջին միարանական սենյակը քաշվել, եթե միաբաններն աղաչելիս շինեին այդ քայլը չանել, որով շափով զսպում էր շրջակա այլազգի իշխանակունմերն և ամազակարարություր ցեղաբնություն հիշատարարում էր. «Ես ոչ եմ կաթողիկոս, այլ մոյն Դուքս եպիսկոպոսն եմ, որպէս էի յառաջ Երթայրք ուրեմն միաբանովին ամբողջ խորհեցարություն»: Կարնեցին գացարձակ հայտարարում էր. «Ես ոչ եմ կաթողիկոս, այլ մոյն Դուքս եպիսկոպոսն եմ, որպէս էի յառաջ Երթայրք ուրեմն միաբանովին ամբողջ խորհեցարություն»: Անձնապես ահա այսպիսի խելացի, իսպահամբույր և հեղահամբույր գործելակերպով է պատրաստականում Կաթողիկոսին պատրաստիցիների գործյանը, գործելակերպ, որը միանգամայն պատրիվ է բերում նրա վեհանձնավորությունը: Գործելու այս կերպով նա չէր ուզում բարդացնել առանց այդ էլ ազգային խառնակ գործյանը և նորանոր անհորժությունների համար դուռ բանալ. նրա համար համայն ազգի շահը, իսպահիցյունն ու ապահովությունն ամեն բանից բարձր էին:

## VI

Գարով Կշմիածնեցիների պատրաստած պատրաստան գործյանը, պեսք է ասել, որ դա կազմված է վերին աստիճանի տրամադրանուն ու իրավաբանությունն: Այդ գործյամբ միաբանովից պաշտպանում է Մայր Աթոռի ու նրա գաղափարի բարերով սրբագրծված իրավունքները: Պատվիրակ Կարապետ եպիսկոպոսի ներկայությամբ միաբանները հայտարարում են, թե «Այնպէս միանգամ ընտրեալ եւ կացուցեալ Ղու-

կաս», նոյնպէս եւ այժմ ընդունիմք, եւ ոչ է ի մեզ եւ այլ բան կամ պատասխանի: Չորս պահանջներից առաջնի առաջ տեղի տալով և բոլոր ներսնայիններին Վեհարանից հանելով ու միաբանական սենյակներում տեղավորելով (ամենքն էլ իրենց լիւկատար հոժար կամքով), դրանով միաբանություն ընդունաց է զնում Զաքարիա պատրիարքի ցանկովից միանցինը՝ իր հակառակորդին միական հակառակարյաններին այլև շտեմանել Վեհարանում, Ղուկաս կաթողիկոսի շուրջը կամբած: Մնացած երեք պահանջների առիթով բացարձակ հայտարարում են, թե «Կանոնադրութիւնը Սրբոյ Աթոռույս հայրապետք լինին եւ ոչ միաբանը, ամէն վանոն հայրապետս մեր պարտի վերահաստատել իրով կոնդակաւ եւ կարմիր կնքով, եւ մեք զլուանցան կընքացուք, եթէ այս կանոնը առանց հայրապետական կնքոյ լինիցին, ի հարկէ անվամբ լինին»: Հետեւաբար, եթե կոստանդնուպոլիսցին կուկաս Կարնեցու ընտրությունը շեն ընդունում, նրա «զօրհնութեան թուղթն լընթեռնում, զանոնն սիշեն, և կաթողիկոս - անուան եւ արժանի շառներով ընտրեալդ ձեր գրեն», էլ ինչպէս են պահանջում, որ կաթողիկոսական աթութիւն կանոնները հաստատվեն, և հոգակացնուած են, թի այս ասմէնեթեթի իմն է: Թող միայնաց հետ համաձայնության գան, կացությունը պարզեն, կաթողիկոսի անունը հիշատակեն, ասպա եւ ասացեալ կանոննեն հանդերձ այլ եաւ կանոնութ գրեսցին կոնդակաւ եւ կնքով»:

Այս բովանդակությամբ մի պաշտոնական դրություն կատվելով, էջմիածնեցիք այլ գրությունների հետ այն ուղարկուած են վերոհիշյալ Պետրոս եպիսկոպոսին և այդ ժամանակ Կոստանդնուպոլսում գտնվող նվիրակներին, հորդորելով նրանց ամեն կերպ աշխատել պատրիարքին ու Համբառամբորդ ազգայիններին հաշտության և համաձայնության բերել: Միևնույն ժամանակ պատվիրակ եկած Կարապետ եպիսկոպոսն էլ վերաբանուած է Կոստանդնուպոլիս: Էջմիածնեցիների ուղարկած թղթերը Կարինից արևմուտք տանող ճամբարարին ընկնուած են ավագակների ձեռնորդ, այնպես որ էջմիածնեցիք ստիպված են լինուած նորից գրել և ուղարկել, որով էջմիածնեցիների պատրաստանը, բնականաբար, բավական ուղանուած է:

Ղուկաս Կարմեցին ինքն էլ իր կողմից գրություններ է ուղարկուած Կոստանդնուպոլիս զանազան ազգեցիկ մարդկանց անունով, հորդորելով խաղաղությամբ վերջ տալ ազգակրծան երկառակությանը: Մինչև իսկ նա առանձին նամակ է գրել նաև Զաքարիա պատրիարքին, հայտնելով, թի որ

հարկէ ժամանակիւ վիճակեցալ ես յայն պաշտօն, այլ գիտեմ արժանագունիդ քան դիս տեղի տալ, միայն թէ հաճեսցիս գալ այսր եւ զծանրագոյնս զայս յանձն արժուվ զլուծ», այսպիսով, բացարձակ հայտարարելով, թէ ինքը պատրաստ է տեղի տալ ավելի արժանավորագույնի առաջ, միայն թէ գըտ տությունը վերանա:

## VII

Այս գրությունները, ինչպես և նվիրակ եպիսկոպոսամերի ու վերոհիշյալ պատվրուակ Կարապետ եպիսկոպոսի բանակոր բացասորդյունները, բավական բարեխար ազգբցություն են թողնում պոլսեցիների վրա, մանավանդ ուժեղ տապահություն է գործում Կարնեցու խոհեմ ու հեղ ընթացքը, որով նաև բոլորովին ձեռք էր քաշել կաթողիկոսական արտաքին ձևականություններից և, կարծես, միայն որպես տեղապահ էր պահում իրեն: Սակայն որքան զիջող էին պոլսեցի աշխարհականները, այնքան արթիվ համառ էր իր դիմադրության մէջ Զաքարիա պատրիարքը:

Այս տարտամ դրությունը շարունակվում է մինչև 1781 թվի գարունը, երբ անակնկալ մի դեպք իրերի ընթացքը բոլորովին փոխում է հօգուտ Հովկաս Կարնեցու: Զաքարիա պատրիարքն այդ ժամանակ արևմտահայերին հուզող հայ-կաթոլիկների նկատմամբ բռնած միանդամայն օրինական դիրքի համար շարժում է կաթոլիկության պաշտպան Ֆրանսիայի և Ավստրիայի դեսպանների զայրությը, որոնք տաճիկ կառավարությունից կորականապես պահանջում են Զաքարիա պատրիարքին պաշտոնանկ անել: Սուլթանը ատիպակած է լինում նրանց պահանջը կատարել, բայց կարգադրում է պատրիարքին պատվով ճանապարհ դնել Բրուսա, իսկ այս տեղի առաջնորդ Հովհաննես Համազանցի հպիսկոպոսին բերել Կոստանդնուպոլիս ու պատրիարք կարգել Այս դեպքը տեղի է ունենաւ 1781 թվի մայիսի վերջին:

Համարանցու առաջին գործը լինում է վերջ տալ Մայր Աթոռի նկատմամբ եղած նախկին դիմադրական դրությանը: Այս ժամանակամիջոցում, Կարնեցու կողմնակիցների թիվը հետզհետեւ բավական շատացել էր և ազգեցիկ ազգայիններից ոչ էլ դեմ չէր: Ինքը՝ Հովհաննես պատրիարքն էլ համարիտ էր հաշտությանը, այսպես որ շուտով նոր պատրիարքի նախագահությամբ Կոստանդնուպոլում ժողով է գումարվում, որով Հովկաս Կարնեցու կաթողիկոսությունը, որով Հովկաս Կարնեցու հոգուր իշխանությունը պաշտոնապես ճանաշում է բոլոր արևմտահայերի վրա: Միայն այս բոլորից հետո Հովկաս Կարնեցին

նորից բազմում է հայրապետական գահի վրա, իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս զանազան կողմեր կոնդակներ ու այլ պաշտոնական թղթեր ուղարկում, կաթողիկոսական բոլոր արտաքին ձևերը գործածում, եպիսկոպոսական ձևանապրություններ կատարում և այնու Հովկաս Կարնեցու մեկուսանալով ու կաթողիկոսական արտաքին ձևականություններից ձեռքը բաշելը տևում է մոտ տաս ամիս:

## VIII

Հովկաս Կարնեցու կաթողիկոսությունը տևում է մոտ քսան տարի (1780—1799 թ. թ.): Այդ ժամանակաշրջանում Անդրկովլասում մեծամեծ իրադրություններ են տեղի ունենաւ:

Ամենից նշանավորն այս եղելություններից ուղական զորերի կարճատև թափանցումն էր Անդրկովկաս, որի մասին երկար խոսել ենք 1949 թվի «Էջմիածին» ամսագրի հունվար-փետրվար համարում տպված Հովկասի եպիսկոպոս Արղությանի մասին գրած հոդվածում: Ինչպես հայտնի է, այդ գործում մեծ դեռ են խաղացել Հովկասի Արղության ու մեծանուն Հովկանի եպիսկոպությունը: Խնդիրը վերաբերում էր Պարսկահայաստանի արատագրությանը ուղական գենքի միջոցով, որը ուղարկան արքունիքով առաջ էր քաշել մեծացոր իշխան Գրիգորի Պոտյումկինը: Խնդիրի հաջող լուծման, համար Պոտյումկինն անհրաժեշտ է համարում, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից էլ մի դիմում ուղարկվի եկատերինա կայսրունու: Հովկաս կաթողիկոսը, որը եղակար տարիների ընթացքում անձամբ իր վրա էր զգացել պարսկական անարդ ու դառն լծի ամրությունը ծանրությունը և պահանջված դիմումն ուղարկում Պետերուրուդ, խնդրելով հայ ժողովրդին շուտափուցիթ ազատել պարսկական զծից, բայց իր կողմից ոչ մի պարտականություն հանձն չի առնաւմ երկրում ապատամբություններ առաջացնելու ուղղությամբ նաև մերթ տեսնում էր, որ կարծես ազատության ժամանք մոտ է, մերթ էլ հուսափելում էր, տեսնելով, որ գործնականապես ոչ մի քայլ չէր առնվում, չնայած որ հայերի կողմից թե՛ մթերքներ են պատրաստվում և թե՛ զգալի թվով զինված ուժեր, ուստաիկան զորերի Անդրկովկաս մտնելը դուրսացնելու համար: Այդ պատճառով էլ Կարնեցին շատ զգուշավոր քաղաքականության է հետևում, անմիշական բռնավորների ցասումն ավելի ևս շըռքութելու համար: Այս մասին նաև շատ պարզ համարացնում է Հնդկահայերին, որոնցից մեկը՝ Շահամիր Սովորացնանը, առանձին գրությամբ մի տեսակ կշտամբում է Կար-

նեցուն, թէ երևի համարիք ընդ ծառայութիւն աղբագեցաց եւ ոչ սիրէք զագատութիւնն։ Կարնեցին նրան գրած պատասխանի մեջ, ի միջի այլոց, Հայտնում է. «Թայլ լինէր թէ օքնեալիք այժմ յայս կողմանս գայիր եւ շրջագայէիր ի Զուղայու մինչեւ ցաստ եւ յայլ կողմանս՝ յոր գոն ազդ մեր. եւ ականատես վերահասութեամբ իմանայիր զկացութիւնն մերազնէից եւ զանօնականութիւն եւ զբունութիւն իշխողացն. եւ ինքնին կնքէիր թէ այս դիտմանցոյ յառաջանալ ոչ լինի. ապա թէ հնարաւոր ից յառաջանալն, միթէ միմա՞ղ իցեմք, որ ի տարապանաց զերծանիլ շկամիցիմք. Զկունք որսացեալք ի ցանցս, եւ թուզնք ըմբռնեալք ի վարմս, շանան զերծանիլ, ապա ո՞րքան եւս առաւել բանականք բաղձամք ազատության. սակայն զի այժմոյս կարի դժուարին է առ մեզ և վտանգաւոր յոյժ, վասն որոյ երկուց շարեաց զփութքն ընտրել պիտոյ է»:

## IX

Հիրավի, շատ ու շատ դառն էր մի այսպիսի խառնաշգոթ ժամանակ Ասմենայն Հայոց Կալմողիկոս կնենել և ժողովրդի դրության համար պատմության առաջ պատասխանատու համարակիլ Այդ պատճառով, մենք ամենի ու ամենի պատկառանքով մենք լցվում դեպի Կարսի Կարնեցու անձնավորութրունը, որը, ըստ ժողովրդական ասածիլածքի, աչք ծրաց արակ իր կաթողիկոսության ընթացքում մի լավ օր տեսնելու և միայն զարմանալ կարող ենք, որ նա Մայր Աթոռի ներսում ընդարձակ գործունեություն ցուցաբերեց, որի մասին խոսք կլինի քաղաքական արտաքին դժմորակ հանգամանքները Համառոտակի շարադրելուց հետո:

Կատարյալ անիշխանություն. էր տիրում Պարսկահայաստանում, ճիշտ Խորենացու ապածի պես՝ Այր զարամք ելանէր տիրել աշխարհի։ Պարսկաստանի կենտրոնական իշխանությունը վերացած էր. Ամեն մի գավառ, ամեն մի նահանգ կառավարվում էր իր սեփական խանով կամ սարդարով. Սրանք միմյանց դեմ շարունակ կոփներ, նույնիսկ պատերազմներ էին մողում իրենց կալվածներն ընդարձակելու համար. Հաղթողը ժամանակավորապես հզորանում էր. պարտվեղը՝ տկարանում, մինչև որ նորից սուսանում մեն Ուրմիայից եկած ներքինուն ու իրենց նախկին պաշտոնները գրավում. Թեպես այստեղ, Երևանում, Ժամանակավորապես կարճատև հանգստություն է հաստատովում, բայց Հայաստանի հյուսիս-արևմուտքում այս նույն ժամանակաշրջանում կոփներ ու պատերազմներ են տեղի ունենում վրաց Ճերակի թափակորի, Խալտյաց գավառի պետ Ուման խանի և օսմանյան սահմանակից կուսակալի միջև. և երկու տարի, 1785 և 1786 թվերին, Հայաստանի այս մասի ժողովուրդը ուրի տակ է տրվում:

տուժում այս սարսափեկի արհավրալից դրության ժամանակ. — Հայ ժողովուրդը, որը ոտք տակ էր գնում, տրորվում, կոտորվում կամ լափառւուն գեպրում փափչում, գաղթում իր դարավոր հայրենիքից. ժողովուրդը զրկվում էր իր ունեցվածքից, իր անասունից ու արյուն-թրտինքով մշակված արքիներից. Հայունի է, որ այս բոլոր ներքին պատերազմների ու կոփների ժամանակ, երկու հակառակորդ կողմերին մթերքները մատակարարութը հայ ժողովուրդն էր, որն օրենքից գուլա էր դրոված Ավելացնենք, որ հենց ինքը՝ Մայր Աթոռն էլ հաճախակի հավասարաշափ տուժում էր այս արհավիրքներից. Մի քանի օրինակները բերենք քաղաքական անցքերից՝ մեր սամանները հաստատելու համար:

Հայտնի է, որ Մայր Աթոռուն անմիշականության գոնիվում էր Երեւանի սարդարի իշխանության տակ և հեծում նրա բափ-անտանելի լծի ներքո. Հազիկ էր մի քանի տարի կարգատես խաղաղություն հաստատվել, որ ահա նորից շփոթություն է քննկում սարդարի պալատում. պալատականները սպանում են Ղուլամ-Ալի խանին ու հաջորդ նստեցնում նրա 12-ամյա եղբայր Մահմադ խանին, որին կնության են տալիս Ուրմիո խանի այրի կնոջը, սրան կարգելով խանամակալունի, հետո բերված մի ներքինու հետ միասին. Բայց Մահմադի քերին, Շամիդին աղան, քուրդ ցեղակետը, ցանկանում է խնամակալությունն իր ծեռքը վերցնել և մի նոր արյունահեղություն առաջացնել, բայց Ղուկաս կաթողիկոսը միշամտում է, հանգստացնում և ցավալի գեպերի առաջն առնում:

Քիչ հետո, երկու բեկեր, Ալվագ ու Քասըմ, որոնք Հյուսեյին սարքարի ժամանակ բարձրաստիճան պաշտոններ ունեին, բայց նրա հաջորդի ժամանակ դրանցից զրկվել, նորից գրուս են բարձրացնում և փառնունեցու առաջ բերում, մինչև որ սպանում մեն Ուրմիայից եկած ներքինուն ու իրենց նախկին պաշտոնները գրավում. Թեպես այստեղ, Երևանում, Ժամանակավորապես կարճատև հանգստություն է հաստատովում, բայց Հայաստանի հյուսիս-արևմուտքում այս նույն ժամանակաշրջանում կոփներ ու պատերազմներ են տեղի ունենում վրաց Ճերակի թափակորի, Խալտյաց գավառի պետ Ուման խանի և օսմանյան սահմանակից կուսակալի միջև. և երկու տարի, 1785 և 1786 թվերին, Հայաստանի այս մասի ժողովուրդը ուրի տակ է տրվում:

Հաջորդ 1787 թվին պատերազմ է ծագում

վրաց Հերակլ թագավորի ու Գանձակի խան Իբրահիմի միջև։ Առկաին մնացած պատերազմը նորոգվում է Հաջորդ 1788 թվին, տեղում երեք ամսի շափ։ Հերակլը Գանձակը չի կարողանում վերցնել, բայց երկիրն ավերում է ու գերիներ և ավարտ տանում հնար։

Նույն միջոցին Երևանի Մահմադ խանը կուի է բռնվում Հիշատակված Իբրահիմի հետ, նրանից կուում Հին-Նախիջևան քաղաքը և միացնում իր տիրապետությանը։ Նույն Մահմադ խանը դուրս է գալիս Բայազետի տաճիկ կուսակալի դեմ, որն իր գորքով Բագրեմուրից իշել էր Արարատյան գաղտ, մինչև Երասխ գետի ափերը։ Մահմադը հաջողությամբ քշում է նրան, ինքն էլ մըսնում Ազաշկերտի դաշտը և մի քանի հայրական գյուղեր բոլորումին ավերելով, վերադառնուած է Երևան։

Ահա այսպես, այս մի քանի տարվա ընթացքում հայ ժողովորդն աննկարագրելի նեղություններ ու տառապանքներ է քաշում իր բնիկ Հայրենիքում իշխող մահմերական բոլոր բանականների ձեռքից։

Դրույթյունն ավելի է վաստանում 1790 թվին, Երևանի Մահմադ խանը վախենալով, որ տաճիկների կողմից կարող է իրեն վտանգ հասնել, վազօրութ իր ամբողջ հարատությունն ու թանկագին զարգերն ուղարկում է Խոյ, ի պահ այնտեղի Հյուսելին խանին։ բայց երբ Կարձեցյալ վտանգը չի երևում, իր ուղարկած վանձերը հետ է պահանջում, սակայն մերժում ստանում։ Մահմադը զարյանալով, դիմում է Հյուսելին խանի վրա և իր սեփականությունը պատերազմով հետ առնում, այլև Հյուսելին խանի եղբայր Զաֆարը ուղարկուի խանին իբրև պատանդ իր հետ բերում։ Մի քիչ անց, Մահմադը հավատացած լինելով, որ Խոյի խանի հետ ունեցած ջին բարեկամությունը մերահաստատված է, պատանդ Զաֆարը պահ խանին ազատում է արձակում, Վերջինս պատանդ եղած ժամանակ ծանոթանում է Մահմադի ձեռքի տակ գտնված զինվորական ուժի հետ և այն շափազանց թույլ համարելով, 1790 թվի գարնանը Հյուսելինի հետ Խոյից շարժվում է և ուղղակի Երևանի վրա դիմում։ Մահմադը երկուշից փակվում է Երևանի բերդի մեջ, իսկ իր ստորադադրությալ իշխանավորներն չեն այս ու այն կողմ են ամրանում։ Մայր Աթոռն էլ իբրև ամրոց, շրջապատված լինելով բազմաշխատ Սիմեոն կաթողիկոսի կառուցած

Հաստահեղուց պարիսպներով ու աշտարակներով, ապաստարան է դառնում մահմեդական խառնիճաղամճ զինվորականների համար, որոնք ավելի շատ վանդակ կողոպուտվ և թալանով են զբաղվում, քան նրա պաշտպանությամբ։

Երկու խանների Երևանին ու Ա. Էջմիածնին մոտենալու տամայապի մեջ է գցում Ղուկաս Կարնեցյուն։ Բացի քաշած նյութական անթիվ նեղություններից, նա դժվարին դրության մեջ է ընկնում իր բոնելիք դիրքի համար։ Մայր Աթոռն անմիջականորեն ենթարկվում էր Երևանի խանին՝ սարգարին։ ուստի Մահմադ խանը, իբրև անմիջական իշխանակալոր, բերդից հրահանգներով ուղարկում Ղուկաս կաթողիկոսին, որ Անիի, թե որևէ կերպով օգնություն ցույց տա իր թշնամի Հյուսելին և Զաֆարը ուղարկին։ Մայր Աթոռի կողմից այս վերջինները հայտնում են նրան տեսակցության, չնայած որ հենց այդ օրերին նորագավթից մինչև Փարագար գալով, իրենց հանդիպած բոլոր հայ գյուղերը հրո ճարակ են դարձրած լինում, Ա. Էջմիածնի շրջակա կուսանաց երեք վանքերն էլ իսպառ կողոպտած ու Մայր Աթոռի անասուններից ևս բազմաթիվ տավար և ոչխար քշած-տարած։ Կարմեցին նրանց պատասխանում է, թե «Եւս մեր ընդ ձեզ հաստատուի է», բայց հրաժարվում է տեսակցության գնայի, պատճառաբանելով, թե անշնանութիւն ամրոցիս չէ ի ձեռս մեր։ Այսպիսի Կրիստիկական րուգեին կարծես հրաշքի նման մի բան է պատահում։ Ինչ-ինչ պատճառներից դրվագած, արշավանքի եկած խանները վերադառնում են Խոյ, միծամեծ մնանքու պատճառած յինելով հայ բնակչության ու Մայր Աթոռին, ոչ միայն որ թշնամաց անտի, այլ եւ երկրացի աւագանկարաս սրբկաւոցն։ Նրանց հեռանալուց հետո, Երևանի, Մահմադ խանը նորից արշավում է Նախիչևնի վրա, ասպատակի ժմանելով ճանապարհով հանդիպած բոլոր հայ գյուղերու։ Այս ժամանակաշրջանի ժամանակին է, որ Կարնեցյուն դրում է, թե ութունը վանորայք եւ եկեղեցիք կողոպտեցան եւ աւերեցան, ինչ մասնակունք նողին գերեցեալ ցիր եւ ցան եղեն եւ որք մնացեալը են, այնոքի եաւ օր աւուր կողոպտին եւ ուսնակում լինին։

(Հարութակելի)

## ԾՈՎԱՆԿԱՐԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՎՈԿԻ

(Իմ հուշերից)



յլազովսկին ծնվել է Թիոդոր սիայում 1817 թվին։ Նրա հոր անունն է եղբակ Կոստանտին, մորը՝ Հովհաննես։ Նա հայտնի է եղել Ռուսաստանում «Մովանկարիչ Խվան Կոստանդինովիչ Այվազովսկի» անունով։

Այվազովսկին մանկությունից սիրել է նկարչությունը և աշքի է ընկել իր նկարչական բացառիկ ընդունակությամբ, ուստի և գնացել է Պետերբուրգ և ընդունվել Գեղարվեստական ակադեմիան, որի ուսման ընթացքն ավարտել է մեծ հաջողությամբ 1833 թվին։ Հաջորդ 1834 թվին նա գնացել է արտասահման, աշխատել է Խտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Անգլիայում և Իսպանիայում։

Հոռմում նա նկարել է իր «Փոթողիկը», «Թատրո», «Մովանեն շերեզների նավակը» և «Խապրի կղզին»։ Նա մասնակցել է 1843 թվին Փարիզի գեղարվեստական ցուցահանդեսին և պարբռատրվել։ 1848 թվին ստացել է «Կենդանագործության» (Ժանօնուս) պրոֆեսորի կոչում։ 1874 թվին Խտալիայի Ֆլորենցիա բաղադրում նա կազմակերպել է իր նկարների ցուցահանդեսը և ձեռք է բժիշկ համանակուստական հոչակ, իրու վարպետ ծովանկարիչ։ Արժանի են ուշադրության և նրա երկու մեծ նկարները՝ «Ճրճեղեղը» և «Աշխարհի ստեղծագործությունը», որոնք նա նկարել է 1846 թվին, և այլն։

Գանք այժմ իմ հուշերին։

Ես երկար տարիներ ապրելով Նոր-Նախիջևանում, լավ ծանոթացած լինելով Անի քաղաքից գորս եկած ալդ հայ գաղութի կյանքին, վարք ու բարքին, լեզվին, պատմական

հանգամանքներին և այդտեղ գրած լինելով իմ առաջին գրվածքները, որոնց մի խոշոր մասն էլ վերաբերվում են հենց այդ գաղութին, բնականապես, ցանկանում էի և կարելի էի համարում գոնե մի անգամ լինել Դրիմում և իմ աչքով տեսնել այն երկիրը, որտեղ այնքան երկար ապրել էին նախիջևանցիք և հետագայում էլ դեռ երկար տարիներ կապված մնացել նրա հետ իրենց սովորթյուններով, հիշողություններով և հիշատկարաններով։

Լավ շեմ հիշում թե ո՞ր թվին էր, կարծեմ, թե անցյալ դարի 90-ական թվականներին պիտի լիներ, ամառը, երբ որոշեցի իմ այդ վաղինի ցանկությունս կատարել, ուստի և գործերս շտապ՝ վերշացնելով, գնացի թեռությունից։

Երբ ես տեղ հասա, առաջին նվագ իշեանցի հյուրանոցում, որ արդեն մյուս օրը որոնեմ, գտնեմ մի ամեն տեսակետից հարմարավոր սենյակ։ Ինձ հյուրանոցում մատնացուց արին մի տան վերա, որի մեջ սենյակներ էին վարձու տալիս ամառվասեղոնի համար։ Գնացի նայելու Այդ մի ընդարձակ, հյուրակապ ապարանք էր, մեծ դահլիճներով և զանազան մեծության սենյակներով, որոնցից ես ընտրեցի մի փոքրիկ, վայելով սենյակ առանձին մուտքով և այլ հարմարություններով։ Ինձ մի տան հասցե տվին, որտեղ ապրում էին տան տերերը, որ պետք է գնայի ես խոսելու պայմանների մասին։ Գնացի, գտա առնը և զանգը քաշեցի։ Դուռը բաց արեց մի տարեց մարդ, որ իմանալով թե ինչո՞ւ համար եմ եկել, ինձ ներս հրավիրեց, ասելով, որ այդ մասին պետք է խոսել քրոջը հետ և կանչեց նրան։

Դուրս եկավ մի կին, ծիծաղերես և շատ դուրեկան։ Խոսեցինք և շոտով էլ համաձայ-


նության եկանք: Պարզվեց, որ հայ են և Այլ վագովսկիները — տարեց մարդք՝ ծովանկարի Ալվագովսկին է, իսկ կինը՝ նրա բուրը: Ես հայտնեցի իմ ո՛վ լինելու և ի՞նչ նպատակով թեոդոսիա գալու: Նրանք ուրախացան, ստիպեցին ինձ նստել, սուրբ բերին, հյուրափերեցին:

Ահա թե ի՞նչպես եղավ իմ առաջին ծանոթությունը հովակավոր ծովանկարիշ Հովհաննես Այվագովսկու հետ:

Սրբ ես քաշվեցի իմ սենյակը և հանգս-

եղմիածինը, վերջապես, տեսնելով, որ արդեն մի տասնյակ տարի է, որ տեսում է խնդիրը, ինքը լուծում է խնդիրը, իրավունք վերապահով մարդուն ամուսնանալու: Եվ նա շտապում է, ամուսնանում տեղացի մի վաճառականի շատ սիրում և պարկեցա զտեր նետ:

Ծովանկարիշ Այվագովսկին մեծ համբավ ուներ ամեն տեղ, իսկ Թեոդոսիայում երե խաներն անգամ ճանաշում էին նրան և նրա ընակարանը: Նա ունեսր մարդ էր համարվում: Սև ծովը թեոդոսիայի ափերին կազ-



Այվագովսկու հայրը՝ Կոստանդին  
(Նկար Այվագովսկու)



Այվագովսկու մայրը՝ Հոփիսիմի  
(Նկար Այվագովսկու)

տացա, առաջին այցելություննա, որ ես արի, եղավ ծովանկարչի մոտ գնալը: Նա իր քրոջ հետ չեր ապրում, այլ առանձին, իր սեփական տանը, իր կնոջ հետ: Նա երկու անգամ էր ամուսնացել: Նրա առաջին կինը լուտերական անգլուհի է եղել, որից նա ունեցել է, կարծեմ, շորս աղջիկ, որոնց շորսին էլ կինն ամուսնացրել է օտարազգիների հետ: Եվ սուհասարակ, կինն իր ամուսնուն չի սիրել, չի սիրել և նրա աղջականներին, աղջն ու եկեղեցին: Նա մինչև անգամ թշնամացրել է երեխաներին իրենց հոր հետ:

Ծովանկարիշը, վերջապես, զգվել է և ապահովանի խնդիր և հարուցել եղմիածնում: Խնդիր լուծումը շատ ճգճգվել ու երկարել է, որովհետև կինը չի ուզեցել, լուտերական հոգեմոր իշխանությունն էլ կնոջ կողմն է պահել:

մում է մի կիսաբոլորով ծոյց, որի կիսարուորակ ափերին գոյացել է մի կիսաբոլորակ փողոց, որ քաղաքի ամենալավ, ամենագեղեցիկ մասն է կազմում: Սհաւ այդտեղ, ծովի եզերքին շնչված էր և նրա չեմ ասում տունը, այլ երկհարկանի, բարձր պատշգամբով վիւան, որը շեշտակի նայում էր զեպի ծովը, որի ալիքները սիրում էր հանգուցյալը: Նա սիրով ընդունեց ինձ իրեկ արդեն ծանոթի և ծանոթացրեց ինձ կնոջ հետ: Մենք դուրս եկանք, նստանք պատշտամբ և զրուցի բռնվեցինք հին հին դարերի հիշատակներից, իր մանկության օրերից, մինչև որ սև սուրբը մատուցին, որը կինն էր պատրաստել զրիմի եղանակով ինչպես որ հպարտանարով հայտնեց ծովանկարիչը: Սուրբն, իրավ, շատ լավն էր, արժանի էր պատրաստ-

ղի գեղեցկովթյանը, ես վեր կացա, որ գնամ: Նա ինքն էլ վեր կացավ, ձեռքս բռնեց, ուշադրովթյանս հրավիրեց տեսարանի վերա.

— Եղբա՛յր, երախտիք չին հասկանալ: Խնդրեցին, թե գնա՞ Պետերովուրդ: Գնացի: Արկաթուղին շիտակ քաղաք, ներս բերին: Ի՞նչ անեն, որ լավ լինի, — ասում էր նա ցալած սրտով, — Հենց առաջին հրթին իմ սիրուն տեսարանս փշացրին. երկաթուղուն հարկավոր շենքերը շիպ-շիտակ իմ տանս առջևը շինեցին....

Դուրս եկա և մտա պատկերասրահը, որ կից էր վիլային, բայց երկար շմնացի, մի թեթև նայեցի և թողի մյուս անգամված արդ շատ կար, մանրամասն նայելու համար հարմարություն չկար:

Դուրս եկա: Նախաճաշելու ախորժակ չէր մնացել, նոր միայն պատիմատով սովոր էի խմել: Ուզեցի քաղաքի այդ լավագույն կիսաբոլորակ փողոցով մի ծայրեծայր զբունք կատարել, ծովի օգր ներշնչել, տեսնել ի՞նչ կա, ի՞նչ չկա: Բայց դեռ իմ ծանոթ հյուրանոցին չէի հասել, որ պատահեցի իմ երկու բարեկամներին՝ Լազարյան ճեմարանի նախկին աշակերտ Խաչատուր Հովհաննիսյանին, որ գրում էր մեր թերթերում «Ծովյան» կեղծանունով և դրիմցի Թեմենցյանին, որ ապրում էր Ռուսովում և հայոց լեզվի մասնավոր դասեր էր տալիս: Շատ ուրախացանք և միասին քաղցր զրոցելով կատարեցինք այն գրունքը, որ ես մենակ պիտի կատարեի:

Բարեկամներս եկել էին Սև ծովի սառնորակ շրերում լողանալու Պետք է նկատել, որ Ղրիմի ափերին թառած բոլոր մեծ ու փոքր քաղաքներում էլ լոգարաններ կան, բայց ոչ մի տեղ այնպիսի հարմար լոգարաններ չկան, ինչպես որ թեռողոսիակում: Այդտեղ ծովափինյա մասերը այնքան խոր չեն, այնպես որ՝ երբ իշնում ես ջրի մեջ, գեռ բավական տարածություն պետք է առաջ գնաս, որ խոր տեղերին հասնեն, և հետո, որ գիշապորն է, ջրի տակը քար չկա, այլ ավաղ է և փափուկ ջրաբույս: Չեմ խոսում արդեն բուռն մակընթացությունների և տեղատվությունների մասին, որոնք այդտեղ շատ ավելի խաղաղ են կատարվում: Ես եղել եմ և Ալուպկայում, Յալտայում և Գուրգություն և նրանց համեմատությամբ եմ ասում:

Բարեկամներից բաժանվելուց հետո, ես մտա խանությաներից մեկը՝ տեղի մի քանի լուսանկար գնելու խանութպաննը Շկարայիմս էր: Երբ վերաբարձա սենյակս, հարցը, թե ի՞նչ ազգ է կարայիմը: Պատասխանեցին թե Հրյաներ են, միայն ուրիշ դավանովթյան: Նրանք ապրում են միայն Ղրիմում: Նրանց

թիվը շատ չէ, ընդամենը մի տաս հազար հոգի: Պարապում են առևտրով, ունենոր մարդիկ են, լավ տներ ունեն:

Մյուս օրն առավոտյան կանուխ վեր կահար, գնացի լոգարան սառը անապական շրերում լողանալու, քանի որ արել ճառագայթները չեն սաքացրել չուրը: Ախորժակով լողաց և լոգարանում քաղված պարաների սահմաններում, և դուրս, խոր տեղերում: Վերադարձա տունը, թեյ խմեցի Ղրիմի տաք ինալազով (կալաշ) և գնացի ծովանկարչի պատկերասրահը, կամ, ինչպես ասում էին Թեռողոսիայում՝ «Գալերեա», ինչպես խոսք էինք կապել բարեկամներիս հետ, որոնք արդեն այնտեղ էին: Ժամը 11-ր էլիներ: Ծովանկարիչն էլ եկել էր, և, նըստած իր սովորական տեղում, նկարում էր: Շատ մարդ չկար:

Պատկերասրահը մի շատ մեծ, ընդարձակ ղահիմ էր, ինչպես ասում են, երկու լուսավորությամբ, այսինքն երկաշը, իրար վրա մեծ ու փոքր լուսամուտներով:

Դահլիճի պատերը գարդարված էին Վարպետի գործերով, մեծ ու փոքր նկարներով, բայց այնպիսի վարպետությամբ դասավորված, որ բոլոր նկարներն էլ հավասարաշափ լուս էին ստանում: Դահլիճի ճակատին կախված էին երկու մեծ նկարների մեջ ծովանկարչի ձեռքով քաշված իր ծնողների՝ Կոտաննոնի և Հովհաննեի փոքր նկարները, այնպես որ երբ դահլիճ էիր մտնում, հենց առաջին նկարները, որոնք աշքի էին ընկնում, նկարչի ծնողների նկարներն էին:

Մուտքից դեպի աշ, դահլիճի խորքում, շինված էր մի բեմանման բարձրություն (էստրադա), որտեղ նստում էր ինքը և նկարում: Այդտեղ էլ գրված էին նրանկարական գործիքները:

Ես մոտեցա բեմին և հարգանքով բարեկեցի նրան: Նա վեր կացավ, իշալ ցած, բարեկամները են նրան ծանոթացրի իմ երկու բարեկամների հետ: Իմանալով, որ Թեմենցյանը դրիմցի է, նա հարց ու փորձ արեց նրա ծնողների և այլ հանգամանքների մասին, հետո առաջ ընկալ և սկսեց ինքը ցույց տալ նկարները, որ մեզ համար մեծ պատիվ էր: Նա ամեն նկարի առաջ չէր կանգնում, այլ միայն կարեռները և անհրաժեշտ էր համարում նշել, թե ո՞ր նկարը ե՞րբ է նկարված, ո՞ր թվին և ո՞րտեղ, որ ցույց տված լինի, թե ի՞նչպիսի հետեւությամբ է զարգացել իր հաջողությունը: Հայտնի է, որ նրա առաջնորդ զարգացումն է եղել 50—60 թվերին:

Երբ հասանք նրա ծնողների նկարներին, նա ծիծաղելով ասաց, թե՝ «Իմ այս նկա-

բում՝ արվեստը համակված է եղել որդիական սիրո զգացմոնքով։  
— Ես երեկ շատ որոնեցի այս պատկերը խանութներում, բայց չգտա, — ասացի հս:

եկած հայրենակիցներիս։ Մնաք բարյավ, աճախիսեցեք, ես ուրախ կլինեմ։ Խսկ դուք մնացեք, — դարձավ նա ինձ, — ես մի երկու խոսք ունեմ ձեզ հետ խոսելու բարեկամներս գնացին։



Խրիմյան Հայրիկը եջմիածնի շրջակայքում  
(Նկար Այվազովսկու)

— Այս պատկերները տնային բնույթ կրելով, շուկա չեն հանվել, բայց հս ձեզ մի զույգ կտա՞մ։

Նա վերջացրեց ասելով.

— Այս էլ ձեզ մի պատիվ, իբրև հեռվից

Բարձրացանք բեմը և նստեցինք։  
— Երեկ հս առիթ ունեցա տեսնել մեր Ս. Ասրդիս եկեղեցու երեցփոխ պ. Ներսիս Մաղերովին, — ասաց նա, — և խոսակցության մեջ հայտնեցի ձեր գալու մասին ո-

բոշ նպատակով, ինչպես որ դուք մեզ ասել էիք: Արդեն լսել էր ձեր մասին: Նա հաղորդեց ինձ և այն, որ դուք ուզում էիք նյութեր հավաքել եղարործ՝ Գաբրիել վարդապետի մասին և որ դուք արդեն տպագրել եք նալրանդյանի մասին: Ես հանձնելով ձեզ այս երկու վավերականները, կուզեի, որ դուք ճշտեիք Նալրանդյանի գրածները իմ եղարործ Գաբրիելի մասին իր «Երկու տողի մեջ: Ես չեմ ասում, որ իմ եղարյուս սխալներ չեմ բայց բայց սխալներ անելը մի բան է, հոգին ծռելը՝ ուղիղ բան: Իմ եղարյուս սխալներ արել է, ովք է աշխարհում անսխալականը, բայց հուգայություն և վասակություն՝ երբեք...»

Ես պատասխանեցի մոտավորապես հետեւալը.

— Նախ նյութեր հավաքելը մի բան է, գրելը՝ մյուս բան: Բայց խոստանում եմ, համենայն դեպքում, ձեր տվածները տպագրել իմ ժանոթություններով: Իսկ եթե հաջողի, որ և գրեմ ու տպագրեմ, միայն և միայն ճշշտությունը կգրեմ. միամիտ եղեք, ես անձնական շահեր չունեմ, Հայրենիքի շահը բարձր է ինձ համար ամեն ինչից: Իմ կարծիքով, Գաբրիել վարդապետը իբրև վարդապետ չափեք է առանց կաթողիկոսի հավանության բանագնացություն վարել պետության և Խալիքի հետ, չպետք է դպրոց բանար, առաջնորդության պաշտոն ընդուներ, իրավունք ունենար նախիջևանի եկեղեցական գոմարները ծախսել մի ինչ, որ Խալիքուն դպրոցի վերա, որ ոչ մի գույն չի ունեցել, չպետք է տարին մի անգամ մի առանձին մարդ ուղարկեր թյուզքիա, հայ աշակերտացուներ հավաքելու ու քերելու դպրոցի համար: Իմ կարծիքով, Գաբրիել վարդապետը պիտի հասկանար, որ ինքը կրակի հետ կ խաղում:

Ես նյութեր հավաքեցի Գաբրիել՝ վարդապետի մասին, որի համար մի անգամ էլ ես ուշի ուշով կարդացի և Նալրանդյանի «Երկու տողը» և եկա այն եղարկացության, որ նա ուսից ցգում մեղավոր է, ուստի և ցգեցի կենսագրությունը, և եթե գրած էլ լինել, էլ ը կարող այն ժամանակները տպագրված լինել: Իսկ ինչ վերաբերում է այն երկու թըղթին, որ նա ամ տվել էր ինձ, դրանցից մեկն արդեն հայտնի է և օգտագործված, իսկ երկուրդը վավերական չէ, այլ ուսանավոր ողբ, որը գրել է Գաբրիել վարդապետ Այվազովսկին, Խալիքան դպրոցի փակման առթիվ: Թեև դա մի առանձին գրական արժեք չունի, բայց պատկանելով հայտնի գրաբարագետ և Միքիթարյան վաճառքի «Բազմաթիվ» հայութի հիմնադիր Գաբրիել վարդապետ Այվազովսկու գոշին, կարող էր հետաքրքրիր լինել

մեր ընթերցողին, ուստի և ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել այն, ինչպես որ և խոստացել եմ հանգուցյալին:

### ՅԱԼԻԵՐԱԿՍ ԽԱԼԻՊԵՍՅՆ ՈՒԽՈՒՄՆԱՐԱՆԻՆ

Խկայք եղբարք մեր պատուական, (աւա՛ղ) Նստինք ի կոծ, յողը, յեղեր,  
Զի Խալիպյան մեր վարժարան (աւա՛ղ)  
Կործանեցաւ հիմն ի վեր:

Հանդիսարանն այն ճոխաճեմ (աւա՛ղ)  
Հայ հանճարոյ և շանից,  
Ահա դարձաւ ի կոյտ նրսեմ, (աւա՛ղ)  
Բոյն ըղջիկանց և ճայից:

Յիշեմք ըզմեր քաղցրաձայն, (աւա՛ղ)  
Եիշեմք զաղօթս ըղձակաթ.  
Զիա՞րդ լըռեաց այն ամենայն, (աւա՛ղ)  
Ողբք արդ լսին յուահատ:

Սաղարթագեղ ծառոյ նըման, (աւա՛ղ)  
Որ բողբոչէ գարնայնի,  
Եւ այս ծաղկէր պերճ վարժարան, (աւա՛ղ)  
Ումամբաւ կարգաւ գեղանի:

Հանգոյն ձագուց մեք ծիծեռանց, (աւա՛ղ)  
Ճըռուղելով խրնդագին,  
Զանմեղովթեան և գիտովթեանց, (աւա՛ղ)  
Ընդունէաք զամբ անգին:

Շընչեալ յանկարծ խորշակ հողմոյ, (աւա՛ղ)  
Հետ և նախանձ արամեան,  
Խամբեաց ըզգեղ ծաղկանցըդ քոյ, (աւա՛ղ)  
Ըզմեղ արար ցիր և ցան:

Նոր դու լիցիս ազգիս լազօնք, (աւա՛ղ)  
Զերդ զողբալին մեր Անի,  
Ճորշափ կեցցեն հայոց մանկունք, (աւա՛ղ)  
Ցորչափ այդ ծով ծածանի:


Մյուս օրը կիրակի էր Մենք խոսք էինք կապել լինել թեողոսիալի Ս. Սարգսի մայր եկեղեցում պատարագին: Գնացինք: Ժամը դեռ նոր էր սկսել թեմենշյանը և Շովյանը դեռ չէին երևում: Նախապես ես աշը անցրի եկեղեցու շենքը դրսից: Դա միու միշին մեծովթյան և բարձրովթյան եկեղեցի էր: Եկեղեցին սակավիկ մի փլած է եղել և վերանորդվել է ինամող և հասկացող մարդու հսկողովթյամբ: Պահպանված են եղել ճարտարապետովթյունը, մեծովթյունը և հին գոնելով, ըստ հնարավորովթյան, և փոքրիկ խաչքարերը և մինչև անգամ հողն ու քարերը:

Պատարագը սկսվեց, և ես մտա եկեղեցի եկան և իմ քարեկամները: Ցարօրինակ էր

այդ եկեղեցին և իր ներքին տեսքով, սեղանը իր աջ և աջակ խցերով փոսումն էին, իսկ երեցիում իր մոմավաճառության սեղանով և աղոթողների բազմությունը՝ վերը բարձրության վերա: Աղոթողները կանգնած չէին, այլ՝ նստած աթոռների վերա: Պատարագը վերջացավ, նշխարդ բաժանեցին: Ես ծանոթացա երեցիուս ներսես Մազերովի հետ, մի բարեկիրթ և համակրելի անձի հետ, ծանոթ նրիմի գաղութահայության պատմության և

նկարիչը պատկերասրահում լինում: Բարձրացանք էստրադան, ողջունեցինք և նստեցինք, նա ուրախ կլինեմ, կիսունք հնից նորից: Դուք, երկում է, լոգարանից եք գալիս, ուրեմն սուրբ չէք խմել Գնանք վերև, նստենք պատշգամբումս, ծովի հոտը շնչենք, ես սիրում եմ: Տիկինը մեզ սուրբ կտա, կարծիմ նոր պաքսիմատ է պատրաստել:

— Ա՞յ, այդպես, շուտ շուտ եկեք, ես ուրախ կլինեմ, կիսունք հնից նորից: Դուք, երկում է, լոգարանից եք գալիս, ուրեմն սուրբ չէք խմել Գնանք վերև, նստենք պատշգամբումս, ծովի հոտը շնչենք, ես սիրում եմ: Տիկինը մեզ սուրբ կտա, կարծիմ նոր պաքսիմատ է պատրաստել:



Շովանկարիչ Հովհաննես Այվազովսկի  
(ինքնանկար)



Այվազովսկու կինը՝ Աննա Սարգսյան  
(նկար Այվազովսկու)

նրա թողած պատմական հիշատակարաններին: Նա իմ ուշադրությունը հրավիրեց եկեղեցու և մի ուրիշ հանգամանքի վերա: Ապարզ երևում էր, որ Ղրիմի եկեղեցիներն էլ հնումն ունեցել են երկու վարագույր՝ մեծ և փոքր, որ ապացուցում է Նոր-Նախիջևանի եկեղեցիների օրինակով, որոնք բոլորն և այսօր երկու վարագույր ունեն: Ես ուշադրություն հմ դարձնում այդ մանր հանգամանքի վերա, որովհետև մի ժամանակ մեղանում վեճ է տեղի ունեցել այդ մասսին և վեճն էլ կապված է եղել այդ եկեղեցու վեցանորոգող հայտնի մանկավարժ-գրականագետ Խորեն Վարդապետ Ստեփանեի հետ:

Մյուս օրը պատահեցի Մազերովի հետ լոգարանում և միասին գնացինք ծովանկարչի մոտ նրա պատկերասրահը: Ընկերս լավ դիտեր, թե ո՞ր օրերն է հատկապես ծովա-

ֆնացինք և բազմեցինք ծովանկարչի վիլայի պատշգամբում: Ճշմարիտ, շատ լավ էր, ծովից մեղմիկ քամի էր փշում, առավոտյան արմի շողերը ցոլում էին ջրերի մեջ և ալիքները, ինչպես ասում են, ծափին տալով, լափին տալով, գալիս, խփվում եղերքին և մոմուալով փշովում, հետ քաշվում:

Ծովանկարիչը տեսնելով, որ ես տարված եմ Աև ծովի գեղեցկության հմայքով, բացագաւշեց:

— Հը, ինչպե՞ս է: Աչքը սիրեմ, հենց այդ է, որ ինձ կյանք է տալիս:

Ներս մտավ տիկինը, ոտից ցպլում սպիտակներ հափած, ընազելի, փողփողենի, շողշողենի...», ինչպես ասում է Գրիգոր Նարեկացին: Մազերովը վեր թռավ տեղից, ողջունեց նրան և ձեռքը համբուրեց. ես էլ հետեւ նրա օրինակին:

— Նոքա, աղվենիկս, հյուրեր եմ բերել, հյուրասիր մի մի ֆինջան դահվեռվ, բեզ հատուկ սիրելովիամբ, պաքսիմատով:

Տիկինը ծիծաղեց և գնաց սուրճ պատրաստելու:

— Այս ոսկի մարդուն այ ո՞րտեղից դուր, Մազերով, մազերով է, ինձ պես անմաղ չեմ:

— Գնացել էի եկեղեցի, այնտեղ ծանոթացա, պատասխանեցի հս:

— Եկեղեցին փլած է եղած, նորոգվել է Խորեն վարդապետ Ստեփանեի ձեռքով: Այս Խորեն վարդապետ Ստեփանեի աշքը սիրեմ: Եթե նրա պես ունակ վարդապետներ շատ ունենայինք, ազգերս այսպես խեղ չէր լինիլ: Ս. Խաչ վանքը կնստեր, վանքին մաքրովյանը նայիրի: Քաղաք կուտար, եկեղեցիների բարեկարգությունը տեսնեիր: Գիտությամբ, լեզու-բերնով մարդ էր, օմիքամբ բյուզայուլը... Օտարների առաջ պատիվներս ավելցուց:

Ես ինք աշխատում էի քիչ խոսել, աշխատում էի թողնել, որ այդ երկու հին դրիմցիները խոսեն, որ կարողանամ հին շիրակացիների, անեցիների շումն ու Հոգին զգացած լինեմ: Նոր-Նախիջևանցիք այնքան օտարազգի բառեր են մուծել իրենց ճկում բառառի մեջ, որ անախորժ ժառգոն է դարձել այն:

Այսպիս գուրեկան ժամանակ էի անցկացնում ես Թեոդոսիայում: Իմ երկու բարեկամների՝ պատվարժան ծովանձարշի և Մազերովի շշանոած: Շատ հաճախ լինում էր նամանավանդ պատկերասրահում, ծովանձարշի մոտ, որ շատ աիրում էր Ղրիմը, իր Թեոդոսիան. նա հատուկ սիրում էր իր մեծերից լսած պատմությունները Ղրիմի կյանքից, սիրում էր յան և գրավոր աղբյուրներից հավաքածները Նոր-Նախիջևանի «Հայութավուրքի հիշատակարան»ից և «Կոնդորակուգրից»: Ես համեմատում էի նրա պատմածները գրավոր աղբյուրներից քաղվածներիս հետ և լրացնում, շտկում: Այսպես, ես գրել եմ, օրինակի համար, «Հայոց բերքի պատմությունը», որ ամբողջովովյամբ համարյա թե նրա պատմածից եմ բազել: Նա է ինձ ցուց տվել ոհմերի դափուին:

Թերում եմ այդ պատմությունը:

«Ղրիմում նախիջևանցոց նախահայրերի դիմավոր բնակության տեղը լինում է Թեոդոսիան Կամ Կաֆան, որի բերքի («Ֆրանկ Հիսարի») մոտ գաղթավան հյուերը առաջին անգամ հաստատել էին իրենց բնակությունը: Թերով, Ֆրանկ հիսարին, շատ փոքր է եղել և նրա մեջ տեղ չի եղել նորեկների

բնակության համար, ուստի և հայերը բնակվել են բերդից դուրս, հին բերդի արեւելյան կողմը:

Իրենց նոր բնակության տեղում 44 տարի ապրելուց հետո, հայերը նկատելով, որ քաղաքը իր բերդով պատսպարված է, իսկ իրենց բնակության տեղը բոլորովին բաց է ու անպաշտպան, մտածում են և հայոց թաղը: ամրացնել պարիսպներով: Այդ նպատակով նրանք պատրաստություն են տեսնում քաղաքի պարիսպների պես մի նոր, ամենի հաստ ու բարձր, ավելի մեծ տարածություն: Բնողության մեջ պարիսպներով պարիսպ քաշել և շըրջապատել հայոց թաղը: Որոշվում է, որ մեծատում հյայերից ամեն մեկը, որ պիտի մասնակցեր շինության գործին, հանձն առներ պարիսպի մի մասն շինելու և նախապես դրա համար հարկավոր ատաղձը բերեր հավաքեր նշանակված տեղը: Դրա համար իրավունք էր արվում յուրաքանչյուրին իր անոնով կոչելու իր շինած պարսպի մասը և իր հյահատակարանը գրեզու նրա վերա: Դրանից էլ, առամ են, առաջ է եկել Պրիմի հայերի մեջ նրանց միջյանց հարատությունը շափելու տարօրինակ սովորությունը: Կաֆայի հյայերը երբ որ կամեցել են ասել, թե այս մարդը այսքան հարստության տեր է, ասել են, թե այս ինչ մարդը կարող է քաղաքի ամրությունների համար այսքան բաշտ տալ:

Հայերը մեծ թափով կապչում են շինության գործին և կարճ միջոցում գլուխ են բերում ահագին պարիսպ, որ ամեն մի 20, 40 և 60 սամեն տարածության մերա ունենում է մի աշտարակ (բարգ-բուրջ): Կիր բոլոր երկայնության վրա 9 դարպան: Այդ նոր պարիսպը, որը ակաված լինելով ծովափի հարավային կողմից, անցնում, գնում է եղել լեռների վերաբույժի դեպի նույն ծովափի հյուափային կոլմը, պաշտպանում է եղել քաղաքը ամենավտանգությունը կողմանակուր կողմից և կողշած է եղել «Հայոց բերդ»:

Մովանկարչի և ներտան Մազերովի բերանից ես առաջին անգամ բազել եմ Ղրիմի հյայերի կրտսերածի և գանազան վողմեր ցըլելու կրտսատ պատմությունը, որ հետագայում ընդլայնելով գրավոր աղբյուրներից, տպագրել եմ իմ «Նոր-Նախիջևան» և նոր-Նախիջևանցիք գործի մեջ:

Բերում ենք այստեղ և այդ պատմությունը, իբրև ծովանկարչի և Մազերովի պատմածները:

«Հայերը գարվոր վիճակի մեջ ապրում են Ղրիմում մինչև 1475 թիվը, երբ գալիս տիրապետում են Ղրիմին (Կաֆային) օսմանցի

թյուրքերը։ Օսմանցոց սովորան Մեծեմմեդը, որ նոր միայն առել էր Կոստանդնուպոլիսը, կամենում էր տեր դառնալ և Ղրիմին։ Այդ նպատակով նա ուղարկում է իր հզոր նախատորմիղը դեպի Ղրիմի Հարավային ափերը։ Նախատորմիղի գլխավոր Ահմադ Կետիկ Կապուտան փաշան, Համենելով Կաֆայի նախահանգիստը, նախապես թնդանոթներն ուղարկում է դեպի բաղադրի պարիսպները և ոմբակում, հետո զորք է իջնցնում ցամաքը ու շրու տեղ մարտկոցներ շինելով, շարումակում է ոմբակոծել բաղադրը ծովից և ցամաքից։ Երբ այսպես հինգ օր շարումակ տևում է ոմբակոծությունը և ամուր պարիսպները չդիմանալով, վիշելու նշաններ են ցուց տալիս, շինովացի իշխանները դուրս են գալիս քաղաքից և հանձնում փաշային բաղադրի բանալիները, նախապես խոսք առնելով նրանից, որ նա շիվասի բաղադրացիներին և ձեռք չի տա նրանց ունեմ-շունեմին, ստացվածքին։

Ահմադ փաշան սակայն մտնելով բաղադր, գրժում է իր խոսքը և ընդհանուր կոտորածի և կողոպուտի է, ենթարկում բոլորին և գլխավորապես Հայերին։ Նա առաջ սեր է ցուց տալիս և հաճախ խնչուքի հրավիրում իր մոտ Հայ առաջավորներին, քաղցր խոսում նրանց հետ-և առաջարկում թողնել իրենց կրոնը և Հարել մահմետականության և համոզվելով, որ այդ լինելու բան չէ, մտածում է վրեժինդիր լինել։ Մի օր էլ նա մեծ խնչուք սարքում և համոզում է նրանց առանց զենքի գալիս Երբ խնչուքը վերջանում է, հրավիրյանիրը դուրս են գալիս ապարանքից, որ գոնվում է Խակել ղագոսիի մոտ և մկտում են վայր իշնել բարձր առնդուլքով, նա հրամայում է դաշինքներին մեկ մեկ սպանել նրանց և մարմինները ծովով նետել։

Այսուհետև պակասում է հայերի թիվը Ղրիմում։ Ապանվածը սպանված է մոտած, զերված՝ գերված և կենդանի մասցածներից էլ մի խոշոր մասը թողնում, փախչում է գանապան երկրներ—Լեհաստան և ուրիշ տեղեր։

Մի օր էլ ամենքս, ընկերությամբ, ծովանկարչի առաջնորդությամբ, գնացինք տեսնելու «Հայոց բերդի մասցորդները, որտեղ այդ ժամանակները «կարանտին» էր։ Մեզ կարանտինի մարդիկը ընդունեցին պատվով, որովհետև մեզ հետ էր և ծովանկարիչ Այվազովսկին, որը թեոդոսիայի ամենապատվավոր, ամենահարգելի բաղադրացին էր։ Ճիշտ որ պարիսպներն ահապին են եղել և իրենց հաստությամբ, և բարձրությամբ։ Ենողների հիմնացիների հիշատակարանների տե-

ղերի միայն ծակերն էին մնացել, խաչերն իրենց վերա գոված հիշատակարաններով քանդված, հանված էին։ Երկու կիսավեր մատուներ տեսանք, մի փոքրիկ խաշազարդ հայ եկեղեցու հետ միասին, որն առաջներում փլված է եղել, հետագայում վերանորոգված և դարձած ուղղափառ եկեղեցի։ Մի առատաջուր աղբյուր էլ տիսանք հին հայ արձանագրությամբ։ Վերադարձին, ծովանկարիչը մեր ուշագրությունը դարձեց մի հին, շատ բարձր աշտարակի վերա, որ մնացած էր համարվում շենովացիների ժամանակից և այդպես էլ կոչվում էր «Զինովական աշտարակ»։

Ինձ շատ հետաքրքրում էին Խալիբյան դպրոցը և դրա շուրջը ծագած խնդիրները։ Նոր Խախիչանում շատերը կային, որ սովորել էին այդ դպրոցում, դրանցից մի խողոր մասը կիսավարտ էին, մի շնչին մասը լիակատար ավարտած, Գաբրիել վարդապետն էլ դպրոցի հիմնադիրն է եղել և գրել է այդ դպրոցի միակողմանի պատմությունը։

Դպրոցը գոյություն է ունեցել, համեմատաբար, շատ կարծ ժամանակ և փակվել է, պահելու միջոցներ շւնչներու պատճառով։ Արդ, Գաբրիել վարդապետ Այվազովսկու դպրոցի փակման առթիվ գրած ողբից երեխում է, որ նա դպրոցի փակման պատճառը համարում է հեռն ու նախանձը։ Այդ մի պարզ ակնարկություն է, ուղղված բարեհիշշատակ Միքայել Նալբանդյանի հիշատակին, որովհետև հանգույցալն է եղել, որ առաջ «Հյուանափայլում», հետո էլ իր ժերկու տղջում բուն բողոք է հարուցել նրա ապօրինի գործողությունների դեմ։ Խակ թե ի՞նչ ապօրինի գործողություններ են եղել, որ գործել էր Գաբրիել վարդապետը, այդ մասին մենք արդեն վերը հիշել ենք։ Մենք շենք երկարում, մեզ համար կարենք է իմանալ միայն այն, թե ի՞նչպես էր վերաբերքում։ Հանգամանքներին ծովանկարիչ Այվազովսկին։

Արդ, մենք գնացինք տեսնելու Խալիբյան փակած դպրոցը։ Ծովանկարիչը մեզ լընկերացակ, ասելով, թե ինքն այն օրից, երբ փակվել է դպրոցը, պյառս շի եղել այն կողմերում։ Պարզ է, ուրեմն, որ նա այդ դպրոցին նայում էր իր եղբոր աշքերով։ Եվ նրա այդպիսի վերաբերմունքը մեզ համար հասկանալի էր։ Պետք էր ճանաչել նրան։

(Հարուեակելի)

## ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՐԱԳԼԻՒԻ ՏԱՐԵԹՎԻ ՃԵՏՄԱՆ ՀԱՐՑԸ



ոմարագիտական աշխատություններից հայտնի է, որ ո՞չ մի դարագլուխ գիտականորեն հիմնավորված չէ, քանի որ նրանցից համարյա թե ոչ մեկը կապված չէ այս կամ այն ժողովրդի պատմական կյանքում տեղի ունեցած իրադարձության հետ։ Վերցնենք, օրինակ, աշխարհի ստեղծման դարագլուխը։ Աղեքսանդրիական տոմարագետների հայով, Հովհան Աֆրիկացու վկարությամբ, ստեղծագործության դարագլուխը՝ 5500 տարի է նախ քան մեր էրան։ Հովհանների մոտ աշխարհի սկիզբը համարվում է 5508 տարի։ Սկալիքները, հին տեքստերի ուսումնասիրությունների վրա, որոշում է 3950 տարի։ Պետրոնիուսը համարում է 5873 տարի, հրեական պատմաբան Հովհանք Ֆլավիոսը՝ 4163 տարի։ Եվ այսպես, նույն դարագլուխի վերաբերյալ կարելի է բերել տասնյակ տարբեր թվականներ իհարկե, դրանցից ո՞չ մեկն էլ ճիշտ լինել չի կարող, ինչպես անվիճելի ցույց է տալիս ժամանակակից գիտությունը։

Ի՞նչպես է սահմանվել հայկական թվականը։

Հայկական դարագլուխ ժամանելու համար եղել են մի շարք հանգարանքներ, որոնց վրա մենք անհրաժեշտ ենք համարում կանգ առնել։

325 թվին Նիկիա քաղաքում հրավիրված տիեզերական ժողովում քննության դրվեց Զատիկը տոնելու հարցը և որոշվեց Զատիկը տոնել գարնանային լիալուանի հաջորդ կիրակի օրը, որպեսզի բրիստոնեական Զատիկի օրը շհամրնենի հրեական Պատերի օրվա

հետ։ Պահանջ էր առաջացել կազմել զատկան օրերի ցուցակ հետագա տարիների համար։ Այդ աշխատանքն իր վրա վերցը Անդրեաս Բյուզանդացին, որը կազմեց, այսպիս կոչված, 200-ամյա աղյուսակը, որը և գործածվել ակավեց 353 թվից։ Անդրեասն իր աշխատության մեջ թույլ էր տվել մի սխալ։ Նրա աղյուսակը կազմված էր այնպես, որ ավարտվելուց հետո, նորից սկզբից գործածել անհնարին էր դառնում։ Եթե նա կազմած էր 209 տարվա համար, ապա առանց փոփոխելու կարելի կլներ այդ աղյուսակը աշխատանքի դժու նորից։

553 թվին Անդրեասի ցուցակը լրացավ, և հենց այդ ժամանակ նկատեցին, որ Անդրեասը բաց է թողել 9 տարի, որի պատճառով, 553 թվականից սկսան շփոթիլ տոնիք և ամենայն արհեստք տոմարականք։

Քրիստոնեական եկեղեցին չեր կարող անտարբեր գտնվել նման խառնաշփոթության հանդեպ, և այդ պատճառով համարեցին հմուտ տոմարագետներից և աստղաբարձրին հերից մի համագումար Աղեքսանդրիա քաղաքում։ Այդ համագումարի մերաբերյալ կան բազմաթիվ տեղեկություններ Հայկ։ ՍՍՌ Գետական մատենադարանի հին հայկական ձեռագրերում է թերում ենք միայն տոմարագետ Հովհաննես Սարկանվագի տոմարական աշխատություններից մի հատված։ Ժողովական յԱղեքսանդրիա, ի մայրաքաղաքն եղի պատացոց, արք անուանիք եւ իմաստասելք ի յունաց եւ յասորոց, ի հումայեցոց եւ յեփիպտացոց,

1, ա) «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի Վարդապետի Գանձակեցւու», Թիֆլս, 1909 թ., Վենետիկ, 1845 թ., և բ) Ա. Արքահամբան, «Տիեզերագետություն և տոմար Անանիա Շիրակացու», Հայկետհարա, Երևան, 1940 թ.

թուով կե (35): Եւ առաքեն յօրուաաղէմ եւ կորեն ինքեանս զՓենէհեղ՝ որ ազգաւ երրայցի էր եւ հաւատով քրիստոնեայ՝ եւ լինին ԼԶ (36): Եւ գլուխ իմաստասիրաց եւ առաջնորդն էաւս, որ բռն ազգաւ աղեքսանդրացի էր եւ հաւատով քրիստոնեայ: Կարգեցին եւ հաստատեցին բոլորակ ՇԼԲ (532) ամաց, որ կոչի Շ.հակ (500-հակ), Եւ գլուխ բոլորին հաստատեցին զԴ (4) ապրիլի ամայու: Եւ ումի յինքեան բոլորակն գընթաց արևագամն, որ Ի.հակ (28-հակ) կոչի եւ նահանջից նահանջ: Եւ գընթացս լուսնու թժ.ամակ (19-հակ) կոչեն...<sup>2</sup>:

Ինչպիս տեսնում ենք, այդ համագումարը կանգ է առնում մի մեծ ժամանակաշրջանի, այն է՝ 532-ամյակի վրա, որը պարունակում էր թե՛ արեգական և թե՛ լուսնական շրջանները (28-ամյակ և 19-ամյակ, քանի որ՝ 28×19=532): Այդ համագումարը նույնպիս կազմում է հաշորդ 532 տարիների համար զատկական օրերի ցուցակը, որը հետզետե, 532 տարին լրանալուց հետո, պիտի նորից կրկնվեր:

Այդ համագումարի ժամին խոսվում է Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 1973 ձեռագրում. «Տեսկ այր ումն ի ճշմարտագումից տառմնասիրաց յեփիպտական մայրաքաղաքէն Աղեքսանդրիա, էաս անուն կոչեցեալ, ծայն արկեալ առ ինք հաւաքէ զարս կորովամիտա՝ զԱղդայ ի Գամբաց, զՓենէհեղ ի Ճըկաստանէ, զՑոհան յԱրաբիա, զԱնրդ ի Մակեդոնիէ, զԳիգան յԱսորոց, զՈթիլ յԵփորիա եւ այլ ԼԶ (36) արամք հաւատարմագ. Խորհին գտանել զգարձ արեգական եւ լուսնի ի միում ամի: Եւ գտանեն զայս լիալ ի Ի.թ. թժ. արեգակս յամա ՇԼԲ. Եւ ասացին թուական հայոց ժ, որով սահմանեցին ի շարժիլ թուականին երթեալ թ եւ այլ ժթ, ժթ եւ Դ.ից ապրիլի ի գտանել զմուտ Շ.հելինա:

Այս ձեռագրում բերված փաստը համընկնում է Հովհաննես Սարկավագի հայորդած տեղեկությանը, բայց մի տարբերությամբ, որ Գեւ ասացին թուական նայոց ժ» վերշին չունի: Եվ դա ճիշտ է, որովհետև անհնար է որ սահմանվեր հայկական թվականի հարցը մի համագումարում, ուր չկային նույնիսկ Հայաստանի պատգամավոր-ներկայացուցիչները:

Նման ժամանակաշրջան ընդունում է և մի ուրիշ հականաժողով, որը հենց նույն տարիներին գումարվում է Իսկոն թյուզանդացունահագահությամբ և որը նույնպիս կազ-

մում է զատկական տոների ցուցակը 532 տարիների համար:

Բայց և այնպիս, կազմված երկու ցուցակներում նկատվում են որոշ տարբերություններ: Էասի հանձնաժողովը որոշում է՝ եթե գարնանային լիալուահնը համընկնի շարաթ օրվա հետ, ապա հաջորդ օրը, կիրակին, Զատիկի շպիտի համարել, այլ հետաձգել? օրով և Զատիկիը տանել հետևյալ կիրակի օրը, իսկ նոդունի գլխավորած հանձնաժողովը որոշում է հենց հետևյալ օրը, կիրակի, տոնել Զատիկը:

Հայերից պատգամավորներ չեն մասնակցում հանձնաժողովներից և ոչ մեկում, բայց Հայկական ծկեղեցին տեղյակ էր՝ այդ աշխատանքներին, Երկրում տեղի ունեցող դեպքերը նրանց հնարավորություն չեն տալիս զրադվել տոմարական խնդիրներով: Հետագայում, Մովսես կաթողիկոսի օրոք միայն նրանք զրադվեցին զատկական տոնների հարցը կարգավորելու խնդրով:

Հենվելով Հովհաննես պատմարանի (կաթողիկոսի) «Պատմութիւն Հայոցի անդեկության վրա, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը իր Ալգապատում» աշխատության մեջ գրում է հետեւյալը. «Արդ, 561-ին կաթուղիկոս էր Հովհաննես Գագեղյան, 564-ին ական Սուրեն մարգարանի հարատահարությունները, 571-ին մարավ Վարդանի շարժումը, 572-ին եղավ կաթուղիկոսին փախուստը, հնտևաբար պատմության համաձայն է ըսել թե մինչև որ Գագեղյան պետք եղած տեղեկություններ ստանար, տոմարական խնդիրներով զբաղվելու առիթ շկրցավ վանել, և զատկի տոները շարունակեցին առժամյակերպություն կամ տոնի կամ տոնական տոմարի գործը միանգամ ընդմիշտ կարգադրել, և Հայոց ծկեղեցվո համար հաստատում կանոն մը ունենալ, առանց պետք ունենալու շարունակ օտարներու կարտանալ...»

«Էասիան շրջանը կազմված էր արդեն, բավական էր զայն Հայ ծկեղեցվո հարմարացնել, տարեկան տոներն ալ ըստ այն կարգադրել, բայց պետք էր որ հոռմեական ամիսներով կազմված ցուցակը հայկական ամիսներու վերածվեր, միանգամայն հոռմեական նահանջավոր տարիներու հաշիվները փոխանցվեին հայոց շարժական տոմարին նահանջ. շունեցող տարիներու վրա, համաձայն Հայկա շրջանին հաշիվներում...»

<sup>2</sup>. Տե՛ս Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի հետ, № 1495, Հովհաննես Սարկավագի «Տոմարը»:

«Հաստ այսմ ի հրամանեն մեծին Մովսեսի քերթողք և գիտումք արվեստին գումարվեցան Դվնա հայրապետանոցը, գոր կրնանք իրը Դվնա Գ. Ժողով ընդունիլ և 584 թվականին նշանակել։ Հայոց գիտումներուն գլխավորն էր Աթանաս Տարոնեցի, Գլակա Ս. Կարապետի մայրավանքին առաջնորդը, որ էր տեղյակ տոմարի ամենայն ազգաց և առաջնորդեց բոլոր հաշվական գործողությանց։ Ժողովին կողմեն նախադասվեցավեալ էասի ցուցակը» (էջ 571—572)։

584-թվին Դվինում հրավիրված ժողովը որոշեց հավանություն տալ էասի աշխատանքներին և ցուցակին։ Դրա պատճառները պարզ են, քանի որ այն ժամանակ օրիա սկիզբը հաշվում էին նախորդ օրվա երեկոյան ժամը 6-ից և եթե շարաթ օրը տեղի է ունենաւ լիալուսին, ապա ճիշտ կիներ Զատիկ համարել 7 օրից՝ հետևյալ կիրակին՝ շշփոթելու համար։ Եռինի ցուցակում հանդիպում ենք 532 տարում 4 նման դեպքերի, որոնք և կոչվեցին «ծուազտիկ»։

Մովսես կաթողիկոսի ժամանակ էասյան ցուցակները հայկական իրականության հարմարեցնելու գործը հանձնարարվեց Աթանաս Տարոնեցուն, Գլակա Ս. Կարապետի մայրավանքի առաջնորդին, որը և կատարեց այդ աշխատանքը։

Պատմիշների և ուսումնասիրովների մի մասը սխալմամբ Դվինի ժողովի գումարման թվականն են համարում 574-ը։ Իրավանում, Դվինի այդ ժողովը գումարված է եղել ո՛չ թե 574-ին, այլ 584-ին։ Այդ ապացուցիւմ է հետևյալ փաստերով։

1. Էասյան շրջանի ընդունելու տարում հին հայկական տոմարի ամանորը տեղի է ունեցել հովհիս Յ-ին, իսկ եթե ժողովը գումարված լիներ 574 թվին, ապա նա կիներ հովհիս 6-ին։

2. Զեռագրերում մատնանշված է, որ ժողովի տարին նահանջ տարի էր ըստ Հովհյան առմարի, իսկ դա կարող էր լինել 584-ին և ո՛չ թե 574-ին։

3. Դվինի այդ ժողովի տարում Հայտնության օրը տեղի է ունեցել հին Հայկական տոմարով արաց ամսվա Յ-ին, որը նույնապես կարող էր լինել միմիայն 584 թվին։

Ինչպես տեսանք վերևում, Անդրեասի 200-ամյա ցուցակները սկսեցին գործադրվել 353 թվականի սկզբից և պիտի ավարտվեին 552-ի վերջում, այսինքն 553-ի սկզբից պիտի սկսեին գործադրել էասյան ցուցակները։ Բայց Աթանասի առաջարկով Դվինի ժողովում որոշվեց 584 թվականը համարել էասյան շրջանի Յ-ին տարին,

նկատի ունենալով, որ Անդրեասյան ցուցակները վերջացել են 551 թիվի վերջում։

Կանգ շառնելով տոմարական մանրակրկիա հաշիվների վրա, մենք այստեղ կրերենք միայն մի փաստ, որը ցույց է տալիս, որ Աթանասը, իրոք, հարցին ճիշտ մոտեցում է ունեցել։ Դա հետեւյալն է։

Հստ Հայկական հին տոմարի, 428 թվականը հանդիսացավ ապոկատաստագի տարի և, հետևարար, այդ տարին համարվելով նահանջ տարի կամ, ինչպես անվանվում է Հայկի շրջանում՝ «Նահանջից նահանջ» տարի, հերթական համար շպիտի ունենար, այսինքն բաց պիտի թողնվեր Այլ խոսքով ասած, հաշիվը պիտի տարվեր 425, 426, 427, և, 428-ը հաշվելով որպես նահանջ, 429-ը անվանել 428 և այն։ Այդ հանգամանքը, որը բնորոշի է հին Հայկական տոմարին, հեղինակները մոռացության էին մատնել, իսկ Աթանասը, որպես հմուտ տոմարագետ, ճշտությունը պահպանելու համար, նկատի ունեցավ և մեկ տարով հետ տվեց բոլոր հաշիվները։ Դվինի ժողովը նկատի ունենալով այդ բոլորը, որոշեց 584 թվականը համարել էասյան շրջանի Յ-ին տարին և ու թե Յ-ը դրա ժողովում էլ որոշվեց 552-ից սկսել հայկական դարագումը։

Միջնադարյան հայկական մի շարք պատմիշներ լըմբռնելով Աթանասի աշխատության մեջ հաշվի ընդունված նրբությունները, կոպիտ թվարանական հաշիվներից ելնելով ( $352+200=552$ ), հայկական դարագումի տարեթիվն են համարում 553-ից սկսած։ Այդպիսիներն են՝ Ստ. Ասողիկը, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին և ուրիշները։

Հայոց պատմության ժամանակագործությունը ճշտելու համար, վերև բերված հաշիվը պիտի անպայմանորեն նկատի ունենալ։ Տոմարական այդ սկսվեց ցույց տալու համար, բերենք հայկական պատմիշներից մի-երկու օրինակ։

Պատմիչ Արիատակես Լաստիվերտցին, խոսելով արծագի խավարումներից մեջի մատին, գրում է. «Ցամաքանան արաց, յաւուրն ուրբաթու, ի գառնայ աւուրն, էր եւ թուականին մերոյ չորեքհարիկ ութսուն երկու ամ»։ Հատով տոմարական աղյուսակներով գտնում ենք, որ այդ տարին արաց ամսվա սկիզբը համընկել է Հովհյան տոմարի օգոստոսի 10-ին և տարվա վերադիրն է եղել ԺԴ (13) և յոթիներյակը՝ Ա (1)։ Այդ տվյալներից ելնելով, որոշում ենք, որ օգոս-

ոռոսի 1-ին եղել է շորեքշաբթի և հետեարար 10-ին կլինի ուրբաթ: Լուսնի ամսաթիվը կլինի՝  $13+10+7=30$ ,  $30-30=0$ , այսինքն՝ նորալուսին, քանի որ արեգակի խալարումները կարող են տեղի տանենալ միմիայն նորալուսի օրը, ուստի հաղորդված տեղեկությունը միանգամայն ճիշտ է:

Այդ համեմատությամբ, «Տարեգիրը արարեալ Սմբատայ սպարապետի Հայոց» և «Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցոյք» աշխատություններում նույն խավարման վերաբերյալ բերված տեղեկությունները ճիշտ չեն, քանի որ նրանք խավարման տարի են նշանակել 485-ը, որին ոչ օրն է համապատասխանում, ոչ լուսնի ամսաթիվը:

Ժամանակագիր Սամվել Անեցին հաղորդում է: «Երկու եղբարբ, Սահակ եւ Յովսէփ կատարեցան վկայութեամբ, որք իսմայիլացիք էին՝ խոստովանելով զշալր եւ զ՛ըրդի եւ զ՛ըուրը Հոգին՝ ի քաղաքին Կարնոյ՝ յարաց ժե (15), յաւուր եղաքաթուա: Տարեգուկը վերցված է ըստ Քրիստոնեական տո-

մարի և ըստ հայկականի՝ 245: Տոմարական աղյուսակներով գտնում ենք, որ արաց արևովա 15-ը համապատասխաննել է Հովյան տոմարի հոկտեմբերի 20-ին, իսկ հոկտեմբերի 1-ին եղել է կիրակի, ուստի և, 20-ին եղել է ուրբաթ և ոչ թե հինգշաբթի: Տարվա յոթներյակն է է (7): Մխալը ուղղվում է շատ հեշտ կերպով, միայն պիտի հիշել, որ Սամվել Անեցին հայկական դարագում հաշվում է 553-ից, և, ըստ հայկականի, 797 թիվը՝ կհամարվի որպես 246-րդը: Այդ թվականի համար յոթներյակը կինի Զ (6) և հոկտեմբերի 20-ին՝ հինգշաբթի: Այդպիսի օրինակներ շատ կարելի է բերել:

#### Այսպիսով՝

1. Հայկական դարագլխի տարեթիվ պիտի միշտ ընդունել 552-ի սկզբից.

2. Հայկական պատմիչների տվյալները միշտ անհրաժեշտ է ստուգել և ենել այն հանգամանքից՝ թե տվյալ հեղինակը ի՞նչ հաշվով է մոտեցել հայկական դարագլխին:



## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ովհաննեսի բանատեղծություններից հայագիտության մեջ հանրածանոթ է նրա «Բան իմաստութեան ի պատճառու զրուանաց առ ձագն, որ զալօրանոցաւ նորա նոոտղէր քաղցրաձայն, որ կոչի սարիկ» վերնագրով տալլը: Հովհաննեսի այս տաղը պահել է Մարտվանի դպրոցի մատենադարանի մի ձեռագիր աղօթգիրքը: Տաղի տեքստը, դպրոցի վարչության հանձնարարությամբ, արտագրվել և ուղարկվել է Վիճնետիլյան Մխիթարյաններին, որը և Հ. Դ. Ալիշանի կողմից հրատարակվել է 1847 թվի «Բանագլանցուամ»: Հովհաննեսի այս տաղը, Ալիշանից առնելով, երկրորդ անգամ 1944 թվին հրատարակվել է պրոֆ. Մ. Արեգյանը իր «Հովհաննեսի Մարտվագագ Վարդապետ» վերնագիրը կրող հոդվածի հավելմածուամ<sup>2</sup>:

Հովհաննեսի այս քերթվածը առանձնահատուկ ուշադրության է արժանացել և բարձր գնահատվել հայագիտության մեջ: Այսպես, Ալիշանը գտնում է, որ Հովհաննեսի այս տաղը ամեր գրականության մեջ աննման դրվածոց մեկն է»<sup>3</sup>: Պրոֆ. Մ. Արեգյանը Հովհաննեսի այս տաղը համարում է նշանակալից նորություն հայ մատենագրության մեջ: «Ալրկավագ վարդապետի բանաստեղծություններից, — գրում է նա, — մմուա է միայն մեկը՝ «Բան իմաստութեան ի պատճառու զրուանաց առ ձագն, որ զալօրանո-

ցաւ նորա նոոտղէր քաղցրաձայն, որ կոչի սարիկ»: Այս մեծ (188 երկայն տողերով) քերթվածն իր ձևով և բովանդակությամբ մի նշանակալից նորություն է մեր հին գրականության պատմության մեջ: Եթե դա պատահմամբ փրկված լիներ կորստից, մեր նոր մտավոր հոսանքի զարգացման տեսությունը թերի կմնարք<sup>4</sup>: Եվ նա ցավելով ավելացնում է: «Եվ ո՞վ գիտե քանի՞ այդպիսի արժեքավոր բանաստեղծություններ ովազցել ենք»:

Ի տես, «Արթեակահ մի ընդօրինակություն, նոր գրչությամբ, մենք տեսել ենք երաւաղեմի Հայոց Ազգային Պատրիարքարանի մատենագրանի ձեռագրերից մեկուամ<sup>5</sup>:

«Մարթեակահց բացի, հայագիտության մեջ մատունացուց են արմելի Հովհաննեսի երեք տաղերը՝ «Յոհաննեսը քահանայի առ Սարգին վասն տաղիցն», «Նորին վասն միսոյ ողբականին» և «Նորին Յոհաննես առ կոյրե աշեղագրեն և լուսաւոր» վերնագրերով: Հովհաննեսի այս տաղերի մատին տեղեկությունն է հատորի և նույնանու իր ուղարկաններ Սարկավագի գրությունները» հոդվածի մեջ՝ հիմք ունենալով Քեշիշյանի կազմած Զմմանի ձեռագրաց ցուցակը:

Ուկյանի տեղեկությունից երևում է, որ նշված տաղերն ընդօրինակված են Զմմանի մատենագրանի № 195 ժողովածուի մեջ հետևյալ հերթականությամբ:

ա. թ. 136թ, «Յոհաննու սուրբ վարդապետի ասացեալ Բան իմաստութեանը ի պատճառու զրուանաց...»,

բ. թ. 138ա, «Վասն մաշկեկին, յորոյ վերայ թանաքն վայթեցաւ...»,

1. «Բազմավագ, 1846 թ., էջ 221—225.

2. Հայկ. ՍՍՌ. Գիտությունների ակադեմիայի «Յեղեկագիր», 1944 թ., № 1—2, էջ 53—58.

3. Դ. Ալիշան, «Յոհաննեսի պատճեան ի պատճառու զրուանաց առ ձագն, որ զալօրանո-

4. Հայկ. ՍՍՌ. Գիտությունների ակադեմիայի «Յեղեկագիր», 1944 թ., № 1—2, էջ 39.

5. Առաջնորդությունը

6. Այդ ձեռագիրը գրանցված էր № 1887-ի տակ:

գ. (անդ), «Յոհաննու քահանայի առ Սարպիս վասն տաղիցն...»,

դ. թ. 138ր, «Նորին վասն միօսոյ սղաւկանին»,

ե. (անդ), «Նորին Յոհաննու առ կոյրն աղեղագոյն եւ ըստաւր...»<sup>7</sup>:

Զմմափի մատենադարանի № 195 ժողովածոփի խմբին պատկանող հին գրչությամբ մի ձեռագիր, բարեխախտաբար, գտնվեց Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանում, որը բնորոշինական է նույն վերև հիշված բոլոր աշխատությունները, բացի «Սարեակահց» Սակայն, մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ Հովհաննեսի վերև հիշված երեք տաղերի ինդրում Ուկանը բացարձակ թյուրիմացության մեջ է: Նշված երեք աշխատությունները՝ «Առ Սարգիս վասն տաղիցն Յոհաննեսու բահանայի» (Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 7, թ. 91թ—92ա), «Նորին վասն միասոյն ողբականին» (նույնը, թ. 92ա—92բ) և «Առ կոյրն աշեղագոյն եւ լուսաւր Յոհաննեսու բահանայի» (նույն, թ. 92թ—93ա), ոչ թե տաղեր են, այլ Հովհաննեսի նամակները:

Հովհաննեսն իր այս նամակներից առաջինում, որն ուղղված է Սարգիս անունով մեկին, բացարձակ է իր աղեղերի նպատակադրությունը՝ «Առ Սարգիս. Վասն տաղիցն»:

Հովհաննեսի առաջին նամակի մեջ արված մի ակնարկից երևում է, որ նա իր տաղերը գրել է կրոնական աշխատությունների հավելվածում. «Ըստահութիւն կարծեմ եւ ո՛չ ինչ նուսպութիւն երջանիկդ հոչակելով, — գրում է նա, — ամփոփել ո՛չ միայն զաղաթականադ, որ է եւ յառաջացելոյ, այլ եւ զանձառագոյնան, զոր պատճի է առնուլը»<sup>8</sup>:

Հարց է առաջանում, թե Հովհաննեսն իր ո՞ր տաղերը նկատի ունի վերև բերված ակնարկով: Մեր կարծիքով, նա նկատի ունի «Սարեակ» տաղը: Մենք այդ ենթադրում ենք հիմք ունենալով հետակալը. Հովհաննեսի այս նամակը տեղավորված է որպես հավելված «Սարեակի Զմմափի մատենադարանի պղոփքում»: Սկզբում Հովհաննեսի աղոթքներն են, ապա ընդորինակված է «Սարեակը և հետո՝ այս նամակը»: Պարզ է, որ Հովհաննեսի նամակը և տաղը պատճական ձևով իրար մոտ չեն կարող բերվել: Կասկածելի կարող է այստեղ երևալ այն, որ այս նամակը մի տաղի միայն կապակցությամբ չլդրվել, այլ երկու և ավելի տաղերի՝ «Վասն տաղիցն»: Դրա բացարձությունը հեշտ է

տալ, եթե մենք նկատի ունենանք, որ Հովհաննեսի «Սարեակը ձեռագրում երկու տարբեր տաղեր եւ ամարկում» ա) «Յանիմաստութեան ի պատճառս գրուանց...», և բ) «Վասն մաշկեկին, յորոյ վերայ քանաբեն վայրեցաւ»:

Ուշագրության արժանի է Հովհաննեսի միան նամակը, որը վերագրված է. «Նորին (Յոհաննու), վասն միւսոյն ողբականին», Ուրեմն, առաջին նամակը մի տաղի մասին է եղան, իսկ երկրորդը մյուսի, որի վերագրությանը մասին պատահական է («Վասն ողբականին»): Առաջինը, ինչպես տեսանք, «Սարեակահց» է վերաբերում, իսկ ինչի՞ մասին է երկրորդը: Հասել է արդյոք Հովհաննեսի անունով «Ողբք» վերնագրով այսպիսի մի տաղ:

Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի վերև հիշված ձեռագրում մեզ հաջողվեց հայտնաբերել Հովհաննեսի երկրորդ նամականիւմ ակնարկած այդ տաղը: Նա վերնագրված է. «Նորին (Յոհաննու) առ Սարգիս,

Հովհաննեսի այս տաղը բաղկացած է 40 տողից: Տողերի առաջին տառերը ագրոստիկոսով հոգվում են. «Յովհաննեսու բահանայ Սարգսի Մեծի խնդալ Ան կենդանի»: Այսպիսով, և վերնագրում, և մտերի առաջին տառերի ագրոստիկոսում նշված է տաղի Հովհաննեսի հեղինակությանը պատկանելու փաստը: Կամկած լինել չի կարող, որ այս տեղ խոսքն առաջին նամակի վերնագրում հիշված Սարգսին է վերաբերում: Ի դեպ, Հովհաննեսն այդ Սարգսին տոմարի կապակցությամբ գրել է այլ նամակներ ևս, որի վրա մենք կանգ կառնենք իր տեղում:

Հովհաննեսի այս տաղի շափու նույնն է, ինչ որ «Սարեակահց» շափն է, այսինքն՝ այս շափը, ինչ ընդունված է Հայկական անվանել: Տաղը միահանդ չէ: Բովանդակությամբ նա կրոնական է:

X—XIII դարերում հայ բանաստեղծական գրականությունը, ինչպես Հայտնի է, բավականաշատի զարգացած է: Այդ շրջանից մեզ հասած արժեքավոր աշխատություններ շատ կան: Սակայն, մեր կարծիքով, բանաստեղծական իր վարպետ կառուցվածքով, իր շնչով, իր խոհական բովանդակությամբ, Հովհաննեսի այս տաղը միջնադարյան հայ բանաստեղծական գրականության գլուխ գործոցներից մեկը կարելի է համարել:

Հովհաննեսի «Ողբք» մանրամասն վերըուծումը և քննությունը թողնելով տաղերությունը գրաղվող մեր մասնագետների


9. Հայկ. ՍՍՌ. Պետական մատենադարան, ձեռ. № 6, թ. 89ա—91թ:

7. «Հանդէս ամսօրեալ», 1925 թ., էջ 236—237:

8. Հայկ. ՍՍՌ. Պետական մատենադարան, ձեռ. № 7, թ. 91թ:

ուշադրությանը, ընթերցողներին փոքր հնչ ծանոթացնելու համար, մենք անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել միայն շրջա տոռ:

Դեղ կենաց ընձեռեա աշխատելոյն ի յուլովից մահացուցչաց գեղարդութեանց. Առողու ինձ շնորհեա զմախթանաց հմոց իննդիրս առաստաբաշխ եւ ողորմած. Նախ ընկալ փառատրութեամբ, արժանաց զիս մարդասէր ընդ գերակայսն, ի նոյն ձայն գովողաց ըզբեկ օրհնել անլուելի միշտ յաւիտեան<sup>10</sup>:



Մի էջ № 777 ձեռագրի նիշատակարանից

Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագրում Հովհաննեսի «Ողբահ» լուսանցրում գրված է «ԲԿ», որ նշանակում է «Երկրորդ կողմ»: Շարականները, ինչպես հայտնի է, ունեն ութիր ձայն, այսինքն՝ ովքը եղանակ, որոնցից շորաց՝ «Ճայ» են կոչվում: Հովհաննեսի շորացը այս առաջնային գործությունը առաջ է առ պահանջման մեջ առաջնային գործությունը: Հովհաննեսի շորացը առաջնային գործությունը առաջ է առ պահանջման մեջ առաջնային գործությունը:

10. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 7, թ. 90բ—91ա:

դեանց եղանակաւ եւ յարմար բանից<sup>11</sup>: Ուրեմն, Հովհաննեսը ո՞չ միայն բանաստեղծ է եղել, այլև ծայնագրող: Այս կարելոր փաստի մրա հրավիրում ենք հայ երաժշտության պատմությամբ գքաղվող մեր մասնագետների ուշադրությունը:

Կարեւոր է նշել նաև այն, որ Հովհաննեսի այս տաղը վերջանալուց հետո գրված է եղել տասներկու տող ծավալով մի այլ աղոթք-բանաստեղծություն, երկու բառից բաժանագրով՝ «Փոխ ասա»: Ըստ երևույթին, Հովհաննեսի «Ողբահ» գրված էր եկեղեցում երգելու նպատակով, որից հետո փոխ պիտի ասեիր վերջին տասներկու տող բանաստեղծությունը:

Ո՞ւմ է ուղղած եղել Հովհաննեսն իր երկրորդ նամակը, որի մերնագիրն է՝ «Առ կոյրն աշեղագոյն եւ լուսաւոր»: Արդյոք արտեզ նրա ակնարկը նորից Սարգսի մասին չէ՝, որը աշբից կուլը է եղել, բայց մտքից հարուստ, լուսավոր: Մեղ դմվար է առայժմ հաստատապես որեւէ բան ասել:

Ալիշանը Հովհաննեսի անունով հիշում է նրա մի այլ տաղը՝ «Տաղ ի յարորին Քրիստոսի» մերնագրով<sup>12</sup>, որը դեռ չի հրատարակված:

Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի տաղերգուների թեմատիկ ցուցակում Հովհաննեսի անունով գրանցված են երկու այլ տաղեր ևս, որոնց մասին մինչեւ յուս չի նշել հայագիտության մեջ: Նրանցից մեկն ունի ականայք որ եկին ի սուրբ գերեզման վերնագիրը, իսկ մյուսը՝ «Կիւզել մի տեսաք»: Առաջինը, ընդօրինակված է միայն մի ձեռագրում — № 2191, թ. 92 ա: Ծնորորինակելի է լոգատիռու գրիչը 1684 թվին Մերտինում: Երկրորդն ընդօրինակված է մի շաբթ ձեռագրուում (№ 4328, թ. 75 ա—77 ա, 1737 թվի ընդօրինակությամբ, № 3417 (1903), թ. 49—50, XVIII դարի ընդօրինակությամբ, № 5614 (925), թ. 18բ Գրիգոր գրչի կողմից Քանաքեռում (ձեռագիրը 1543 թվի է, բայց մեր վերև հիշելու տաղը ուզ ընդօրինակությամբ է), № 7708 (384), թ. 50ա, XVIII դարի ընդօրինակությամբ, № 8605, թ. 116 ա—117բ, 1676 թվի ընդօրինակությամբ, № 7707 (383), 1611 թվի ընդօրինակությամբ, № 8968 (599), թ. 271 ա—273 բ, 1556 թվի ընդօրինակությամբ, և № 8740, թ. 53 ա, XVIII դարի ընդօրինակությամբ: Վերջին տաղն՝ ունի և այլ վերնագիր՝ «Տաղ», «Տաղ ափնի» եւ գեղեցիկ», «Տաղ ափրոյ հիգիանանութեանց» և այլն:

Այս երկու տաղերից ո՞չ մեկը Հովհաննեսի:

11. Կիրակոս Գանձակեցի, էջ 105:

12. Ղ. Ալիշան, «Յուշիկը», Բ հատոր, էջ 300:

նը լինել չեն կարող. ո՞ւ տաղերի ոճը, ո՞ւ լեզում և ո՞ւ տաղի կառուցվածքը Հովհաննեսինը շեն: Հավանական է, Հովհաննես Սարկավագը շփոթված է Սարկավագ Բերդիկացուկամ Սարկավագ Սալաձորցու հետ, կամ գույց և որևէ Սարկավագ գոշումը ունեցող հեղինակի անձնավորության հետ: Երկրորդ տաղը որոշ ձեռագրերում վերադրված է և Քոչակին ու Կիրակոսին<sup>13</sup>:

Վենեսուրկան Մխիթարյանների մատենադարանում, ըստ Բառարաս նախանի կազմած ձեռագրաց համառոտ ցոցակի, կան Հովհաննեսի հեղինակությամբ Գրիգոր Լուսավորչի, Սահակ-Մեսրոսի և Ներսես Մեծի Ներբողները:

2. Ռոկանյանն իր վերեւ հիշելու աշխատության մեջ մատնացուց է անում Հովհաննեսի անումով մի տաղ ևս՝ «Սարկավագ Վարդապետի է ասացեալ Մարտ լեզ աստուծու»<sup>14</sup>: Վերնագրով: Այդ տաղը պահել է Վենեսուրի Մխիթարյանների մատենադարանի № 797 ձեռագրի տաղարանը: Նա բաղկացած է 54 տեներից, որոնցից Ռոկանը միայն չորս տունն է հրատարակել՝ եթեսար պկրոցից և երկուար վերցից: Անժամանեցու ենք համարած ստորև բերել հրատարակին այդ ժամը:

«Երբ խամցար վասն աշխարհի  
եւ երախտիւք զմարդկան ազգի  
Արբեր բացախ դառն եւ լեզի,  
Առեր ապատակ թթով ի վի,  
Է՞ո՞ թաղեցար գու ի յերկրի,  
Ես խիպն ի սիտն (<sup>?</sup>) շանկանի  
Եւ զիկս աշխարհ ապատնայից (ակիզը):  
«Ի՞մ տէր, արա՞ պատախանի,  
Ես քեզ մեղասոր դայս ասի.  
Զի՞ ո՞վ եմ ես մարդ աղտեղի,  
Համարձակել քո առաջի:  
Բայց ինչ ներեա, ո՞վ հայր բարի,  
Դասեա ի գունդս քո հօտի  
Եւ քեզ պատի ամենայնի  
Այժմ եւ բաւէտ անլուելից (վերջը)<sup>15</sup>:

Զնարած այս տաղի ընդօրինակությունը չկա Հայկ. ՍՍԾ Պետական մատենադարանում և ամբողջական տեքստը շունչներ ձեռքի տակ, առկայն վերև բերված տնելու լեզվին և շափին նայելով, դժվար չէ ստել, որ այդ տաղը եւս Հովհաննեսինը լի-

13. Այս տաղի վրա կանգ ենք առեւ մենք մեր ժողովուրդը և Մոսկվան միշնադարյան Հայ մատենագրության մեջ հոգվածում, որը հրատարակվել է ու. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական համարանի Գիտական աշխատաւթյուններու մէջ 1949 թվին:

14. Հ. Ռոկան, «Հավանանես Սարկավագի գրություններ», «Հանդէս ամսորհայ», 1925 թ., էջ 227:

նեկ չի կարող Հովհաննեսի լեզուն նուրբ բանաստեղծական լեզու է, խոհական-պիլի-առփայական, տեղ տեղ գործ է ածում հունարամ տերմիններ, իսկ վերև բերված տաղի լեզուն ուշ դարերում գործածված չեղու է: Այսուհետեւ, Հովհաննեսի տաղերին հատուկ չէ միահանգությունը: Հովհաննեսին, համբառակը, միահանգությունից խուսափելու համար համախ փոխում է տողի վերջին բառերը: Պրոֆ. Մ. Աբեղյանը Հովհաննեսին վերագրվող այս տաղի հարազատության վրա, հավանական է, այնքան է կամաձեկ, որ ավելորդ է համարել նույնիւմ կանգ առնել նրա մասին:

Խշշան պարզվում է, նշված տաղը պատկանում է Ֆրիկին և թյուրիմացարար է վերագրվել Հովհաննեսին: Այդ տաղն ամրող չափաբակվել է Ֆրիկի բանաստեղծությունների ժողովածուում և ունի ժանդապ առ Քրիստոս Յաղագս տարբեր վիճակաց մեծատան և աղքատի» վերնագիրը<sup>16</sup>:

Հովհաննեսի հեղինակությամբ մատենադիրները հիշում են նրա ներբողները, որոնք նվիրված են եղել Տրդատին, Ներսեսին, Սահակին, Մեսրոտին և Ղևոնդյանց: Կիրակոսն այդ մատին գրում է. «Սա (այսինքն Հովհաննեսը) գրեաց ճառս ներբողականս ի մեծագոր արքայն Տրդատ, ի սուրբ Հայրապետն ներսէս, եւ ի սքանչելի Սահակ և Մեսրոտ, արար շարական Ղեւոնդեանցն հղանակաւ եւ յարմար բանիւ»<sup>17</sup>:

Ղևոնդյանց տաղի, ինչպես և մի քանի այլ տաղերի Սարկավագի հեղինակությանը պատկանելու մասին հիշում է նաև Ստեփանոս քահանան իր ժամանակ շարականացն թէ յումմէ» են երգեալ շափիածո աշխատության մեջ: Նա արդ մասին գրում է.

«Ը Ղեւոնդեանց մանկումքն մին,  
Մեծ Սարկավագն՝ որ Աղքատին.

Զհայրապետացն զուրբը Յակոբին,  
Նուն Յովանէս սուրբ Ակոբին»<sup>18</sup>:

Դժբախտաբար, Հովհաննեսի բոդր ներբողները մեզ չեմ հասել: Առայժմ, Հայտնի է նրա Ղեւոնդյանց ներբողը, որը բարձր գնահատականի է արժանացել Հայագիտության մեջ այն բանի համար, որ ալսեալ մեր մատենագրության մեջ առաջին անգամ առաջայտվել է ցրված Հայ ժողովուրդին ի մի Հայագրից գաղափարախախտաւթյունը. «Հեղմամբ արեան գրեացին Գայ ժողովուրդին, էջ 105:

15. Ֆրիկ, «Բանաստեղծություններ», Երևան, 1941 թ., էջ 247—255.

16. Կիրակոս Գանձակեցի, էջ 105:

17. Հայկ. ՍՍԾ Պետական մատենադարան, Անշ. N. 1424, թ. 280 ա:

քո ցրեալ մանկունս ժողովիա յուրախութին, զվտարեալս տրտմովթեամբ եւ արտառուց յորդահոս բջիխմամբ փրկութեան մերոյ, պարգեւաց մերոց բաշխող»<sup>18</sup>; Պրոֆ. Մ. Աբեղյանը, նշելով Հովհաննեսի ներողի արժեքն այս տեսանկյունով, գրում է. «Սարկավագդ վարդապետի այս աղոթքը շատ փոքր, իր ձևով շատ հասարակ բան է, բայց իր բովանդակությամբ մեծ և վասմ է և անկեղծորեն բխած լինելով իրավանությունից, խորն ազգու է, մանավանդ երբ իր օքազը եղանակով երգլում էր եկեղեցում տառապյալ հավատացյալներից, առանձնապես նրանցից, որ դեռ երկար դարեր գգում են իրենց վարատած լինելը և աչքերը կարուով դարձնում դեպի իրենց բնիկ երկիրը Համաստանն»<sup>19</sup>:

Բայց այնուամենայնիվ, հարց է առաջանաւմ «միթե» Հովհաննեսի, որ «պուստիկոս» մականումն է ունեցել, մյուս բոլոր տաղերը կորել են: Մեր ուսումնասիրությունը պարզեց, որ այդպես չէ: Հայկ. ՍՍԾ Պետական մատենադարանի ճենագրերուամ, մեր կատարած պրագտումների ժամանակ, նախանցյալ տարի, մեզ հաջողվեց հայտնաբերել Հովհաննեսի արժեքավոր մի արծակ բանաստեղծությունը՝ մտավորապես տվյլ հարյուր տաղ ծավալուվ: Սարկավագդի այս աշխատությունը շնայրծ վերնափիր չունի և ոչ էլ հեղինակի անունը, ատկայն ընդորինակող գրիչն իր հիշատարարանուամ հայտնուամ է, որ այդ բանաստեղծությունն, անվիճելի, պատկանուամ է Հովհաննեսի հեղինակությանը. «Այս բանք քերթողականք ասացեալ մեծի պէտիկութին Սարկաւագին որ ի տիեզերահողակ ուխտին Հարուտ, գտի ես նուաստուն ի մանկումս եկեղեցւյ»<sup>20</sup>:

Նույն հիշատարարանից երևուամ է, որ ձեռագրի նախագաղաքանար օրինավը Հովհաննեսի ինքնագիրն է հանդիսացել: Այդ նկատառուամով էլ հիշատարագիրը խնդրուամ է ընթորինակող գրիչներից, որպեսզի նրանք շավելացնեն և շպականեցնեն Հովհաննեսի այս բանաստեղծությունը, նրա առները և արվեստը. մերդ՝ մի ոք յանդպնեալ իշխնեցէ յամբուզ կամ պակասացուցանել ի բանից, կամ ի տանը եւ յարուեստից, զի եւ մեզ ոչ իշխնեցաք յամբուզ կամ պակասացուցանել, զոր ինքն իւրով ճենամբն գրեալ էր» (թ. 51թ):


18. «Եարական հոգեւոր երգոց», Եջիածին, 1861 թ., էջ 581:

19. Մ. Աբեղյան, «Հայոց հին դրականության պատմություն», II հատոր, էջ 51:

20. Հայկ. ՍՍԾ Պետական մատենադարան, ձեռ. № 777, թ. 51թ:

Հիշատակարանի վերև բերված պարբերությունից հետո ավելացված մի ակնարկից՝ «ըստ այսմ օրինակի էր կտակն», երևում է, որ հիշատակագիրը իր ձեռքի տակ ունեցել է Հովհաննեսի կտակ-հիշատակարանը:

Հիշատակագրի տեղեկության մեջ ուշա-



Մի էջ Հովհաննեսի  
բանաստեղծություններից  
(Վեցված Հայկ. ՍՍԾ Պետական մատենագրանի № 7 ձեռագրից)

գրության արժանի է նրա խնդրանքի այն կետը, ինչ վերաբերուամ է Հովհաննեսի բանաստեղծության տները շավելացնելուն և շպականեցնելուն՝ «Մի՛ ոք յանդպնեալ իշխնեցէ, յամբուզ կամ պակասացուցանել ի բանից, կամ ի տանց» (ընդգծուամբ մերն է — Ա. Ա.), եւ յարուեստից: Հովհաննեսի ներկա աշխատությունը արծակ բանաստեղծությունն է, չափ չունի, ուստի և անհամարալի

է մնում՝ թե ի՞նչ հմաստով է պղրծաժված առունք բառը:

Հովհաննեսի այս բանաստեղծությունը, դժբախտաբար, մեզ հասել է թերի միջակում: Տեսսող պակասավոր է ակզրից և վերջից: Հիշատակագրի տեղեկությունից երևում է, որ Հովհաննեսի այս աշխատությունը պակասավոր է եղել դեռ ընդորինակաման ժամանակի: Հիշատակագրից հայտնում է այդ մասին և խնդրում է ընդորինակարգներից, որ եթե որևէ մեկին հայտնի լինի Հովհաննեսի այդ բանաստեղծության ամբողջական տեսատր, ապա թող լրացնի պակասը. «Սկիզբն եւ կատարածն եղծեալ (է), — գրում է նաև, — եթե գոցես ուրեք, զբովանդակն զրեա» (թ. 51 թ.):

Հովհաննեսի այս բանաստեղծությանը բովանդակությունը կրոնական է: Նա ուղղված է քարպերներականության դեմ: Հովհաննեսը, մեծ վարպետությամբ, սպանիչ քննադրանության է ենթարկում քաղկեդոնականությունը և աշխատում ապացուցել Հայ նկեղեցու առաքելական անաղարտությունը: XII դարում Քյուզանդիայի Արևելքում վարած ագիսիվ քաղաքականության արյամաններում արդ վեճը հայ համարակական շրջանները հոգող կարևոր հարցն էր նա ունենալ նաև քաղաքական իմաստ: Մեզ համար այժմ, իհարկի, կարևոր միտուաստիկ բովանդակություն ունեցող վեճերը չեն, այլ ամ հարուստ լեզուն, ճարտասահմանան այն բարձր արմատուր, որը գործ է ածում Հովհաննեսը հակառակորդի գողացիաբախությունը եղծելու նպաստակում: Հովհաննեսի ար աշխատությունն իր բովանդակությամբ շատ է նման եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»ին:

Յույց տալու համար թե Հովհաննեսը ի՞նչ վարպետությամբ ու համարձակությամբ է քննադրատում իր հակառակորդին, անհրաժեշտ ենք համարում անել միայն երկու փոքրիկ մեջբերում:

«Ենթէ՞ ոչ թշնամաննես, եւ խոտես, գորա եւ Աստուած:»

Հիմ գհրամայեալս Աստուածը ի գատապատեղութիւն զնես սրբոց, եւ հրաժարեցելովքն պատեալ դու վարդիս: Զատելիս տեառն սիրես յարգանաւք, եւ զիրելիս նորա անարգես թշնամաննաւք: Որո՞ց արդեւք մասն իցէ, ասողն բարի զար:

Եւ ընդդէմ նմին շար՝ զբարին,

Զոյսն խաւար եւ խաւարն լոյս» (թ. 5 թ.):

Յոյց ինձ եւ զբոյմ,

Զօր արդեւք ընուա հրաշագործութիւն,

Որո՞վ միով եւ դու բերես առ նա զննանութիւն,

Եւ որո՞ց սքանչելեաց հանդիսականք երեամութը:

Նսուն քեզ համարձակութիւն, Նսել զոր ինչ կամբուդ առանց ամափոյ, Երկնշիմ ի հայոցութենէ, որ ծնանի ի բումէ առաջարկութենէ:

Եթէ իցէ ի քեզ բան իմաստութեան, տո՞ւր պատասխանի:

Ասպա թէ ոչ, ափ քո եղիցին ի վերայ բերանոյ գոյ» (թ. 14 ա.):

Հովհաննեսի մեզ հասած հայտնի աշխատությունների շարքում մաստենագրության մեջ հայտնի է նրա «Ընդդէմ երկարանակաց» աշխատությունը<sup>21</sup>: Այդ նույն աշխատությունը հիշված է նաև Ասդղոսավանից մատենագրանի մեզ հասած ձեռագրերի ցուցակում, որը հրանուարակել է Խաչիկ վարդապետությունը: Այդ ցուցակում հիշված են համարակացը և աշխատությունները: «Ե (1) գիրք եւս մեր վարդապետաց ընդդէմ երկարանակաց: Ա (1) գիրք եւս Յովաննէս վարդապետի աշխատությունը<sup>22</sup>: Հովհաննեսի վերև հիշված աշխատությունը այլ վերնագրով հիշված է նաև Բառնարաա նասաւանի կազմած Վենետիկյան Միթթարյանների մաստենագրանի ցուցակում: Այստեղ նա ումի «Ճառ ընդդէմ ներդրէն նեստորամբանաց» վերնագրը<sup>23</sup>: Հովհաննեսի «Ընդդէմ երկարանակաց» կամ «Ճառ ընդդէմ նեստորամբանաց» աշխատությունը նրա վերև հիշված բանաստեղծությունն է, միայն որոշ ընդօրինակություններում խմբագրին և զգացի փոփոխություն է ենթարկվելու: Նրա նշված աշխատությունն նախնական տեքստություն է, իսկ խմբագրված, փոփոխված տեքստը արդեն վեր է ածվել զուտ աստվածաբանական պոլեմիկ աշխատության:

Մի քանի խոսք Հովհաննեսի նշված բանաստեղծությունը պարունակող ձեռագրի մասին: — Նա գրանցված է Հայկ. ԱՍՌ Պետական մատենագրանի: № 777-ի տակ: Զեռագիրը հիշատակարան չունի, բայց զրյությանը նախերավ, մտավոր ժամանակը կարելի է որոշել XIII դար: Զեռագիրը չի

21. Կարինյան ցուցակ, № 513 (հմտ. Սամվել Անեցու ժամանակագրության էջ 292-ի շորորդ ծանոթագրությունը).

22. Խաչիկ Ս. Վ., «Նորագյուտ մագաղաթ ցուցակ Նազմասավանից մատենագրանի» («Եղանակ», էջ 167):

23. Բառնարաա նախանական, «Վենետիկիկ Միթթարյանց հայ գրչարաց համառու ցանկ» (անս «Սարկավառ գարդապետ» տառ այլութենական ցանկի): Այս ցուցակը կազմված է 1888 թվին, իսկ նրա պատճենը 1898 թվին, Ամստենդամ արտագրությամբ կա մեզ մաս:

պահել պովի անոմը. մի տեղ միայն ակնարկվում է, որ գրից «Եկեղեցու մանուկ» է հանդիսացել. Զեռափիրը սկզբից, ինչպես ասել ենք, թերի է: Առչեկց պակասում է 21 պրակ. պահվածը սկսում է «Ն» տեստրից: Պրակների թվահամարը հաշված է ըստ թվագրամբ հաշվի, այսինքն «Ժ» հետո եկտղ տառերը տառնավորներ չեն, այլ սովորական միավորներ. այսպես, «Ե» հավասարը չէ 20-ի, այլ 11-ի: Այդ հաշվով, ձեռագրի սկզբից պահկասում են «Ա» պրակները, ընդունենք 21 պրակ: Տվյալ ձեռագրի յուրաքանչյուրը պրակը բաղկացած է տաս թերթից, որին, սկզբից պահսում է 210 թերթ: Ցալվածի է պատկերացնել այն խոշոր կորուատը, որ մենք ունենք այստեղ: Զեռափիրը գրմած է միայնուն, խողոր բոլորապրում:

Հովհաննեսի նորահայր բանաստեղծությունների մեջ պործ են ածվոամ մի շարք նոր բառեր, որոնք չկան Հայկացյան բառարանում: Այդպիսի բառերից կարեցի է նշել «Սպիտակացան ձիմ», «շիխեմ վաղվաղակի», «բոռաքու թողուկ», «ասարեաց պղոնձեայ», «սուրբատառ», «զըզընքաց», «սուրուկակարգ», «փողամարտ», «փողամարտիրու», «յառաջիմնեցովին», «վաղաժամեայ», և այլն: Անշահ շատ են այնպիսի բառերը, որոնք մեկական օրինակներով են նշված Հայկացյան բառարանում:

Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 45 ձեռագրում, որի ընդորինակել է Սարգիս Եղիշեացին 1642 թվին Լիմ անապատում (տես թ. 295ա), բերված է անփորագիր խրթնաբան մի բանաստեղծություն, որի առաջին տառերը հորվում են՝ «Յովհաննէս» ձևով: Ո՞ր Հովհաննեսինն է այս բանաստեղծությունը, Սարկավա՞գ: Հովհաննեսինը, Երզնկացիինը, թե ուրիշ մեկինը, դժվար է հաստատապես որմէ բան ասել: Նկատի ունենալով, որ բանաստեղծությունը փոքր է ու ուստի և անհրաժեշտ ենք համարում բերել ստորև:

«Յովհարտութիմ խիպառական,  
Խափիծացեալ աղնաբերան.

Ուութիմ շամառացեալ,

Սուտակասապաս վառ երեւեալ.

Ճնշումն ուսից պեռպուտոող,

Խոամբ բաղասաց քնաւից հետոող.

Աղիբար կործ քատակեալ,

Վեհ իստափիտ մենեղաւեալ.

Նպոյր ոտն եռակի,

Զըահիդ պանծումն ոճամն եւ լի.

Կիոնափող դօշ ուրացեալ,

Բանից բոլոր մախիղացեալ.

Սա քեզ ճիւաղ զո՞ւ մենների,  
Թոնձառական սիդէկ սեփի<sup>24:</sup>

Այսպիսով, Հովհաննեսի մեզ հասած ձեռագրի բանաստեղծությունների ուսումնասիրությունը պարզվում է հետևյալը.

1. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի նորահայր մի ձեռագրից երեսում է, որ Հովհաննեսի հեղինակությամբ՝ հայագիտության մեջ հայտնի «Առ Սարգիս վաս տաղիցն», «Վասն միւտոյ ողբականին» և «Առ կոյրն աշեղազոյն եւ լուսաւոյ» տաղիրը, իրականության մեջ, ոչ թե Հովհաննեսի տաղեր են, այլ նրա երեք նամակները:

2. Հովհաննեսի առաջին նամակի մեջ հղած մի տեղեկությունից պարզվում է, որ նա իր «Սարեակ» տաղը գրել է Սարգիս համար:

3. Հովհաննեսի երկրորդ նամակի մեջ ակնարկված է նրա մի տաղը՝ «Աղը» խորագրով, որը հայտնաբերված է Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 7 ձեռագրում: Այս տաղը, որը միջնաբարյան տաղերգության գլուխ գործոցներից մեկն է, բարկացած է 20 տողից, և նվիրված է վերև հիշված Սարգիսին. տաղի տողերի առաջին տառերը առդրութիկուով հորվում են՝ «Յովհաննէս քահանայ» Սարգիս Մեծի խնդալ Ածականի:

4. Հովհաննեսի անունով հայկական մատենագրության մեջ հիշված մի շարք տաղեր՝ «Կանայք որ մեկին ի տուրք գերեզման», «Կիւզէլ մի տեսաւոյ և այն, Հովհաննեսինը շեն: Հովհաննեսինը չէ նաև Ուկյանի հիշած մՄարտ ընտ. Աստուծոյն: Այս տաղը Ֆրիկի նշանավոր գանգատի խմբագրություններից մեկն է և թյուրիմացությամբ է Հովհաննեսին վերագրվել:

5. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանում հայտնաբերվել է Հովհաննեսի մի նոր արքակ բանաստեղծությունը մոտ 800 տող ծավալով: Նա կրոնական-պողմանիկ բառանդակություն տանի և իր արժեքով չի վիշում եզնիկ Կողբացու աղջ աղանդրցախն:

6. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 43 ձեռագրում Հովհաննեսի մանունով հայտնաբերվել է փրթնաբան մի փոքրիկ բանաստեղծությունը որի մեջ հետինակ Հովհաննեսին պատկաներ լկան և հաստատապես ոշինչ ասել շենք կարող է

24. Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ,  
№ 47 (51), թ. 312ր:



Հ. ԱՆԱՍՏԱՆ

ԵՂԻՇԵ

ԼԻԱԿՈՏԱՐ ՄԱՏԵԽԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(Հիշվում է Եղիշե Պատմագիր, Եղիշե Վարդապետ, Եղիշե Քահանա, Սույր Եղիշե անուններով)

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

1. Մրգոյ հօրեն մերոյ Եղիշեի Վարդապետի Մատեխագրութիւնք: Ի Վենետիկ, ի տպարանի Մրգոյն Ղազարու, յամի 1838—ՌՄԴէ:

2+307 էջ (22, 5×14 սմ.): Վերջում՝ «Ճանկ անուանց»:

2. Մրգոյ հօրեն մերոյ Եղիշեի Վարդապետի Մատեխագրութիւնք, ըստ ընտրելագոյն ընթերցուածոց գրչագրաց: Ի Վենետիկ, ի տպարանի Մրգոյն Ղազարու, յամի 1859—ՌՄԴՅ:

382 էջ (22×14 սմ.): Վերջում՝ «Ճանկ անուանց»:

3. Մեկնութիւն տէրուեական Հայր մեր աղօրից և նառք Խաչելութեան, Թաղման և Յարութեան. և Խրատ միանձանց Երանելոյն Մրգոյ Եղիշեի Վարդապետի: Հանեալ ի հնագոյն ճառընտրաց մերոց: Տպեալ յամի Տեառն 1836 և Հայոց ՌՄԴԵ: Ի տպարանի Քրիստուական Աթոռոյն Մրգոյն Յակոբայ Տեառն Եղոր, ի Մուլոր Երանակիմ:

82 էջ (18,5×12,5 սմ.):

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴԱԱՆՑ

Ա. տպ.— Կ. Պոլիս; 1764 թ.:

(Առաջին ճակատ) Գիրք պատմութեան Մրցոց Վարդանաց զօրավարացն Հայոց: Արածեալ Մրգոյ Եղիշեի Վարդապետին:

(Երկրորդ ճակատ) Գիրք որ կոչի Եղիշե Պատմագիրք: Շարադրեալ գիտնական և խստակրօն սուլր Վարդապետին Եղիշեի, աշակերտի սրբոց թարգմանչացն Մերոց Խսահակայ և Մեսրոպայ: Ցուրում լիակատար պատմին նահատակութիւնք սրբոց Վարդանանց զօրավարացն Հայոց և Ղեւնդեանց սրբոց քահանայից: Վերըստին տպագրեցեալ ի յեօթներորդում ամի Հայրապետութեան լուսանկար մօրն մերոց սրբոյ Աթոռոյն Էջմիածնի՝ Տեառն Ղոկատու սրբագնասուրբ կաթուղիկոսի ամենայն Հայոց: Հրամանաւ իշխանագնեայ տեառն Յովսեփայ սրբազան արք եպիսկոպոսի և առաջնորդի ազգին Հայոց որք են ընդ Տէրութեամբ Ռուատաց: Արդեամբ և ծախիւք բարեպաշտօն և ազնուատոն Մանիշարեանց Աստուածատրեան ազնիւ պարոն Մարգարին: Յամի Տեառն 1787: Լուկ ի թուին Հայոց ՌՄԴԶ: Ի Սանկտպետրո-

պութեան սրբոյ Երուապէմի՝ Տեառն Կարապետի՝ Երշանկազարդ վարդապետի: Եւ Կոստանդնուպոլսոյ՝ Տեառն Գրիգորի Հեղահոգի վարդապետի: Ի Կոստանդնուպոլիս քաղաքի Արդեամբ և ծախիւք՝ սուլր Էջմիածնի միաբան Արքահամ վարդապետին: Ի թուականին Հայոց ՌՄԴԳ: Յապրիի ժ: Ի տպարանի Հանգուցեալ Աստուածատուրի:

8+220 էջ (20,5×16 սմ.):

Սկիզբ կա սրբագրի Ակնեցի Ստեփանոս Պետրոսյանի «Նախերգանքառ», էջ 4—8: Պատմության բնագիրը գրավում է 3—207 էջերը: Վերջում՝ նյութերի ցանկը, էջ 208—212, և «Ներգարանութիւն»ը, էջ 212—214, որտեղ սրբագրիշը տեղեկություններ է տալիս տպագրության համար օգտագործված ձեռագրի հանգամանքների մասին: Ունի տպագրության «Յիշատակարան», էջ 217—220:

Ալ տպ.— Պետերոսուր, 1787 թ.:

Գիրք որ կոչի Եղիշե Վարդագիրք: Շարադրեալ գիտնական և խստակրօն սուլր Վարդապետին Եղիշեի, աշակերտի սրբոց թարգմանչացն Մերոց Խսահակայ և Մեսրոպայ: Ցուրում լիակատար պատմին նահատակութիւնք սրբոց Վարդանանց զօրավարացն Հայոց և Ղեւնդեանց սրբոց քահանայից: Վերըստին տպագրեցեալ ի յեօթներորդում ամի Հայրապետութեան լուսանկար մօրն մերոց սրբոյ Աթոռոյն Էջմիածնի՝ Տեառն Ղոկատու սրբագնասուրբ կաթուղիկոսի ամենայն Հայոց: Հրամանաւ իշխանագնեայ տեառն Յովսեփայ սրբազան արք եպիսկոպոսի և առաջնորդի ազգին Հայոց որք են ընդ Տէրութեամբ Ռուատաց: Արդեամբ և ծախիւք բարեպաշտօն և ազնուատոն Մանիշարեանց Աստուածատրեան ազնիւ պարոն Մարգարին: Յամի Տեառն 1787: Լուկ ի թուին Հայոց ՌՄԴԶ: Ի Սանկտպետրո-

բուրգ: ի տպարանի հալդարեանց պարոն Դրիգորի: Կրկին հրամանաւ կառավարչացն բարեկարգութեանց:

413 էջ (15,5×9,5 սմ.): Նույնությամբ արտատպություն է նախորդ հրատարակությունից: Տարրեր է միայն տպագրման օֆիշատակարան»ը, որ նոր է, էջ 410—413:

Այլ տպ.— Կ. Պոլիս, 1823 թ.:

Պատմութիւն նախատակութեան սրբոց Վարդանանց, և Ղենքեանց բանայից: Արարեալ սրբոյն Եղիշայի գերանչակ վարդուպետի և արք եպիսկոպոսի Ամստունեաց, և աշակերտի երանելի թարգմանչացն մերոց Սահմանակայ և Մեխոպաշ: ի հայրապետութեան սրբոյ աթոռույն էջմիածնի Տեառն Եփրեմի աստունածնիր կաթուպիկութիւնի ամենայն հայոց: Եւ ի պատրիարքութեան սրբոյ աթոռույն Երուսաղէմի Տեառն Գարբիէլի շնորհափայլ արք եպիսկոպոսի: Հրամանաւ և արդեամբ Կոստանդնուպոլոսոյ պատրիարք Տեառն Պողոսի արքեպիսկոպոսի Անդրիանոսպատից-ւորութեան կամաց կուպութիւն: ի տպարանի մայր եկեղեցւոյ սուրբ Աստուածածնի: Աջմաստաւահրութեամբ Տ. Անդրէաս վարդապետի նարինեան ակնեցոյ. 1823—ԹՄՀՀԲ:

239 էջ (21,5×13,5 սմ.): Ոմի «Յառաջապան» Պողոս Անդրիանոսպատիցու կողմից, էջ 3—6: Պատմության բնագիրը գրավում է 7—214 էջերը: Վերջում՝ «Յաւելուած: Խօսք յալագու պատմական գրոցն Եղիշէի, հանեալ ի պատմութենէ Թովմայի վարդապետի և պատմչի տանն Արծրունեաց», էջ 215—218, «Յանկ գրքոյա «այբենական»), էջ 219—227, «Բացատրութիւն անժանօթ և տրուարիմաց բառից այսր մատենի», էջ 228—239:

Այլ տպ.— Վենետիկ, 1828 թ.:

(Առաջին ճակատ) Եղիշէի սրբոյ վասն պատերազմին Վարդանանց: ի Վենետիկ, 1828:

(Երկրորդ ճակատ) Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին: ի Վենետիկ, ի Սուլլ Ղազար, ԹՄՀՀԲ:

408 էջ (12×7 սմ.): Սկիզբը կա հրատարակի Հ. Ա. Բագրատունու ուղերձը՝ «Առ Եղիշէ», էջ 5—6: Պատմության բնագիրը դրավում է 7—362 էջերը: Վերջում՝ Միանձանց ճառը, էջ 363—378, հրատարակի ազդում՝ «Առ բանասէրս», որ տեղիկություն է տալիս օգտագործված ձեռագիր օրինակների բասին և նշում է նրանց բնագրի տարբերությունները՝ «Առ բնթերունածք» վերնագրի տակ, էջ 382—392: Ոմի «Յանկ անուանց», էջ 393—408:

Այլ տպ.— Վենետիկ, 1838 թ.:

Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին: (Վենետիկ, 1838):

Տե՛ս՝ Եղիշէի «Մատենագրութիւնք», Ա տպ. (Վենետիկ, 1838), էջ 1—176:

Այլ տպ.— Վենետիկ, 1842 թ.:

Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին: ի Վենետիկ, ի Սուլլ Ղազար, ԹՄՀՀԲ:

394 էջ (12×7 սմ.): Նույնությամբ արտատպություն վենետիկյան 1828 թվի հրատարակությունից: Բովանդակում է միայն Պատմության բնագիրը, Միանձանց ճառը և անունների ցանկը:

Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին: ի Վենետիկ, ի Սուլլ Ղազար, ԹՄՀՀԲ—1852:

394 էջ (12×7 սմ.): Սկիզբը՝ «Ազդ», էջ 3: Պատմության բնագիրը՝ էջ 5—362: Վերջում՝ Միանձանց ճառը, էջ 363—378, Ոմի «Յանկ անուանց», էջ 379—394:

Այլ տպ.— Վենետիկ, 1859 թ.:

Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին: (Վենետիկ, 1859 թ.):

Տե՛ս՝ Եղիշէի «Մատենագրութիւնք», Բ տպ. (Վենետիկ, 1859), էջ 5—158:

Այլ տպ.— Մոսկվա, 1861 թ.:

(Առաջին ճակատ) Եղիշէի սրբոյ վասն պատերազմին Վարդանանց: ի Մոսկվա, 1861:

(Երկրորդ ճակատ) Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին: Մասիս գրելարուեստ Հովհաննիսի թ. Քաթանեանց: ի Մոսկվա, ի տպարանի Լոզարեանց ճամարանի, 1861:

430 էջ (12,5×7,5 սմ.): Պատկերազարդ: Պատմության բնագիրը՝ էջ 5—411: Վերջում՝ Միանձանց ճառը, էջ 413—430:

Այլ տպ.— Թեոդոսիա, 1861 թ.:

Եղիշէի Պատմութիւն Վարդանանց: Հստ Անձեացեաց օրինակի: Թէոդոսիա, ի Խալիպեան տպարանի, 1861:

է+341 էջ (15,5×10,5 սմ.): Սկիզբը՝ Խորեն վ. Գալֆայանի «Ներածութիւններ», էջ 9—է, որ տեղեկություն է տալիս Պատմության ընձեւացեաց ձեռագիր օրինակի վրա: Պատմության բնագիրը՝ էջ 1—328: Ոմի «Յանկ անուանց», էջ 329—341:

Այլ տպ.— Վենետիկ, 1864 թ.:

(Առաջին ճակատ) Եղիշէի սրբոյ վասն պատերազմին Վարդանանց: ի Վենետիկ, 1852 (sic):

(Երկրորդ ճակատ) Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին: ի Վենետիկ, ի Սուլլ Ղազար, 1864, Թթժ:

394 էջ (12×7 սմ.): Պատկերազարդ: Արտատպված է վենետիկյան 1852 թվի հրատարակությունից, բայց առանց «Ալղորիթմ» Պատմության բնագիրը՝ էջ 5—361: Վերջում՝

Միանձանց ճառը, էջ 363—378; Ոմի «Յանկ անուանց», էջ 379—394:

Այլ տպ.— Երրուաղեմ, 1865թ.:

Եղիշէի Վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին: Ի պատրիարքութեան Ս. Աթոռոյն Երրուաղեմի Տ. Տ. Եսայիան Սրբազն Արքապիսկոպոսի և ի պատրիարքութեան Կոստանդնովուսոյ Տ. Տ. Պօղոսի Սրբազն Արքապիսկոպոսի: Յերրուաղեմ, ի տպարանի Սրբոց Յակովեանց, 1865:

431 էջ (13,5×8,5 սմ.): Պատմության բնագիրը՝ էջ 1—399; Վերջում՝ Միանձանց ճառը, էջ 401—418; Ոմի «Յանկ անուանց»:

Այլ տպ.— Կ. Պոլիս, 1866թ.:

Եղիշէի Պատմութիւն Վարդանանց, ըստ Անձեւացեացն օրինակի: Կ. Պոլիս, տպագր. Արամեան, 1866:

431 էջ (13,5×8,5 սմ.): Պատմության բնագիրը՝ էջ 1—437; Վերջում՝ Միանձանց ճառը, էջ 438—451:

Սույն հրատարակությունից մենք տեսնել ենք միայն մի օրինակ (Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, տպագիր գրքերի բաժին, № 1658), որի, սակայն, անվանաթերթը չկա: Անվանաթերթի նկարագրությունը առել ենք Հ. Ա. Ղաղիկյանից, «Հայկական նոր մատենագիրութիւն», հ.թ. Ա. (Վենետիկ, 1909), էջ 574:

Այլ տպ.— Զմյուռնիա, 1867թ.:

Եղիշէի Պատմութիւն Վարդանանց: Զմյուռնիա, Տպագրութիւն Տէտէեան, 1867:

222 էջ (14×10 սմ.): Տերսոր գրավում է 1—209 էջերը: Վերջում՝ «Յանկ երեւելի անձանց և անցից մատենիս», էջ 211—219, «Բացատրութիւն պարսկերէն և խրթին բարից ինչ մատենիս», էջ 220—222; Ոմի «Յանկ գլուց», էջ 223—224:

Այլ տպ.— Կ. Պոլիս, 1871թ.:

Եղիշէի Պատմութիւն Վարդանանց: Ըստ Անձեւացեացն օրինակի: Ի հայրապետութեան Տեառն Տեառն Գէրդայ Արքազնակատար կաթողիկոսի ամենայն Հայոց և ի պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տ. Տ. Մկրտչի Խրիմյան սրբազն ազգախնամ Հայրիկի: Կ. Պոլիս, Տպագրութիւն Յ. Գաֆաֆեան, 1871:

129 էջ (21×14,5 սմ.): Պատկերազարդ Պատմության բնագիրը՝ էջ 1—125, Վերջում՝ Միանձանց ճառը, էջ 126—129:

Այլ տպ.— Կ. Պոլիս, 1871թ.:

Եղիշէի Պատմութիւն Վարդանանց: Ըստ Անձեւացեացն օրինակի: Բ. Տպագրութիւն, Կ. Պոլիս, Տպագրութիւն Արամեան, 1871:

472 էջ (11,5×8 սմ.): Պատկերազարդ: Պատմության բնագիրը՝ էջ 9—450; Վերջում՝ Միանձանց ճառը, էջ 453—472:

Այլ տպ.— Թիֆլիս, 1879թ.:

Եղիշէի Պատմութիւն Վարդանանց: Ըստ Անձեւացեաց օրինակի: Տփխիս, ի տպարանի Համբ. էնդիամեանց և ընկ., 1879:

2+311 էջ (14,5×10,5 սմ.): Արտատպություն Թեոդոսիայի 1861 թիվ հրատարակությունից: Ակիզը՝ «Ձեկուցումն» հրատարակից Գարբրիել արք. Արվազյանի կողմից:

Այլ տպ.— Մոսկվա, 1892թ.:

Եղիշէի Պատմութիւն Վարդանանց: Ըստ Անձեւացեաց օրինակի: Մանօթութիւններով և հայ-ուսուարէն բառարքով ի լոյս ընծայնց ուսուցիչ Լազարեան Ճեմարանի Արեւելեան Էկզուաց. և. Յովհաննիսեանց: Մոսկովա, Տպարան Մկրտչի Բարիսուլարեանի, 1892:

9+392 էջ (22×16 սմ.): Ակիզը՝ հրատարակչի «Յառաջարանաց», էջ 1—6: Պատմության բնագիրը գրավում է 9—182 էջերը: Վերջում՝ «Մարտութիւններ», էջ 183—240, «Հայոց Արշակունյա թագաւորների և նախարարների հարաբերութիւններ», էջ 241—242 և հայ-ուսուարէն բառարան, էջ 243—391:

Առանձին բրոցյուրով՝

Թերեւը 223:— Պրակեները 22, յուրաքանչյուրը 12 թիրթից:— Մեծուրյունը՝ 23×17×4:— Նյուրը՝ գեղնագույն թութիւն:— Գրուրյունը՝ երկսլուն:— Գիրը՝ բուրդիւն:— Տողերը՝ միշեն հաշվով 22:— Զարդարուրյուն (թ. 1ա) կիսախորան, դիմագրեր:— Վիճակը վերցից թիրթ միշեց որոշ թիրթեր բայրայված, առանց կաղմի:— Գրիշը՝ Բասիլ:— Ժամանակը՝ 15-րդ դար:

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐԱՆՆԵՐ

թ. 69բ.— Զսուտանուն գծողիկս յիշել աշալշեմք ի մեղաց թողովին յառուր սոտկալի յարօպիթեան Փրկչին մերոյ, զի թիրեան գտայցեմ... (թիրթ):

թ. 113թ.— Զթարմատար եւ զկարեկիր փանաք եւ սուտանուն գծողիկս Բատակլ յիշել աշալշեմք ի մեղաց թողովին առաջի զենզուն եւ միշտ կենդանույն եւ յուտյն խմոյ Քրիստոսի, ո՞վ սրբասէր մանկունք նազեր մակրն մերոյ Սիովնի եւ դուք յիշեալ լիշիք ի թրիստոս:

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

թ. 115բ.— Արժանապատիւ Տէր Աստուծատուր Տէր-Մտեփանսուեան ի գեղէն Հազարզորեր, խոնար (5) ծառայ արտագրող Աղաջան:

թ. 120ա.— Սուտանուն գրող Աղաջան:

### № 22

#### Ա.Ի.Ե.Տ.Ա.Կ.Ա.Ր.Ա.Ն

Թերեւը 275:— Պրակեները՝ 23, յուրաքանչյուրը 12 թիրթից:— Մեծուրյունը՝ 21,6×17,1×7:— Նյուրը՝ սպիտակ ողորկ թուղթի՝ կազմի՝ թավածածկ, արծաթապատ տախտակի:— Կաղմի վրա կան բեեռագամ խաչ և նուանկյունածկ երկու հրեշտակների ու երկու արծիվների փորագրված պատկերներ:— Վիճակը՝ բավարար:— Գրուրյունը՝ երկուուն:— Տողերը՝ բուրդիւն:— Զարդարուրյուն՝ ունի բազմաթիվ լուսանցագարդեր, թոշնակրեր, մարդագրեր և գաղանագրեր: Ավետարանների սկզբներում նկարված են ավետարանիների նկարներու, իսկ տերստը սկսում է խորաններով:— Ժամանակը՝ 1465:— Գրիշը՝ Հովհաննես բահանաւ:— Վայրը՝ Արձիշ:— Պատվիրատուն և ալիմ հաթուն:— Պահպանակ՝ սկզբում երկու պարզած մագաղաթյա թիրթեր բուրդեկ երկաթագրով (Աստվածաշնչի Սպեկիեկի Յթ-րդ գլխից, որը հրատարակված բնագրերի համեմատությամբ ունի տարրագիներ):

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐԱ.Ր.Ա.Ն

թ. 273ա—275բ.— Փառք եզակի տէրութեան...

Արդ՝ որք զմտաց աշս անադաւու եւ վլըմիտումիցին երկնանկատ դիտմամբ առ էականներու մեջ իմանալիքացն տեսարան, նոցին ո՞չ ինչ է փոյթի իմայ որ յաշխարհի, այլ միանգամայն զնուր սիրոյն, զոր հուրն կենդանի արկի բանական բնութիմս աւր աւրէ արծարդեն յոփիս, անշիշանելի բորբոքմամբ հոգիւրացն տուրեառութեամբ, որով եւ լուսաւորին ըստ բանի աստուածահայր մարդարէին, որ ասէ. Պատուիրանք Տեան լոյս են եւ լոյս տան աշաց:

Արդ՝ լսու այսմ պատուփրանի, ցանկացաւ եղեւ աստուածային սուրբ եւ ամեստաբեր ամեստանիս ողորմելի եւ դառնացեալ կինն եալիմ հաթունն: Եւ տոտաց զփարթարէ հարստութիւնս՝ զաստուածաբան սուրբ ամեստարանս, հիշատակ իւրն եւ բարի զաւակին իւրոյ գեղեցիկ եւ քաղցրաւես երկտասաւրդին՝ Կարապետին, որ գնաց ուրախութեամբ ի քաղաքն Սուվթանիա եւ ի դառնալն ի տուն, մատնեցաւ ի ձեռս արեանարթու ջարատ տաճկաց, որ անմեղ նահատակիցին սրով եւ խանջալով: Եւ ո՞ր լնոցու կարէ պատմել զանմեղ պականումն Կարապետին, որ էր նոր փեսայ:

Եւ Հասրաթամահ նահատակեցաւ նոյնպէս եղբայր. նորին՝ Խոդայ Յօհանէսն՝ երիտասարդ Հասակաւ՝ և նա լիսպահան սրով սպանաւ ի ձեռաց անաւրէն Հարամկաց: Եւ էր նա երկիւղած յԱստուծոյ եւ զի (5)

ակ առաջաւրաց պահոցն անսուադ անցուցանէր:

Այլ եւ միւս վորքիկ որբոյն՝ Էղդամբախշին, որ եւ նա տղայ հասակաւ գնաց ի վաճառ յարեւլս, եւ դարձան ուրախութեամբ, եւ ի հասանելն ի Թավըէց, ցաւ մահու դիպաւ եւ յԱստուած փոխեցաւ:

Եւ ողորմելի հայր սոցա Գրիգորն, խոց սրտով եւ դառն կենաւք, գնաց տարադէմ յԻսապէան վասն որբոյն Յօհանիսին եւ ի դառնալն հեծեծանօք կոկծամահ եղել ի Սօլթանիա:

Այս ողորմելի կին Խալիմ Խաթունս զայս ամենայն անասելի կոկիծա տնեսեալ, եւ լալով զատուքն անցուցեալ եւ զլոյան յԱստուծոյ ոչ հատեալ, ստացաւ, զտէրունեան սուրբ ամեստարանս լիշտառակ իւրն եւ ծնողացն՝ Ստեփանոսին եւ նազմէլէքին, եւ առն իւրում՝ Մարտիրոսին եւ Գրիգորին, եւ կենուանի որբոյն՝ Յօհանիսին, եւ եղրօն՝ պարոն Գորգին, եւ դատերն՝ Գուգիաշին եւ ամենայն արեան մերձաւրաց նորին: Լի բերանով եւ ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք դառնացեալ կնոշն՝ Խալիմին եւ գեղեցիկ նահատակ որդոցն՝ Կարապետին, Յօհանիսին եւ Էղդանիքալչին եւ Գուգիաշին եւ հօրեղործն՝ Սարգսին եւ ամենայն արեան մերձաւրաց նորին՝ կենդանաց եւ մեռելոց, ամէն:

Այլ եւ ես անարժանս ի մանկունա և կեդեցոյ Յօվանէս քահանայ, ըստ իշում տկարութեանս յանձն առի զուրբ ամետարանս եւ առարտեցի կամամ Աստուծոյ ի թուականութեանս հայոց ԶժԴ (1465) ամին ի քաղաքս, որ կոչի Արծէս, ի դուռն սուրբ տաճարիս Գէորգայ զօրավարի:

Յայսմ ամի սպան շարաշար Զհանշահ փատշահն զորդին իւր զՓիրպուտափի խանն ի Բաղդատ եւ եկն ի Թավըէր ի թաղթն: Եւ են աթոռ եւ եպիսկոպոս երկրիս Բաշքերունոյ իմաստոն եւ բանիբուն վարդապետանութեանս կումանէս ամառն ի քաղաքս, որ կոչի Արծէս, ի դուռն սուրբ տաճարիս Գէորգայ զօրավարի:

Յայսմ ամի սպան շարաշար Զհանշահ փատշահն զորդին իւր զՓիրպուտափի խանն ի Բաղդատ եւ եկն ի Թավըէր ի թաղթն: Եւ են աթոռ եւ եպիսկոպոս երկրիս Բաշքերունոյ իմաստոն եւ բանիբուն վարդապետանութեանս կումանէս ամառն ի քաղաքս, որ կոչի Արծէս, ի դուռն սուրբ տաճարիս Գէորգայ զօրավարի:

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

թ. 275ա—275բ.— Փառք ամենասուրբ երրորդութեան...

Արդ՝ զվերչի ստացող սուրբ յանաւարանին՝ Տէր Մարգարէն, որ ստացաւ ի Հալալ վաստակոց իւրոց, յիշտառակ իւր եւ ծնողացն իւրոց՝ հաւրն Խաւմալ Շատիքին եւ մարդն նորա՝ Հանմելիքին, եւ եղբարցն՝ Խաւմանին եւ Հարսին իւրոց՝ Անայմելիքին, Շանդիքին, եւ յարեան մերձաւրբն, իւր յիշեցէր ի Թրիստոս:

Եւ ողորմն Ցովանէսին, Մկրտչն եւ զստերն Սողոմերն եւ եղբարուդոցն՝ Փաշին, Շահրամիքին, եւ գտարացն՝ Գուեմիքին, Մարիամին, Գաւզալաղին եւ արեան մերձաւրբն իւր յիշեցէր ի Թրիստոս, եւ Աստուած զնեղ յիշէ, ամէն:

Զնորոգող Ցովանէն Ազարիա, (յ)իշեցէր ի Թրիստոս եւ Աստուած զնեղ յիշէ, ամէն Արդ՝ աղալիմ զնեղ, ո՞վ սուրբ բահանայր, յորժամ հանդիպէր ի սմա՝ կարգալով կա՞ արինակմով, լի բերանով Աստուած ողորմի ասացէր եւ Աստուած ձեղ ողորմի, ամէն:

### Հ 23

#### ԱԻԵՏԱՐԱՆ

Թիրբերլ՝ 308:— Գրակները՝ 26, յուրաքանչյուրը 12 թերթից:— Սենուրյունը՝ 20×14×6,8:— Նյուրը՝ թուղթ:— Կազմը՝ կաշեպատ տախտակ, կարմիր մետաքսով ծածկած կազմի վրա ունի խաշելության պատկեր արժաթից:— Վիճակը՝ առանձին թերթիր պոկված են, վերշոյ ընկած են թերթերը:— Գրուրյուն՝ երկայուն, բոլորգիր:— Տողերը՝ միջին հաշվով 21:— Զարդարուրյուն: Կան թունագրեր եւ լուսանցազարդարություններ: Գլխագործը զարդանկարներով են ունի խորաններ եւ ավետարաններորդ Յնկարները:— Գրիշը՝ Հայրապես բահանա:— Գրչուրյան վայրը՝ Շոշ բաղար (Մագան):— Թվականը՝ 1631:

#### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

թ. 306բ.— Եւ արդ՝ ես, յետինս ի բանականաց եւ առաջինս ի շարասիրաց, եւ անիմատս ի գրչաց, Հայրապետ սուտանուն բահանայ, քանզի իմ Հրաման առեալ ի պատուիրանացիիր առաքելոցն ըանէ, որ ասէ. Յոր կոլումն կոչեցար, ի նմին կացչիր: Եւ արդ՝ իմ ոչ բերելով յանձին, այլ ունայնացեալ յամենայն բարեաց գործոց եւ թափուր մնացեալ, այլ յուսամ ի մարդասիրութիւն Աստուծոյ, զի առատ է եւ սպասեմ վարձու յետին մշակին:

Արդ՝ գրեցաւ սուրբ ամետարանս ի թուականիս հայոց ՌԶ (1631), ձեռամբ Հայրապետի սուտանուն բահանայի, անիմատս եւ ախմար գրչի: Զի իմ անլընդունակ գործով յարուսատս գրչութեանն, այլ եւ բազում մեղաց ցնորիք պաշարեալ եւ շրջապատեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգեւեաց մեղ շնորհաբաշին Հոգին: Բազում աշխատու-

Ռեամբ գրեցաք, անարժան յամենայնի եւ ամենայն շարհօթ շաղախիալ ձեռաւք ի քաղաք Շալշ, որ կոչի Ասպահան, առ ոսն սուրբ Յակոբայ Մծրնայ Հայրապետին։ Ի Հայրապետովիթան Հայոց Տեղու Մովկէսին, ի յառաջնորդովիթան մերոյ առգիս բար րարունապես Խաշատուք եպիսկոպոսին, Տէր Աստուած Հաստատուն պահէ, ամէն։

Եւ արդ՝ եւ Հայրապետ շանարժան քահանայս, որ անուամբ միայն եմ եւ ոչ գործով, ցանկացաւ եղէ սուրբ աւետարանիս եւ մեծ ջամփի եւ սիրով գրեցի, յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնողաց իմոց նուրիշանին, Եղիսաբէթին եւ ամենայն արեան մերձաւորսն իմ, ամէն։ Այլ եւ աղաշեմ յիշել ի Քրիստոս զգո՞ մամն իմ զՍլիմն եւ գորդին իւր հանգուցեալ ի Քրիստոս Հայրապետն։ Ընդ նոսին յիշել ի Քրիստոս աղաշեմն զօրինեալը իմ Դուկվալի եւ կողակիցն իւր Դապիկն եւ որդիքն իւրեանց, ամէն։ Դարձեալ, յերեսս անկեալ արդաշեմ, որը ճաշակէք յաստուածային բուրաստանէս եւ յամենայի սեղանորու։ Եւ որը պատահիք սմա տեսովթեամբ եւ մամ ընթերցմամբ, յիշեցէք յարօթս ձեր զանալիուան գծողս Հայրապետ քահանայս եւ զամուալին իմ Մարիամն եւ նորաբողոջ որդին իմ Բարդասարն։ Եւ որ յիշէ, ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն։ Դարձեալ արդաշեմ յիշել ի Քրիստոս զպապն իմ։ Հայրապետն եւ կողակիցն իւր Մինասաման եւ զորդիքն եւ ամենայն արեան մերձաւորքն իւրեանց, ամէն։ Ընդ նոսին յիշել ի Քրիստոս Ստեփանոս քահանայս, որ երփն-երփն եւ երանգ-երանգ փոնով զարդարեաց զաւետարարանս, զոր Տէր Աստուած զարդարեսց զշոգի նորա եւ ծնողացն իւրոց, մանաւանդ, որ երափստիք ունի ի վերայ սուրբ աւետարանիս, զոր Տէր Աստուած զվարձս բարին հատուցանէ ի միւսանգամ գալստեանս, ամէն։ Եւ արդ՝ իս յոյլ եւ ծոյլ, պղերգ եւ թափուրս ամենայն առաքինովիթնէ, Հայրապետ եւ սեւերես քահանայն այս եսու ընծայ սուրբ աւետարանս ի դրւան սուրբ Յակոբին անջինց յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ զազգայինս իմ ամենայն, զվերոյգեալսն ի սմա, մանաւանդ յիշել եւ Աստուած ողորմի. ասել եւ մեղաց թողովին խնդրել առաջի զենլոյ անարատ զափինն ի ժամ սոսկալի եւ մեղսաքավիչ սուրբ պանարապին։ Եւ որ յիշէ, եւ ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յափիտեանս, ամէն։ Հայր մեր...։

### ՃԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1879, 1879.— Սոյն ահաւոր եւ հրաշալի սուրբ աւետարանս գնայնատիալ եղեւ եւ իմո յօժարական կամաւ ծախսի եսու ի ծոհան Մաղաթէլին եւ նոյն

արար զսուրբ աւետարա (րա) և արծաթապատ, ոտ ի իշտակ հանգուցեալ որդոյն իւրոյ Մուրադին եւ Մելքոնին լինի անմասն եւ գեսահաս որդոց իւրոյ ի աշխարհէս (!)։ Վասնորոյ մեր առանց տրտումը թողաք ի իշտատի նորին Ով որ հանգիպի, առանց խնայելու յիշեցէ զնայ եւ մեր միշտ ուկիմք առ ի իշել աղօթուր Տէր Ստեփանոս Տէր Յանանէսի։

Ա 24

### ԱԻԵՏԱՐԱՆ

Թերեւը՝ 266.՝ Պակներ՝ 22.՝ յուրաքանչյուրը միշին հաշվով 12 թերթից։ Մեծուրյանը՝ 22,5×16×7.՝ Նյուրը՝ փոքր ինչ գեղնած ողորկ թողթի՝ Կազմը՝ տախտակ՝ երեսին հինգ խաչոր, որոնցից մեկը մեծ՝ ամրող կազմի մեծուրյանը, մյուսները շրս փոքր կողերում։ Խաչերի վրա կան տասը հատ ակեր Մյուա երեսին կան դարձալ հինգ խաչեր, որոնցից մեկը մեծ, մյուսները փոքր Այս երեսին կան երկու ակեր Ներսից փակցը վածք է մետաքս գծավոր կտոր Խաչերի վրա կան հելւալ փորագիությունները։

«Սուրբ խաչ յիշատակ է Փարիխանին, կողակից՝ Տէր Ստեփանոսին, Հայրն՝ Մարտիրոսն, մայրն՝ Մարիամն թվին Ռժենէ (1678), Տէր Պետրոսին։»

«Սուրբ խաչ յիշատակ է Ովանիսին, կողակից՝ Սուլումին, թվին Ռժենէ (1678)։»

«Սուրբ խաչ յիշատակ է Առաքելին, կողակից՝ Մարտիրոսին, թվին Ռժենէ (1678)։»

«Յիշատակ է Յոհանին, Մեհրապին, Շահումին, Մարտիրոսին, թվին Ռժենէ (1678)։»

«Սուրբ խաչ յիշատակ է Շուշանին, Ակորչանին թվ. Ռժենէ (1678)։»

«Սուրբ խաչ յիշատակ է Առաքելին, կողակից՝ Աշապիսին և Տէր Ուկանին, հոգու հատոր Տէր Ստեփանոսին թվին Ռժենէ (1678)։»

«Սուրբ խաչ յիշատակ է Վարդանին քահանայէն թվին Ռժենէ (1683)։»

«Սուրբ խաչ յիշատակ է Վարդանին քահանայէն թվին Ռժենէ (1683)։»

«Սուրբ խաչ յիշատակ է Առումին... թվին Ռժենէ (1683)։»

Վիճակը՝ բավարար։ Գրուբյանը՝ երկնուն։ Տաղերը՝ միշին հաշվով 22.՝ Պիրը՝ գեղեցիկ բոլոր սիր։ Զարդագրույան՝ կան կիսախորաններ, խուլաններ, թոշնագրեր, լուսանցազարգություններ և շրս ավետարանիշների նկարներ, ոսկով և երփներանդ զուներով։ Մանրանկարչական մեծ արժեք ներկայանող ձեռագիր է։ Ժամանակը՝ ՌՀԶ (1627).՝ Գրիշը՝ Ստեփան արկազագ, Մաղլողը՝ Մկրտիչը՝ Վայրը՝ Հալեպ, Քաղաքուն մանկանց եկեղեցին

### ՃԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 82ա—բ.՝ Ճմեղապարտ գծող սարկաւագ Աստուածածատուրուր յիշեցէք ի Քրիստոս եւ մեղաց թողովին հայցեցէք, եւ դուր յիշիք

ի Քրիստոսէ, ամէնտ Գրեցաւ թվին ՌՀԶՋ (1627): Յիշեցէք զմահղեսի հայրն իմ՝ Կառապետն ի Քրիստոս:

Թ. 130ա. ներքին լուսանցքում, կարմիր մելանով, մանրագիր.—

Այս Հոկասու եզն ասացին,  
Որպես նա՝ իսկ հերկէ զգետին,  
Կրկին անխոնն վասն պտղին,  
Սոյնափէն երգարեն բանք սորին,  
Եւ անարժան ծաղկող սորին,  
Չձեղ աղաչէ ողորմագին,

Զի թողութիւն հայցել սմին

Ի ասել սրտիւ գոտէր ողորմին:

Թ. 206ա.—Այս Յովկաննէս արծուանման,  
Թռեաւ մոօքն անհասական,  
Առ ի պատմել որդոց մարդկան,  
Զանձառ էիցս հանրական,  
Եւ հս ծաղկողս անարժան,  
Որ եւ Մկրտիչ կոչեմ անուան,  
Զեղկելիս արէք լիշման արժան,  
Եւ ձեղ աւքնէն անմահ արքան:

Թ. 261ա—264ա.—Փառք անմահի... Որ յանդ հանել հիւծելոյս յանցանօք անպիտան եւ մեղաւոր գրշիմ՝ Աստուածատուր դպիրս, որոց աստուածամուս բանից գրել արժանի արար գիմս անարժանոթիւն, քանզի սկսեալ կատարեցի Աւետ անուն երանութիւնս, ի թվականի ՌՀԶՋ (1627), ի քաղաքն երերեայ, որ թարգմանեալ կոչի Հալապ, ի սուրբ երուաղենմայ Հոգոց տոնն, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածին եւ սուրբ Քառասունք եկեղեցեացս, որոյ շնորհօքն Աստուծոյ աւարտեցաւ եռահրաշ եւ հոգիազարդ սուրբ աւետարանս... Եւ յիշեալ զբանն Յիսուսի, զոր տայր ապացոյց զիսորհուրդ վերնոյն եւ զգործ հոգեւոր զառաջսն ակօսին և ըստորակայսն, եւ զմարմնաւորսն ի յետոյս առակէր, նա եւ խորհեալ զգիր հնոյ կտակին, որ ասէ՝ Երանի՝ որ ոնիցի դաւակ ի Սիրոն եւ ընտանեակ յերուաղէմ: Զայս ամենայն, այլով հանդերձ, ի խորհրդակիր սենեակն իւր կըրեալ վերոլիշեցեալ հավատարիմ ծառայն Քրիստոսի մահղասի Աղամիրին, հայրն իւր՝ Առաքեն, մայրն իւր՝ Սոլթանիքաշէն, լուսով լցուի իւրեանց հոգին: Եւս առաւել Ըսկէ, որ ամուսին է Աղամիրին, այլ եւ որդիք եւ զուսոր սորին՝ Պիտրոսն, ընդ Խոսրվիթուլիմին, Օղանգերաք ընդ Թագուհում, Եղիաքի ընդ Զաղային:

Սա յիշատակ անջնջելի,  
Բարի զաւակ հոգոց նոցին:  
Յորժամ որ գայ Տէրն երկնալին,  
Անճառ փառօք իւր հայրենին,  
Նատի յաթոռ դատաստանին,  
Աղոնել դիւան մարդկան ազգին:

Յայնժամ աշաւքն բաղրագին  
Նայի սիրով յանձն սոցին,  
Եւ բարբառովն աստուածային,  
Կոչէ ի վեր ընդ հաւտապետին:  
Եւ անարժան ծաղկող սորին,  
Յոյժ աղաչեմ գտէրն երկնալին,  
Վասն պատճառ լինողացն սուրբ  
աւետարանին,

Զի թողութիւն տացէ սոցին,  
Եւ զասացէ ընդ անմարմին:

Մանաւանդ պարտ է մեզ տրուա գրշիս  
յիշել եւ գրել, զի որք հանդիպին սուրբ աւետարանիս, յիշեն զհաւտարիմ բարէկամքն  
մեր, նախ՝ հայրն իմ Մովսէսն եւ երկրորդ՝  
հոգեւոր եղբայրքն իմ՝ Սովթանումն եւ Ապտուան, Պաղէրն եւ Շահվալին, զի զանարժանս հանապազ խնամաւք պահեցին ի մէջ պանդուխութեան մինչև ցայժմ, զոր եւ խնդրեմ ի ինձամակալ թագաւորէն խնամօք պահէ զնոսա մինչեւ ի ձերութիւն, ամէն:

#### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 128բ—129ա.—Ով զասք բահանալից, որք հանգիպիր սուրբ աւետարանիս, յիշեցէք զուրը Ստեփանոս և կենդեցու բահանալիքն, զի ի ծաղկել աւետարանիս հոգեւորապէս հանգուցին եւ սիրով խնամեցին զարուա Մկրտիչ գպիրս. Բանն Աստուած Որդին միաժամ հաստանէ ի ժամ արդար հատուցմանն եւ ընդ սուրբ բահանալիցն դասէ, ամէն:

Թ. 264ա.—Զիշեցին սուացող սուրբ աւետարանին զծէր Ստեփանոս և զծնողն իւր՝ զՄինասն եւ զծաֆարն, իւր՝ Առաքն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, եւ զկարապեան, զկիրական, զթարութիմն, զվաղամալն, եւ զրոյն Շաման յիշեցէր, եւ զկողակիցն Տէր Ստեփանոսի՝ զՓէրիանն, եւ զհանգուցեալ որդին, Սեսորոպն, Յեսային, գոտարն և անթուն: Այլ եւ զկենդանի իւր՝ զՄինասն, զոր Տէր Աստուած ընդ Երկայն աւուր պահեցէր: Տարձեալ յիշեցէր զպարեմիտ Տէր Ստեփանոսն եւ զծոգույրդին իւր զծէր Ոսկանն յիշեցէր ի Քրիստոս: Տարձեալ յիշեցէր զծէր Ստեփանոսն, որ ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրն: Եւ ով ոք որ համարձակի զուրը աւետարան: Վաճառել կամ գրաւել, ընդ Յուգայի եւ ընդ Աննալի ի հաւածանաւացն, ընդ Աննալի եւ ընդ Կայ(իս)ալի պատիմն առցէ ալժմուա մարմնովն եւ հանդերձեալն հոգովն ի հուրն գեհենին առցէ բաժին, եւ Տէր Ստեփանոսն մասն ի Քրիստոս առցէ ալժմ եւ յափտանն անգրաւ, ամէն: Հայր մեր...

Գարձեալ յիշեցէր զՓէրիանն եւ զծնողն իւր Մարտիրոսն, զՄարթիանն եւ զկզալըն Յոհանն, որ են հանգուցեալ ի Քրիստոս, եւ զկենդանի եղբարքն՝ Սարուանն, զկարախանն, Տէր Աստուած ընդ երկայն տուրո պահեցէր, ամէն:

Թ. 264բ.— Տարձեալ յիշեցէր Փարփիանն, որ հանդեաւ ի Քրիստոս թվին ՌՀԶՋ (1704):

№ 25  
ԱԼԵՏԱՐԱՆ

Թերեւը՝ 283:— Պակեներ՝ 24, յուրաքանչյուրը միջին հաշվով՝ 12 թերթից:— Մեծուրյանը՝  $16,5 \times 12,5 \times 6$ :— Նյուրը՝ գեղնավուն թուզի:— Կադը՝ կապուտ թավապատ տախտակ: Առաջին կազմի վրա թիթեղի տակ փակցված է կարմրագույն խոշոր ակ:— Վիճակը՝ բավարար (առաջին թերթի կես մասը պատոված է): Գրույրյանը՝ երկայուն:— Տողեր՝ 19:— Գծումներ՝ մնալումով:— Գիրը՝ բոլորգիր:— Զարդարույրյուն՝ ունի խորաններ, կիսախորաններ, ժաղկագրեր, կենդանագրեր, թունագրեր, լուսանցաղարդություններ և պահապահներ:— Վիշը՝ Պալուարը՝ Հակոբ Դպիր:— Չարեակը՝ Համանակը, Ռուսի (1664):

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 50թ.՝ Յիշեցիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զծաղկող սորա զթակոր դպի(ր)ս, զի եւ դուք յիշեցալ լիցիք, ամէն: Հայր մեր...

Թ. 283թ.՝ Փառք ամենասուրբ երրորդութեանն...

Արդ՝ սկիզբն եղեւ սուրբ աւետարանիս ի յերկիրն պարսից, ի քաղաքն Շօց, որ է Ասպահան, ի դուռն սուրբ Աստուածածնին, ի թվարերութեանս Հայ(յ)կազ(ե)ան տոհմիս Ռծծի (1664) ամի, ի հայրապետութեան Տեառն Յակոբալ սուրբ յաթոռոյն Էջմիածնայ: Վասն որոյ աղալեմ զամենեսեան զվայեօսդ և Հանդիպօսդ այսմ գորոց ի խնդրոյ բարեմբրու եւ Հեղաձոգի ուստա Պողոսին և կողակիցն Անախաթուն եւ Հոգոյշորդի Հապիթանն եւ Հազարվարդն, ամէն:

Դարձեալ յիշեցէք ուստա Պողոսն եւ ծնօղսն՝ Կիրակոսն, Եթարն:— Յիշեցէք եւ Կրկիրն անգամ յիշեցէք Պողոսն եւ Եղարքն՝ Պետրոսն, Տիլաքն եւ Հանգուցեալ Եղարյան՝ Խաչատուր, Քերքն՝ Սուրբին՝ Սուրբին, Շաղոսկին, յիշեցէք ի Քրիստո Աստուած:

## ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 3ա:— Ես Յամբարչս այս սուրբ աւետարանն առայ իմ Հայու վաստակոցս յիշայտակ իմ եւ իմ ծնօղսս որդին իմ Գյուղադին, որ է Աստուած Երկար ամօք պահեսցէ: Եր թիվն ԱՄՁԴ-ումն (1834) եղեւ վերջ: Եւ թուն իմ Վարթօմէ:

## № 26

## ԱԼԵՏԱՐԱՆ

Թերեւը՝ 256:— Պակեներ՝ 21, յուրաքանչյուրը 12 թերթից:— Մեծուրյանը՝  $20 \times 14,5 \times 7,5$ :— Նյուրը՝ գեղնած թուղթի:— Կազմը՝ կաշեպատ տախտակ: արծաթյա երկու բռնակներով: Երկու երեսները արծաթապատ, առաջինի կենտրոնով կա արծաթյա խաչ, յուրաքանչյուր թիվ վրա մի փոքրիկ ակ, իսկ կենտրոնում մի խոշոր կարմրագույն ակ: Առաջին երեսի վրա շղթաներով կախված են վեց փոքրիկ խաչեր խուն երեսի վրա փակցված են տասներկու հրեշտակների

ձուկածո նկաղներ: Երկրորդ երեսի կենտրոնում փակցված են մի խաչ և տասներկու հրեշտակների զլիքին:— Վիճակը՝ բավարար, սակայն վերջից պակասում է մի բանի թերթ:— Գրույրյանը՝ երկսյուն:— Տողեր՝ 21:— Գիրը՝ բոլորգիր:— Զարդարություն՝ շրու պահտարանիների նկարները, կան կենդանագրեր, թռունագրեր, մարդագրեր, լուսանցաղարդություններ և կիսափորաններ:— Ժամանակը՝ 16-րդ դար:— Պահպանակ՝ սկզբում երեք թերթ, իսկ վերջում՝ երկու

## ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 74ա:— Դարձեալ յիշեցէք զծէր Դափին եւ զկողիցն իւր՝ զթակաթն եւ գհարազադ որդին իւր՝ զծէր Պետրոսն եւ զկողակիցն զնաղիկն եւ զդուտուրն՝ Ազատմէլիքն, եւ զնանդուցեալ որդին՝ զՄէլրիսէին եւ զդուտուրն՝ զշասիկն, և զորդին իւր՝ զԱւետիբն եւ զներսէն եւ միւս որդին՝ զՊալոսն եւ կողակիցն՝ զՏաթլուն եւ զդորին՝ զՈվանէսն, եւ զդուտուրն՝ զՄարտին: Եւ նորընծայ գուստը, որ հանգաւցեալ են առ Քրիստոս: Եւ նորընծայ գուստը, զԱրդրիկն եւ միւս որդին՝ զՄարտիրոսն, եւ զկողակիցն զԿարդիսկին եւ զդուտուրն՝ զՄարիամն եւ զորդին՝ զԿարդիւան, եւ զմիւս որդին՝ զԳինոսաւար, զԵղագաշն եւ զդուտուրն՝ զԵղագաշն եւ զկուսին, որ հանգաւցալ լիցիք ի միւս անգամ գալուտեանն էրուս: Գրեցաւ սակաւ յիշատակ ի Ռին (1616) թվին հայվազեան տումարին, ձեռամբ՝ Զաքարյա վանեցոյ իրիցու:


Թ. 119թ.՝ Տէր Օհանի ձեռքով՝ ավետարանի կուտելու մասին Գիշնիկան գլուղում Ռիմճիթ (1813) թվին:

Թ. 120ա:— Զվերշին ստացաւզ նուրբ աւետարանին զծէր Մելրիսէին բահանայն եւ զորդին իւր՝ զծէր Դափին, զԿարդիւան եւ ամենայն մերձաւորացն, ամէն Արդ՝ ցանկացաւզ եղեւ սուրբ աւետարանին կոստղելն զծէր Մելրիսէին, կողակիցն իւր՝ զԿարդիւան, հարայզան որդին իւր՝ զծէր Դափին, կողակիցն իւր՝ զՊալուաթն, միւս որդին՝ զԿարդիւան, կողակիցն՝ Եղագաշն, զստելին իւր՝ Ազատմէլիքն, Խապիկն, Ազիզն, Սալիկն, Շնաւզն, իմազուն իւր՝ Հազարշէն, իւր կողակիցն՝ Ռւղաէն, Եղարան իմա՝ Աստուածատուրն, Պսկիկն, որ կարծարայ փոխեցան առ Քրիստոս Դաստերը իւր՝ Նուակար, Գուլմարիփար, Եղսիկն, իւր Հոգոյորդին՝ Ցովաննէսն, թուղթին իմ՝ զԵանգաշէն, Կարգիթուրն, Խաթունփաշէն, Ժոնիկն, իւր Հանգուցեալ որդին՝ Սէթն, Սիմէն, Սարգիս, Պետրոսն եւ այլ ամենայն մերձաւորացն, կենդանայն եւ ննջեցելոցն, ամէն ի Բավականին Ռի (1581), Գրեցաւ գիրու ձեռամբ անարժան ծագորդ եպիսկոպոսի, ամէն:

Թ. 255ա:— Ավետիք Գասպարյանի եւ Գ. Մելրոնյանի ձեռքով՝ ավետարանը Տէր Խաչատուր Տէր Անտոնյանին հանձնվելու վերաբերեալ, 1880 թ. որը հաստատում են իրենց կնիքներով:

Թ. 255թ.՝ Անտոնին որդին՝ Օհանի կողմէց՝ ուր նզովում է ձեռամբի տերսում աղավազում կատարողներին:

(Հարուեակելի)



## ՍՓՅՈՒՌ ԲՐՈՒՄ

### ԶԵՐՆԱԴՐՎԱԾ ՔԱՀԱՆԱՆԵՐՈՒ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայրապետին հեռագիրը, տրված Ամերիկայի Հայոց Առաջնորդարանին, որ բացառիկ թուլլություն կշնորհներ արդեն ձեռնադրված չորս եկեղեցականներու ամուսնանալուն, ներողամբու ու արդարասեր Հովհանների մը սրտին ու մտքին բխումն էր Որովհետև այդ երիտասարդ կղերականները կուսակրոնության ովաստ տված չէին և իրավացի պիտի ըլլար, որ մինչև իրենց կյանքերուն վախճանը քավեին հանցանք մը, — նախ քան ամուսնանալին ձեռնադրվիլ քահանա, — որ իրենք չէին գործած, այլ իրենց գերադաս պետո, Առաջնորդ Տիրան հպատակուու: Եվ Վեհափառ Կաթողիկոսը այդ սիսալն է որ կղարմանն մասնավոր արտօնությամբ մը, հհավատանք թե ամին տեսակետով գոհացոցիշ յուժումով մը:

Պայմանագ որ երբեք շմոռացվի անոր կցված իմաստում պատվերը՝ «ու յօրինակ այլոց», այսինքն, որ այլևս չփորձվի «կատարված իրողության» ճնշումով հարկադրել էցմիածինը, որ բացառիկ կարգադրություններ ընել ստիպվի, կամայական արարքի մը առաջացուցած հանրային խոռվքը չնշելու և կանոնական զանցառումները սրբագրելու համար Մենք հիմնապես հակառակ ենք կուսակրոնության, իրրեւ ժամանակավորեալ ու մասնավոր վնասակար դրություն և համոզված ենք, թե անոր բարձումով, Հայ Եկեղեցին ավելի արժանավոր հովիվներ պի-

տի կրնա գրավել իր ծառալութան մեջ և ներքին, բարոյական ու ոգեկան վերականգնումի ընդհանուր ցանկությունը իրագործել: Բայց օրենքներն ու ավանդությունները կարուիլ չերջել քմահաճորեն, այլ պետք է բարեփոխել ծրագրով և ամեն տեղ միաժամանակ գործադրությամբ:

Եթե ամեն առաջնորդական վիճակ ու հովվական թիմ բացառիկ պալմաններու չքմեղանքով հիմնական շեղումներ կատարե Հայ Եկեղեցի ծեսերեն, կանոններեն, հավատալիքներեն ու ավանդություններեն, հետեւվանքը այնպիսի քառության անհշանություն մը պիտի ըլլայ, որ պիտի կազմալուծե ու քանդե այդ դարավոր հաստատությունը: Կհասկնանք, թե Տիրան նպիսկոպոս մասնավոր պարագայ մը կդիմագրավեր այս հինգ ուսանողները իրրեւ եկեղեցական Ամերիկա պահելու խնդրին մեջ: Բայց այդ գժվարությունը հանկարծակի չծնավլ Ատիկա կնախատեսվեր առաջին օրեն: կնշակե թե բավարար ժամանակ կար սկզբեն կացությունը պարզելու Վեհափառ Հայրապետին և անոր մեօրինությունը խնդրելու, ինչ որ եղավ, բայց սիսալը գործվելեն հետո միայն: Այն ատեն բավական շփոթություն, վեց ու դառնություն պիտի խնայվեր ամերիկահայ գաղութին...

(«ՆՈՐ ՕՐ», 11 օգոստոսի, 1950 թ.):

### ՊՈԼՍՈ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՅԻ ԽՆԴԻՐԸ

Պոլսո «Ժամանակաը գրում է. —

Պետք չէ հուզվիլ ի տես ճշմարտությանց: «Մարմարա» ազատ է կարդաղուրի եկեղեցականները պաշտպանելու, բայց իրավունք չունի Մայր Աթոռը անարգելու:

Մինչ բովանդակ համայնքը հարգանք և հնագանդություն կսպասե հանդեպ Սահմանադրական օրենքին և հանդեպ էցմիածինի Մայր Աթոռին կողմէ հաստատված վճիրին, կարդաղուրի եկեղեցականները և կարգ մը թաղականություններ, ըստ իրենց սովորու-

թյան, սուս խուզ կծեփանան և կշարունակեն ուսնակոխել ամեն նվիրականություն, ամեն կարդ ու օրենք:

Դոկ մյուս կողմե, դարձլալ հրապարակ իշած են կարգազուրկներու պաշտպան փաստաբանները, որոնք Հայկազյան բառարանի նախատական բովանդակ բառամթերքը կպարպեն ժողովրդին հասցեին...

«Մարմարա»ի տերը՝ Սուրբն Շամլան, Հավատարիմ պատմական ատյանին առաջ իր կատարած հանդիսավոր հայտարարու-

թյան թե՛ իր նպատակն է Թյուրքիո Հայ ծկեղցին անջատել էջմիածնեն, այսօր ամեն շանք կթափ ի գլուխ հանելու համար իր այն հանդիսավոր հանձնառությունը:

Բայց մենք պարտք կզգանք հիշեցնել թե ոմարմարացի թափած այդ շանքերը ի զուր են և ժողովորդը կատարելապես հավատարիմ ու փարած կմնա իր մեծասպանը ծկեղցին բոլոր սրբություններուն և նվիրականություններուն:

Ժողովորդին անոնչով ճոճված նիզակներ և առածգական բացատրություններ շնորհնար ծածկել ճշմարտությունը...

1. Կհրամիւրենք Սուլեկի Շամլանը հրապարակով կոչ ուղղել կարգագործկ եկեղեցականներուն, հպատակելու Ամենայն Հայոց Հայրապետին որոշման:

## ՊՈԼՍՈ ԳԱՏԵԳՅՈՒՂԻ ԹԱՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵԼՈՒՅԹԸ ԲՈՒՐՆ ԶԱՅՐՈՒՅԹ ՊԱՏՃԱՌԱԾ Է ԱՄԵՆՈՒՐԵՔ

Գատըգյուղի հակաէջմիածնական թաղականությունը կիրակի տեղի տվավ ցավալի՝ միշաղեպի մը, զոր մեր պաշտոնակիցը՝ ռժամանակա իրավամբ որակեց երաշափառ խայատակություն:

Արդարեւ տեղի ունեցածը խայտառակութենե տարբեր ոչինչ էր և այսօր չկա ողջամիտ և խելքը գլուխը հայ մը, որ անսարդության սյունին գամենով շպահարակե եկութը այդ թաղականության, որ քաջագործություն մը համարած էր իրեն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետեն կարգալոյն հոչակված նախկին եկեղեցական մը՝ Շիվան Պախթիարողուն, պատարագի հրամիւրելու իր մատակարարած Ս. Թագավոր եկեղեցիին մեջ, ապամինելով ոստիկանական միշամբառության, ինչպես ցույց տված է իր հրավիրմամբ համազգեստավոր և քաղաքային բազմաթիվ ոստիկաններու ներկայությունը նոր տաճարին և եկեղեցվոլ շրջարակին մեջ:

Կթվի թե այդ թաղական խորհուրդը այն միամությունը ունեցած է թե հավատացյալ ժողովորդը իր կողքին կդտնվի ամբողջովին և պիտի շգտնվին ճշմարիտ հայեր, որ պիտի շընդգին ի տես կարդալոյն եկեղեցականի մը ձեռամբ կատարված պաշտամունքի մը հայ եկեղեցիի մը մեջ:

Դեպքերը եկած են ապացուցանել սակայն թե թաղականությունը կատարելապես սխալած է այդ միամիտ հավատքին մեջ, որովհետեւ նույն օրը եկեղեցին ուկտիի դացող ժողովորդին իր նվիրականություններուն և սրբություններուն հանդեպ նախանձախընդրություն ունեցող բարեպաշտներ երբ տե-

2. Որ իր թերթին միջոցավ շքաջալերե ընթացքը հիշյալ կարգագորկներուն և անոնց համախոհ թաղականությանց, որոնք ցուցի պատրազներ կատրեն:

Սուլեկի Շամլան այս երկու պայմանները գործադրելէ վերջ ազատ է ուղածին շափհալածանը և խաչակրություն կազմակերպելու ընդդեմ Արալանյան Սրբազնին, զայն վար առնելու համար տեղապահական պաշտոննեն: Անձերը կարելի է զոհել, բայց ոչ սկզբունքները նվիրականությունները և ճրմարտությունները: Այս է մեր տեսակետը, մնացալը մեզ չի հետաքրքրեր:

(«ՎԵՐԱԾՆՈՒԽՆԻ» օրարեւը, 30 սեպտեմբերի, 1950 թ.):

սած են, որ վերդիշյալ կարգալույթը ուղիղ կարգալույթի մը հետ միասնաբար արարողությանց կմասնակցի, չեն կրցած հանդուրժել այդ խայտառակության և դրդված իրենց բարեպաշտական դպացուներեն, խոյացած են անոնց վրա և սպուր կարգալույթներ եք, չեք կրնար եկեղեցական արարողությանց մասնակցին գոչելով ձեռնարկած են զանոնք դուրս հանելու Սուլը Տաճարեն:

Այս պայմաններուն տակ բնական է թե տակն ու վրայություն մը հառաջ եկած է եկեղեցվույն մեջ, արարողությունները ընդհատված են, կարգալույթները Ս. Տաճարեն դուրս հանելու ձեռնարկուներուն դեմ գրտնված են ուրիշներ, որոնք, ի պաշտպանություն կարգալույթներուն, իրենց կարգին անոնց գիմ խոյացած են, և այս թոհուուհին մեջ, թաղականության կողմեն հոն բերված ոստիկաններ ալ միշամտելով ձեծկվութին, ձերբակալած են կարգալույթ եկեղեցականները պաշտամունք կատարելե արգիլել ուղղ բարեպաշտներեն Տիգրան և Միսակ անոնք երկու ազգայիններ, որոնք պահականոց առաջնորդվելեն ետք ոստիկանական տնօրինություն տարված և հետո երաշխավորությամբ ազատ են:

Տիգրան և Միսակ ոստիկանության մոտ իրենց տված ժիֆատեսին մեջ հայտարարած են թե իրենք, իրը Հայ Եկեղեցվոլ զավակ, չեին կրնար հանդուրժել, որ եկեղեցական արարողություն մը կատարվի ոչ եկեղեցականի մը ձեռքով և այս էր պատճառը, որ իրենք ընդլզած կատարված շահատակության դեմ, ուղած են պաշտպանել Հայ

Եկեղեցվոյ նվիրականությունը: Ապելցուցած են նաև թե՝ եթե ամեն աշխարհական այդ կարգալույժներուն նման ելույթներ ունենար, ինչպես կարելի պիտի ըլլար պահպանել Եկեղեցվոյ օրենքներն ու կանոնները: Մեկ խոսքով, կիրակի օր Գատրգյուղի Ս. Թագավոր եկեղեցվույն մեջ պատահած այս ցավալի միջադիպը տեղի տված է ժո-

ղովրդային բուռն բողոքի մը տեղվույն թաղականության գիմ, որմեն, կտեղեկանանք թե կիրակի օրվան այս պատահարեն վերջ, հրաժարուներ եղած են, նշավակ շնանդիսանալու համար թաղեցիներուն ցասման և զայրուկթին:

(«ՆՈՐ ԼՈՒՐ», 12 սեպտեմբերի, 1950 թ.):

### ՔԱՐՈԶ Ս. ԷՇՄԻԱՇՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՏԵՂԱՊԱՀ Ս. ՀԱՅՐԸ ՍԱՄՄԱԹԻՌ Ս. ԳԵՂՐԴ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵԶ ԵՐԵԿ ԽՐ ԽՈՍԱՆ ՏՊԱՎՈՐԻ Ս. ԷՇՄԻԱՇՆԻ ԱՎԱԴ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՅԱՏՐԵՑ ՆԵՐԿԱ ԽՈՒՆԵՐԱՄ ՀԱՎԱՏԱՅՅԱԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Այս բազմահարյուր ժողովուրդը, որ վեցուցած էր երեկ Սամաթիր Ս. Գեղրդ եկեղեցին ժամանայական ձեռնադրության առթիվ՝ հոգեպարար վայելք մը ունեցավ՝ լիովին ըմբռոշինելու օժման հանդիսության բոլոր զբրկաժմերուն յուրաքանչյուրին նվիրական ներդրությունը, անթերի արարողապետությամբ ընծանացովի խարսավիլավը եղաղ Տ. Վահրամ Հոր, որ այս կրոնական համուշտության մեջ, օժանդակությամբ իր քահանա և եղանակը նեղացրներուն, աշ բազով կրոնականար ձեռնադրի Սրբազնին:

Արդարն կատարելապես անթերի և խիստ տպավորի եղավ նորապասկ Տ. Սարգիս քահանայի օժման հուշի արարողությունը՝ և ժողովրդան մեջ բազմաթիվ էին անոնք, որոնք չէին կրնար զապել իրենց յուրախության արցոնաները՝ երբ Տեղապահ Սրբազն Հոր մյուսնաթափի երգեցողությնեն վերջ՝ կօծվեին Ս. Մյուսնով նորննային ճակատն ու աշ և ահապէ ձեռքերը:

Երեկի կրոնական համուշտության առթիվ ալլապես նշանակալից էր ամբողջ առաջարին մեջ և եկեղեցին բակը խոնչված ժողովրդայան օրինակելի կարգապահությունը, որուն մեջ

պարծանքի իր բաժինը ուներ Սամաթիր աղջրնական Խորհուրդը:

Իսկ տպավորի քարոզ մըն էր զոր խոսեցավ այս քահանայալիքան ձեռնադրության առթիվ Տեղապահ: Սրբազն Հայրը, քնաքան առնելով իրեն. — «Քահանայալը կրկին պատույ արժանի լիցին որք աշխատեցին բանի և վարդապահությամբ» ու քահանայության և իրական քահանայության նշանակությունը բացատրելե, և նորընծային մասին աղ վստահություն հայտնելե ետքը թե պիտի հետեւ ճշմարիտ քահանաներու շավլին, անդրադապավ Հայ Եկեղեցվոյ գերագույն կեդրունին՝ էջմիածնի նվիրական նշանակության հայ ճշմարիտ քրիստոնեի համար: Հետո շարունակեց:

«Եվ դուն, ժողովուրդ Հայոց, զավակը այս մեծանուն Եկեղեցիին, կրնա՞ս մոռնալ այն սրբությունը և նվիրականությունը որ քովդ է և քեզի կուգա էջմիածնեն իր լույս մյուսոնովը, որոն ապացույցը պարզեցավ հիմա իսկ, անգամ մըն ալ, քո աշքերուտ առջև օծումովը քու նորընծայ քահանայիդ»:

(«ԺԱՄԱՆԱԿ» օրարեցը)

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՆ ՎԵՐՋ ՏՐՎԱԾ

Պուենոս-Այրեսի Ազգային Կեդրոնական Վարչական Խորհրդը, կաթողիկոսական պատվիրակ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատրյանի համաձանությամբ, որոշած է թեմին եկեղեցականներուն հատկացնել գործացուցիչ ամսաթոշակ, վերջ տալով անոնց անուղղակի եկամուտներուն, որոնք կգոյանան ավանդական սովորությամբ: Այսուհետեւ յուրաքանչյուր ծխատեր քահանա պիտի շարունակե թե՝ իր այցելությունները ծուխերուն և թե՝ պիտի կատարե տնօրհների պարտականությունները, առանց նյութական ակնկալաւության կամ պահանջի: Երբ ծովեմբը կողմեն կամավոր նվիրներ ըլլան բացի այն նվիրներն, որոնք կապ չունին հոգուր պարտականությանց կատարումին

հետ, պիտի հանձնեն Եկեղեցական Վարչության: Իրենց պաշտոնին մեջ զանցառու եկեղեցականները պատասխանատու պիտի ըլլան հոգուր իշխանության առջև:

Յուրաքանչյուր քահանայի որոշված է հատկացնել առնվազան 800 փեսո և համելվածական գումար մը, ընտանիքին անդամներուն թիվին համաձայն:

Այս գումարները պիտի ապահովվին Եկեղեցական տուգքք անունի տակ ժողովրդին գանձվելիք գումարներով:

Կրթական պաշտոնյաներուն նյութական վիճակն ալ բարվութելու համար, Վարչությունը կոչ ուղղած է համայնքին որ, եկեղեցական տուգքին հետ, սիրահոժար վճարեն նաև կրթական տուգքը:

## «ՎԵՐԱՇՆՈՒՆԴ» ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ», որ շուրջ 15 ամիսէ ի վեր հունիս 24-ին սկսյալ, առաջժմ՝ իրրև շաբաթադրած էր, սկսած է վերահրատարակվել հունիսի 24-ին սկսյալ, առաջժմ՝ իրրև շաբաթադրած էր, սկսած է վերահրատարակվել թարթերթ (12 էշ):  
 («Ա.ԲԵՎ», 21 օգոստոսի, 1950 թ.):

### ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱԼՈՒԹԸ

Հին, ժամանակներից ի վեր Կիպրոս քիչ հայ ազգաբնակչություն է ունեցել, 1909-ի Կիպրոսի պատուածներին հարյուրավոր փախուստական հայեր Կիպրոս են ապաստանել, բայց հետո իրենց երկիրն են վերադարձել: Կղզու հայ գաղղութը ստվարացել է 1921 թվական, երբ Կիլիկիան դատարկվել է, և 2000-ի է հասել գնդհանուր թիվը, բայց շատեր մեկնել են Սիրիա, Կիրանան, Հունաստան և այլուր: Հետևաբար դարձյակ նվազել է թիվը և իշել է 3800—1000-ի: Ըստ կառավարական մարդահամարին, հայրի թիվը 3600 է, բայց վերջին տարինքուամ Պաղեստինից բավական թվով նոր ընտանիքներ եկել ու հաստատվել են այս տեղ:

1931-ից ի վեր, Կիպրոսի հայերն ունեն իրենց թեմական ժողովը, որից բխում են բոլոր մյուս մարմինները: Առաջնորդանիւտ քաղաքն է Նիկոսիա: Թեմականից բխած միարշական մի ժողով, նշանակութիւն թալապան, փողիքութեարքի միջոցով կառավարուու է Նիկոսիայի, Լառնակայի, Լիմասոլի և Ֆամագուստայի միկողեցական գործերը, Նիկոսիայի գործությունները և Տապահության գործությունները: Նկոնդ է Տապահության:

1931-ից ի վեր, ազգային իշխանությունը միջամտուի շի վիճակը ազգային վարժարանների մաստակարարությունների մաստակարարությունների: Այդ միականին կառավարական մի օրենքը հարապարակվեց և հայ ազգային վարժարանների ղեկավարությունը հանձնվեց կուսակալի կողմից նշանակված հինգ հոգինուոց մի հոգաբարձության: Հոգաբարձությունն է, որ կազմուել է ուսումնական ծրագիրը, որի մեջ լայն տեղ է տրված հայերն ինքնին, Հայոց պատմության և կրոնական և եկեղեցական ուսումներին: Մինչև 1946 թիվը մի ընդհանուր ուսումնական վարում էր Կիպրոսի հայ

վարժարանները: Այժմ նիգոսիա և Լառնակա ունեն իրենց առանձին ուսումները: Նիգոսիայի հայ ազգային վարժարանը ունի մոտ 300 երկուու աշակերտ: Ուսուցչական մարմինը բաղկացած է 15 հոգուց:

Լառնակայի մեջ հայ վարժարանի հիմքը դումել է 1925-ին: Աշակերտների թիվը 150—180 էր մինչև երեք տարի առաջ: Այժմ այս թիվը իշել է 100-ի:

Լիմասոլի և Ֆամագուստայի մեջ ևս կան հայ վարժարաններ, որոնք հաստատված են 1927-ին: Յուրաքանչյուրն ունի մի ուսուցիչ և 20—25 աշակերտ:

Մեծգոնյան պրթավան Հաստատովթյունը հիմնված է 1925-ին: Այս տարի 25-ամյակն է:

Մելլոյնյան հաստատովթյունը մանշովառ կարևոր գեր է կատարուամ գաղութահայության մեջ իրենց երկրորդական (միջնակարգ, և ՍՊ.Բ.) վարժարան: Այս 25 տարվա միջոցին, Սիրիայից, Կիրանանից, Եգիպտոսից, Պաղեստինից, Պոլսից, Հունաստանից ու Բուլղարիայից մոտ 300 երկուու երիտասարդներ շրջանակարտ են եղել և իրենց երկրներն են միերադարձել:

Նիգոսիայի մեջ կան երեք միջություններ: Ամենահինգը Հայկական Ակումբն է, որ Հայ Ընթերցասիրաց Միություն անումուվ հիմնված է 1902 թվական:

1924-ին հիմնվեց Հայաստանի Բարեկամների Միությունը: Այս կարգմակերպությունը գերազանցեց ուրիշ միությունները իր անդամների շատությամբ: Անեղան իր գործունեության փայլուած շրջանը: Ուսի փողորդի փոմքը և գրադարանները բարեցարան: Կա նաև Հայուհյաց օժանդակ միությունը:

Կիպրոսի մեջ Հ. Բ. Բ. Միությունն ևս ունեցել է իր գործուն մասմածյուղերը:

(«Ա.ՊԱ.ԳԱ», 23 օգոստոսի 1950 թ.):



## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռագրառության (Մատենադարան), ԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, 1949 թ., № 2, Հայկական ՍՍՌ Գիտուրյունների ակադեմիայի հրատարակություն, Երևան,  
1950 թ., 208 էջ:

Պետական ձևագրատումը լուս է ընծայել «ԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ» երկրորդ համարը, ձևագրությամբ:

Ժողովածումը հոդվածները և ուսումնասիրություններ ունեն Պետական մատենագրարանի ձեռագրերի վրա աշխատող մի խումբ գիտաշխատողներ:

Ժողովածում սկսում է Տ. Ղազանչյանի «ՔիՄԽԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԸՆԻՒԹՅԱՆ ել ԱԿՐՈՐԱԾՈՐ ՏԵԽՆԻԿԱՆ ԲՍՏ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԵՐԱԴԱՐԵՐԻ» խորագիրը կրող հոդվածով (էջ 3—28), Հեղինակը, Զեռագրատան փաստական հարուստ նյութերի հիման վրա, աշխատում է պարզել՝ թե միջին գարերում Հայաստանի ալքիմիկուները ի՞նչպիսի լաբորատոր տեխնիկա և ի՞նչ լաբորատոր ապարատներ ունենան Հեղինակը գտնում է, որ արարական բիմիայից անկախ, հայերը և ունեցել են բիմիա, և գգակ են ոչ թե թանձրամիտ միստիկականության, այլ գործնական սպատակների: Հոդվածի ապագուցում է, որ «Միջնադարյան Հայաստանում եղել են հարուստ ալքիմիական լաբորատորիներ և այդ լաբորատորիները հագեցված են եղել առաջնակար բիմիական ապարատուրայով»: Փաստական նյութերի հիման վրա, հեղինակը թվում չ հայերին ծանոթ թիմիական գործողությունները և ապարատուրան, և պարզում թիմիական տեխնոլոգիայի հետ կապված այլ հարցեր:

Ականավոր ակնաբույժ պրեֆ. Բ. Ն. Միկի-Մուսյանը, իր «ԱՉՔԸ եկ ՆՐԱ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՆԵՐՎԸ ԲՍՏ ԽII—ԽV ԴԱՐՅԵՐԻ ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՐԱԴԱՐԵՐԻ» խորագրով ուսունքն հոդվածում (էջ 29—36), խոսում է ակնաբույժան մի կարևոր հարցի՝ տեսողական ներվի հաւը հայ բժշկության ունեցած ըմբռնուաների մասին: Ուսումնասիրներով Արուայիկի, Միկիթար Հերացու և Ամիրովլաթի տեսակետները, հեղինակը գալիս է այն եղանակացության, որ «Միկիթար Հերացու, Արուայիկի և Ամիրովլաթի պատկերացումները ունեն պատմական հետաքրքրություն»:

Թոքեան Արայանը, «ԵԱԶԵՐԻ ՍԻՄԵԾԻ ԾԱԳՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ» ուսումնասիրական մեջ (էջ 37—52), անդրադառնում է հայկական խազերը գաղտնիքը պարզելու ուղղության նորի և Կոմիտասի կատա-

րած շանքերին Հեղինակն այնուհետև, խազավոր ձեռագրերի ուսումնասիրության ասպարեզում վերըերս հայտնաբերված նորաւթյունների հիման վրա աշխատում է ճշտել խազերի կիրառության ժամանակը, մասսամբ և պարզաբանել նրանց ժաման ու զարգացման: Հանգամանքները: Հոդվածագիրը, հենվելով մի շարք ձեռագրերի և պատահիկների վրա, փորձում է հերեւել կիրակու Գանձակնցու հարևանցի մի հիշատակության վրա թաղաբացիություն ստացած այն կարծիքը, որ իր հաշատուր Տարոնացին է եղել, որ առաջին անգամ խազերը բերել է Արենի: Նա հայկական ձեռագրերի խազական սկանեմը համարում է տեղական և սերտ նմանություն է գտնում հայկական և վրացական միջնադարյան երաժշտական սիստեմների մեջ:

Ա. Գալիխյանը, իր «ԺԵԼԱՏԻՆԱՅԻՆ ԱՄՐԱՑՑՈՂ ՀՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՄԻ ՔԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԱՅԹԱՅՎԱԾ ԶԵՐԱԴԱՐԵՐԻ ՎԵՐԱՄԵՐԸ ԱԿՄԱՆ ԵՎ ՊԱՀ-ՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ» խորագիրը կրող հոդվածում (էջ 53—64), հենվելով լաբորատորական փորձարկությունների և իր կատարած բազմաթիվ փորձերի վրա, գտնում է, որ «Հնարավոր է և անհրաժեշտ ժելատինային ամրացնող լուծույթը կիրառել թալքարյած, բզկուլած ձեռագրերի ու ապագիր գրականության թերթին ու տիեզրաբեր ամրացնելու և նրանց կյանքը ըստ հնարավորին երկարացնելու» համարու:

Գամամական գիտությունների թեզնածու Լ. Խաչիկյանը, իր «ԶԵՆՈՒՆԻ ՅԱՂԱԳԻ ԲՆՈՒԹԵԱՆ» թրկի ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆ ԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ խորագրով հոդվածում (էջ 65—80), ուսումնասիրում է հայտափության ներ շրջանում հայտնի, բայց վեռ չհրատարակված հին հայկական տեքստը: (Այդ թարգմանության գոյության մասին առաջին տեղեկությունը հազորգի է պրոֆ. Մելքիսեդ-Բեկովն իր «Ե ԻСТОРИИ ТОЧНЫХ НАУК В АРМЕНИИ И ГРУЗИИ» մենագրության՝ մեջ 1930 թվին: Այնուհետեւ, նրա վրա կանգ է առել պրոֆ. Ա. Աբրահամյանը 1944 թվին իր «Երակացու մատենագրությունը» աշխատության մեջ, 26-րդ էջում):

Խաչիկյանը համեմատելով նշված թարգմանության ձեռագրի ընդունակությունները, գալիս է այն եղանակացության, որ նրանի ունեն երկու խմբագրություն՝ համարուս և ընդարձակ:

Հոդվածագիրը բննում է նաև այն հարցը, թե հոգի մատնագրության մեջ հայտնի ությ Զենոններից որի՞ աշխատությունը պիտի համարել նշված տեքստը և գալիս այն հավանական եղբակացության, որ այդ ստորինական դպրոցի հիմնադիր Զենոնի տեքստն է: Համատական պարզաբանումը թողնելով՝ հարցի վերջնական պարզաբանումը թողնելով՝ փիլիսոփայության պատմության մասնագետներին, — գործ է նա, — անհավանական չենք համարում, որ հրատարակվող թագիրը ստորինական դպրոցի հիմնադիր, Մենազոսի որդի Զենոնի, հունարենով մեջ հասած «ՊԵՐԼ ՓՈՏՅՈՎ» աշխատության է» (էջ 71):

Հոդվածագիրն այսուհետև համեմատում է նշված տեքստի մեջ գործ ածված անձնագիր տերմինների և ունի հարցերը հին հայկական այլ թարգմանությունների մեջ գործ ածված տերմինների ու ոճի հետ և ենթադրում, որ «Յաղագս բնութեան» աշխատությունը թարգմանված պետք է լինի թարգմանական դպրոցի երկրորդ շրջանում կատարված թարգմանություններից առնվազն մի քանի տասնամյակ հետո» (էջ 75), այսինքն VII դարում:

Խաչիկյանը իր հոդվածի վերջում կանգ է առնում նաև «Յաղագս բնութեան» երկի տեքստի ազդեցության խնդրի վրա միջնադարյան հայ փիլիսոփայական միտքի վրա և գտնում է, որ այդ ամբան էլ խոշոր չի եղել, հեղինակի կարծիքով այդ աշխատությունը ուշադրության առարկա է սկսել դառնալ միայն XIII—XIV դարերում, եթե և արտագրվել է:

Ժողովածուի Ծ1—98 էջերում, Խաչիկյանը տա-

լիս է ձեռագրերի համեմատությամբ կազմված նշված երկի համահավաք բնագիրը:

Աս. Մեացականյանը, իր «ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԽՆՉԻՉ ԳՈՐԾՈՑ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ՊԻԵՍԻ ՄԱՍԻՆ» հոդվածում բնուկթյան է առնում Գալուստ Երմաղանյանի ցարդ կորած նկատված և իր կողմից Զեռագրատան մեջ հայտնաբերված կոմեդիան, որը պարունակում է տվյալ ժամանակաշրջանի ազգային և կեղեցական անցքերի, մողովդական բարերի, սոցիալական բլրունաւների մասին հետաքրքր մանրամասնություններ Պիեսի վերցում տրված են «Ճանապարհորդություններ», «ցանկ հատուկ անունների» և «բառարան»:

Ան. Մեացականյանը իր երկրորդ հոդվածում՝ «ԱՆՑԻԹ Էջեր ՄԻՋՆԱԴՆԱՐՁԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻՒՅ» վերնագրով, բաղելով Զեռագրատան գրչագրերից, տպագրել է XVIII—XIX դարերի մի քանի աշուղների անտիպ բանասանելությունները:

Հոդվածների վերջում տրված են նյութերի համարուսագրությունները ուսուերեն, ինչ որ զորացնում է «Ժողովածուշի գտագործումը՝ Միությունական և օտար բանասերների կողմից»:

Հայկական ՍՍՌ Մատենադարսնի նկրկա ժողովածուն կարևոր ներդրում է հանդիսանում հայագիտության մեջ, նա նոր և արժեքավոր նյութեր է մատուցում հայոց պատմությամբ և հայ գրականության պատմությամբ որադիպող մեր մասնագետներին:



## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սունդովյան Գարբիել, Պետո, կատակերպություն Յ արարուլ, (ծննդյան 125-ամյակի առթիվ), Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 163 էջ, իլուստրացիաներով, տիրած 4,000:

Հայկ. ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Հասարակական գիտությունների Տեղեկագիր, № 6, հրատարակություն Հայկ. ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, Երևան, 1950 թ., 102 էջ, տիրած 1,000:

Հայկ. ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ֆիզիկո-Մաթեմատիկական, Բնական և Տեխնիկական գիտությունների Տեղեկագիր, հատոր 3-րդ, № 1, հրատարակություն Հայկ. ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, Երևան, 1950 թ., 118 էջ, տիրած 500:

Հայ գյուղագիրներ (Ագապյան Ա., Աղելյան Ա., Ճուղության Հ., Շահնազարյան Ա., Մամիկոնյան Ն., Մալխասյան Հ., Սանդալ, Մելիք-Շահնազարյան Ս., Աբովյան Ան. և Զավալիսիցի): Կազմեց և կենսագրականները գրեց՝ Արմ. Բամազյան: Հայպետհրատի, ՀՀԿԵՄ Կենտրոնի կող Մանկա-պատանեկական գրականության բաժին, Երևան, 1950 թ., 575 էջ, տիրած 5,000:

Խար-Դոս, Երկերի լիակատար ժողովածու, 7-րդ հատոր. Մեր թաղոր, Զանագան պատմվածքներ, նոր մարդու Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 342 էջ, տիրած 5,000:

Խոր-Ալյր, Լուսեր, վեպ, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 298 էջ, տիրած 5,000:

Խանգաղյան Սերո, Մեր մոնդի մարդիկ, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 550 էջ, տիրած 5,000:

Պետրոսյան Անդրանիկ, Շիրվան, վեպ, Բագրու, Աղերնեշը, 1950 թ., 286 էջ, տիրած 3,000:

Աղելյան Ա., Երկերի ժողովածու, մեկ հատորով, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 526 էջ, տիրած 5,000:

Գի դր Մովսասան, Ընտիր Երկեր, Կազմեց և իմբագրեց Ա. Պալարատ, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 690 էջ, տիրած 10,000:

Խանեկալյան Ավետիք, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, Բանաստեղծություններ, Հայ-

պետհրատ, Երևան, 1950 թ., 380 էջ, տիրած 5,000:

Տերյան Վահան, Երկերի ժողովածու, 2 հատորով, Խմբագություն Էդ. Թոփչյանի, Վ. Պարտիզունու, Հ. Ղանալանյանի, հատոր 1-ին, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 494 էջ, տիրած 5,000:

Քոչար Հրաչյա, Բարեկամովթյուն (Պատմվածքներ), Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 502 էջ, տիրած 5,000:

Մայակովսկի Վ. Վ., Ընտիր Երկեր, հատոր 1-ին, Ես ինքս, Բանաստեղծություններ, Պոեմներ, Կազմեց և իմբագրեց Հրաչյա Գրիգորյան: Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 558 էջ, տիրած 4,000:

Եղիբյան Վ., Ժողովածու գեղարվեստական նյութերի, 5—10 դասարանների գրուստությունների համար, Կազմեցին Վ. Եղիբյան և Արմ. Վարդապետյան: Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 242 էջ, տիրած 3,000:

Տուրգենև Ի., Ընտիր Երկեր, 4-րդ հատոր, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 555 էջ, տիրած 4,000:

Անոնչյան Գուրգեն, Հայ և Աղրբեշանական ժողովուրդների բարեկամովթյան պրասցովածք 19—20 դարերի գրականության մեջ, Բարու, Աղերնեշը, 1950 թ., 211 էջ, տիրած 3,000:

Արագի, Հայմական ծիլեր, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 204 էջ, տիրած 5,000:

Սիմոնով Կոնստանտինին, Բարեկամներ և թշնամիներ (Բանաստեղծություններ), Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 57 էջ, տիրած 4,000:

Մարմեն, Յոթ երջանիներ (Մանկական ուսանավորներ), Ակարնենը՝ Գ. Խանջյանի: Հայպետհրատի ՀՀԿԵՄ Կենտրոնի կող Մանկա-պատանեկան գրականության բաժին, Երևան, 1950 թ., 55 էջ, տիրած 6,000:

Գոգոյ Ն. Վ., Մեռած հոգիներ, պոեմ, 1-ին և 2-րդ հատոր: 1-ին հատորի թարգմ. Գ. Դեմիրճյանի, 2-ինը՝ Ա. Փալանչյանի: Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 476 էջ, տիրած 5,000:

Շեխապիր, Տեմոն Աթենացի, Ողբերգություն 5 արարվածով, բնագրից թարգմ. Խ. Դաշտենց, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 150 էջ, տիրած 5,000:

